

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ., ՊԱՏՄԱԳԻՐՔԻ Բ. ՄԱՍԻ
ՄԱՄՈՒԼԻ ԷԶԵՐՈՒՆ ՎՐԱՅ

1. — ԿԻՐՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

14 Օգոստոս 1871

Կիւրրին 1000 տունէն աւելի Հայ ընտանիք կայ, ջերմեռանդ ու միանդամայն խնամակրօն եւ վրէթէ բոլորն ալ վաճառականական գործով կը զբաղին, մեծ մասամբ հարուստ դրամատէրներ են, եւ Փոքր Ասիոյ բոլոր գլխաւոր քաղաքաց մէջ վաճառականութեամբ կը պարապին:

Կիւրրին կայ 3 եկեղեցի ու 3 դպրոց եւ 600էն աւելի աշակերտք կը դաստիարակուին յիշեալ վարժարանաց մէջ, բայց ի՞նչ դաստիարակութիւն...:

Տեսնենք թէ իրենց կրօնասիրութեան եւ ազգասիրութեան համապատասխանող դաստիարակութիւն մ'է տրուածը, կամ թէ իրենց հարստութեան համապատասխանող կրթութիւն ու ուսմունք է իրենց զաւակաց աւանդուած ուսմունք ըսուածը. ոչ երբեք. որովհետեւ տեղւոյն դպրոցի այժմեան վիճակը յետին աստիճան անբարեկարգ եւ ամենախեղճ է ուսման մասին, որովհետեւ ամենէն բարձր ուսմունքը քերականութիւնն է եղեր, եւ անոր ալ լաւ հոգ չէ տարուած. կը ցաւիմք որ տասն տարիներէ հետէ յիշեալ դպրոցները կը շարունակուին առանց պտուղ մը տեսնուելու, մանաւանդ թէ... մեծագումար ու ժրաջան ընկերութիւն մըն ալ հաստատուած է դպրոցաց յառաջդիմութեան նիւթապէս օգնելու համար, որոյ դրամագլուխը Հալէպ գտնուող Կիւրրիցի երեւելի վաճառականաց շնորհիւ օրըստօրէ կը բազմապատկի, բայց ի՞նչ սուտ որ տակաւին իւր նպատակին չէ ծառայած ու արդիւնաւորած. կ'երեւի թէ առաջին եւ մեծ պատճառը ռամիկ հասարակութեան խոր ազիտութիւնն է, որ Կիւրրին մինչեւ ցարդ այս դատապարտելի ընթացից մէջ կը շարունակուի...:

Կը յուսամք որ մեր ամենասիրելի Կիւրրնաբնակ ազգայինք, այս սեւ նախատինքը իրենց ճակտէն վար կ'առնեն եւ ապագայ պատասխանատուութենէն ազատ կը մնան անմիջապէս անհրաժեշտ եղած պարտքը կատարելով... աշխատիլ դպրոցաց բարեկարգութեանց. որպէսզի Կիւրրին ալ դարձոյս ողւոյն համապատասխանող անհատներ պատրաստէ Հայրենեաց համար:

Կր վաժառքիմք ո՛չ միայն արական սեռի դաստիարակութեան՝ այլեւ իգական սեռին կրթութեան համար ալ դպրոցներ բացուին ու մայրաքաղաքէս դաստիարակներ տարուին. որովհետեւ այժմ զգալի եւ ամենակարեւոր համարուած է աղջկանց դաստիարակութիւնը, մանաւանդ Կիւրրինի համար, որ անհրաժեշտ է:

Չեմք յուսար թէ՛ այս քանի մը տողերը Կիւրրնայ ազգայնոց ուշադրութենէն վրիպի եւ ապարդիւն մնայ. այլ ինչպէս որ կը յուսամք քիչ ատենէն բերկրութեամբ սրտի ի պարծանս օւսումնասիրաց երկսեռ վարժարանաց բարեկարգ դպրոցաց հրատարակութիւնը պիտի ընենք իրենց բարբրարներովն ու ձեռնտուններովն հանդերձ:

«ՀԱՅՐԵՆԻՔ», ԲԻԼ 62, 1871, Պոլիս

Գիտութիւնը աշխարհի տարրն է . չկայ բան մը որ առանց անոր կատարելութեան հասնի . աշխարհի մէջ որ կողմը նայիս՝ իմաստութեան արտադրութիւնները կ'ազդակեն թէ, մենք ալ հանճարոյ ծնունդն եմք . հանճարոյ յարզն ու պատիւը ժամանակը ծնանի . ժամանակը խթան մ'է մարդոց , որ իրենց տաղանդը անեցնեն եւ հանճարոյն ուժը կրկնապատկեն , այս է աստուածային վճիռն եւ մարդկութեան դասակնիքը . մարդ մը՝ որ աստուածային վճռոյ ու մարդկութեան արդի սկզբանց չի հնազանդիր , անիկա օրինազանց է եւ հետեւաբար Աստուծոյ վճիռը եղծանող : Փառք Արարչին , հայն ալ տասնեւիններորդ դարու յառաջդիմութեան՝ որ հանճարը կը զօրացնէ՝ բնօրջակին տակ հետզհետէ կը զինուորի . այս մասին երկար դիտողութիւններու հարկ չկայ :

Ամէն տեղ եւ ամենուրեք յառաջդիմութեան գեղեցիկ բարոյական տաճարներ կը շինուին , որպէսզի հայութիւնն ալ արդի մարդկութեան հետ վերանորոգի : Քիչ ատենիս մէջ շատ քաղաքներ եւ իսկ դիւղաքաղաքներ յառաջդիմութեան ջանքեր կ'ըլլան , որոնց հետ քանի մը ատենէ ասդին Մանճըլըզի վիճակի Կիւրին դիւղաքաղաքի հայկազունք ալ մեծ շարժման մէջ են , եւ արդէն ութ տարի յառաջ ազդային դաստիարակութեան համար հինգ հարիւր լիրայէն աւելի դրամադրուի մը հաւաքած Հայէսի մէջ վաճառականութեամբ կ'անեցնեն , եւ հիմակ իրենց մէջ նոր ընկերութիւն մը կազմելով դպրոցի համար հանդանակութիւնն եւս բացեր են , մէկէն երեք հարիւր լիրայի հասոյթ մը դոյացեր է , որուն սպացոյց Կակոսեան Մեծ . Մանուկ պատուելին՝ որ ութ տարիէ բացակայ կը գտնուէր՝ դասատու կարգած են Չախճուր թաղի Սուրբ Փրկչեան վարժարանը . դոհութեան արժանի է նաեւ այս դասատուն , որ ամէն օր դպրոց աշխատելէն զատ Կիրակի օրերն ալ դպրոցը բանալով , Աւետարանի , ազգութեան , եւ յառաջդիմութեան վրայ ատենախօսութիւններ կը շարունակէ եղեր , ազգային երիտասարդութեան հանճարը լուսաւորելու համար : Կը դրէ մեզի Մանուկ պատուելին եւ մասնաւորապէս շնորհակալ կ'ըլլայ ընկերութեան դործադիր անդամներէն , որք են , Կայծակ Սրապեան , Մանուկ Մառուկեան , Կարապետ Վարդապետեան ազգասէր ազաները , որոնց հետ քահանայ մ'ալ , եւ կը յուսայ , որ քիչ օրէն յիշեալ ընկերութեան ազգասէր ջանքը կարող պիտի ըլլայ շատ ազդօղուտ պտուղներ յառաջ բերել : Արդ՝ իմբագիր , կը խնդրեմ , որ բարեհաճիք սոյն երկտողիս ձեր պատուական թերթերէն մէկուն մէջ խորշիկ մը շնորհել , ի լուր սիրելի ազգայնոցս եւ ի խրախոյս յիշեալ Կիւրինաբնակ Հայոց , որոյ համար մնամ Երախտապարտ Ձերդ ազգասիրութեան :

«ՄԱՍԻՍ» քիւ 1373 , 1873 , Պոլիս ՎԱՐԴԱՆ ԱԲԳԱՐԵԱՆ

3.— Կիւրիմէն նամակ մը «Աւետարեք» 9-5-1876

Կիւրին 2.475 տունէ բաղկացեալ քաղաք է , եւ բնակչաց մեծագոյն մասն , այսինքն 1,500 տունը , Հայ է , 700 տունը Մահմետական , 50 տունը Հռոմէական Հայ , 25 տունը Բողոքական Հայ է : Կիւրինի մէջ քանի մը տարիէ ի վեր յառաջդիմական շարժումներ կ'ըլլան , եւ ապագայ լուսաւորութեան նշոյլներ կը տեսնուին : Հոս կայ Վահանեան անուն ընկերութիւն մը , որոյ անդամք մեծ ջանք կ'ընեն զիշերթիկ ուսումնարան մը բանալու , եւ այս

չպատահաւ պարտէզ մը ծախու առած են Սասպաղ կոչուած թաղին մէջ: Սասպաղ տեղւոյ Մահմետականք արգելք կը յարուցանեն ուսումնարանին շինութեան: Նոր բացուելու զիշերոթիկ ուսումնարանը պիտի կոչուի Ղեւոնդ-հանց վարժարան:

Սասպաղ թաղին մէջ բացուած է նաեւ Լուսաւորչեան անուն թանգարանը, որ ունի 45 անդամ: Թանգարանին մէջ ոչ միայն լրագիր կը կարդան այլեւ ուսմունք կը սորվին: Թանգարանի դպրոցին դասատուն է Յակոբ վարժապետ Ժամկոչեան, եւ աշակերտաց թիւն է 65: Ցաւ է ինձ ըսել թէ թանգարանի անդամոց մէջտեղ անհամաձայնութիւն ծագած է: Իցիւ թէ տարբեր կողմանք ի սէր աղբիւն հաւանելին ընդունիլ նախագահին առաջարկութիւնները եւ շարունակել այն բարենպաստ կործը, որ ապագային մէջ շատ օգուտ յառաջ պիտի բերէ:

Քաղաքիս Զախձոր թաղին մէջ ալ աղջկանց վարժարան բացուած է, ուր աշակերտուհիք կը դաստիարակուին վարժուհւոյ մը խնամոց ներքեւ: Աղջկանց դաստիարակութեան մեծ կարեւորութիւնը թէպէտ ուշ, բայց աղէկ ճանցչուած է: Առանց բարեկիրթ մայրերու հնար չէ բարեկիրթ ընտանիք կազմել:

Կիւրինի մէջ կան նաեւ քանի մը ցաւալի պակասութիւններ որ արգելք կ'ըլլան բարեկարգութեան եւ յառաջդիմութեան: Սէրն, որ ամէն բարեաց մայր է, իր թաղաւորութիւնը դեռ ըստ արժանւոյն հաստատած չէ մեր հայրենակցաց սրտերուն մէջ, ատելութեան չար ողին երբեմն կը յանդգնի քանդել ինչ որ սէրը կը հաստատէ. կուսակցութիւնը, որ զօրաւոր աղբերն իսկ տկարացուցած եւ կործանած է, մեր մէջ ալ կուտորած կ'ընէ: Կը մաղթենք Աստուծոյ, որ սիրոյ եւ եղբայրութեան հուրն արծարծէ մեր բոլոր հայրենակցաց սրտերուն մէջ, եւ արմատէն խլէ ատելութեան եւ երկպառակութեան չար ողին, որ բարի խորհրդոց եւ ձեռնարկութեանց յաջողութեան արգելք կ'ըլլայ:

Կիւրին, 28 Փետր. 1876

Տ. ՍԱՐԳԻՍ Ա. ՄԻՆԱՍԵԱՆ

Բ.

Այս տարիներս Կիւրինի մէջ յառաջդիմական շարժումներ կը տեսնուին, եւ կը յուսացուի թէ Տէրօջը դործը հոս յառաջ պիտի երթայ: Այս տարուան Հայերէն «ԱՌԵՏԱՖԵՐ»ին 19 թուոյն մէջ հրատարակուած նամակի մէ մէջ սխալմամբ ըսուած էր թէ Կիւրինի Հայ Բողոքականաց թիւը 25 տուն է: Կիւրինի մէջ հիմա 75 տունէ բաղկացեալ Հայ Բողոքական Ժողովուրդ մը կայ, որ ունի Ժողովարան մը Շուղու կոչուած թաղին մէջ, եւ երեք հատ ալ դպրոց, որոնցմէ մէկն աղջկանց դպրոց է: Երեք դպրոցաց աշակերտաց թիւը 130ի կը հասնի: Տեղւոյս Ժողովարանը այրուեցաւ, բայց յոյս ունինք որ նորէն պիտի շինուի:

Կը խնդրենք «ԱՌԵՏԱՖԵՐ»ի ընթերցողներէն աղօթել որ Աստուած իր Սուրբ Հոգին թափէ բոլոր աշխարհի վրայ որպէսզի ի դերեւ հանուին աստանային շարահնար որոգայթներն եւ Քրիստոսի դործի ամէն տեղ անարգել յառաջ երթայ:

Կիւրին, 10 Յուլիս 1876

ՄԿՐՏԻՉ ՄԻՆԱՍԵԱՆ

Ներկայ թուականէս մէկ ու կէս տարիի չափ առաջ Չախճոր թաղի Ս. Փրկչայ եկեղեցւոյն մէջ աղջկանց դպրոց մը բացուեցաւ, չգիտեմ թէ ի՞նչ պէս եղած էր եւ ի՞նչ զգացմամբ. որուն մէջ 60ի չափ մատաղ օրիորդներ դաստիարակուիլ սկսան եւ հազիւ թէ 6 ամիս տեւեց, դպրոցէն դուրս հասարակ ընթերցման տէր օրիորդ մը ազատապէս, «ես այս ինչ անձը կ'առնեմ» ըսելուն պատճառաւ դպրոցը դոցեցին աղաները, ըսելով թէ երիտասարդ մը տեղա կամ օրիորդ մը նշանուելու ըլլայ երիտասարդին առնելու աղջիկը տըղուն հայրը կամ մայրը պիտի ընտրեն եւ նոքա պիտի հաւնին, չէ թէ երիտասարդը. նոյնպէս եւ աղջկան հայրը կամ մայրը... (1): «Վա՛յ վարժարանը ելած ալայը (2) ախճիներն ալ հետէս (3) պիտ ըլլան... մեր ախճիներուն կարգաւ դրել պէտքը չէ, մեզի կարգացող աղջիկ եարամիչ (4) չ'ըլլար»: Եւ ահա տարիէն աւելի է որ դոցուեցաւ եւ ա՛լ բացուելիք չունի ներկայ ընթացքին նայելով: Ո՛հ, դժբախտ վիճակ, ցաւալի խնդիր, անդա՛յ ազգ, յետ յետ ո՛ւր, միթէ մինչեւ անդո՞ւնդ պիտի երթաս, եւ պիտի չարթննաս... ոհ, այո՛, ամէն անհատ անտարբեր կեցած է եւ դեռ չճանչցաւ իրական սեռի դաստիարակութեան արական սեռէ աւելի պէտք ըլլալը: Լրագիրը՝ որ ազգի մը համար ամենաօգտակար բան մըն է, տեղւոյս ամենաերեւելի մեծատունները անգամ անձնականուն յատուկ լրագիր մը չունին, եւ չեն ալ բերել տար: Լրագիրը եկած օրը, ամէն աղա ծառան թաղ թաղ կը պտըտցնէ թէ (այսինչէն կամ այնինչէն լրագիրը բեր կարդանք) եւ ծառան աստեղ անտեղ պիտի պտըտի լրագիր հայցնելով: Խասպաղ թաղի Լուսաւորչեան թանգարանի ընկերութիւնը, որ «Աւետարներ» բերել կու տայ, եկած օրը դեռ ատենապետը կամ անդամները չկարգացած դուռը կը լեցուին, թէ այսինչ կամ այնինչ աղան բարեւ կ'ընէ, «Աւետարներ»ը կ'ուզէ կոր, կարգայ ետ դրկէ պիտի... Ընկերութեանը ստակ մ'ալ չեն տուած:

Տէր խմբագիր, փողոցներ պտտած ատեն կը տեսնես շատ մը տղայքներ, որ խումբ խումբ կը պտտին եւ իրենց անգին ժամանակները խաղերով կ'անցընեն որոնց կրթուելովը ազգին ապագան պիտի բարւոքուի. ո՛հ, սոսկում կը պատճառէ այս կէտերը մի ըստ միովէ գրել, հապա Կիւրիսի չորպաճիութեան խումբ կազմող ազգասէր աղայից ուշադրութեանը կը յանձնեմ, որ դպրոցներուն հոգ տանելով խնայեն անթիւ մատաղ մանկանց կորուսած ժամանակին, ինչու որ «անցեալը ձեռք չ'անցնիր»:

Մեծ. Մ. Կ. Գուլումճեան էֆէնտիի ուշադրութիւնը կը հրաւիրեմ քաղաքի մը այս վիճակը ունեցող ազգայնոց վրայ:

Այո՛, ամէն քաղաքակրթեալ ազգ այնքան ստակ կը վատնէ որպէսզի իրենց դպրոցները բարեկարգ վիճակի մը մէջ գտնուին: Բայց մեր տղայք կ'աշխատին իրենց յամառ կարծիքը իրաւացնելու: Մնամ...

«Հայրենիք» թիւ 353, Պոլիս, 1877 Մ. ՍԱՐԳԻՍ Ա. ՄԻՆԱՍԵԱՆ

Բ.

Կիւրիսէն մեզ դրկուած հետեւեալ նամակը տեղւոյն ազգայնոց ընտա-

(1) Տեղւոյս Աշտուկէ սկսեալ մինչեւ տուսնամայն ի՞նչ վիճակ, ի՞նչ կանոն ունեւալ կը խոստամամ յաջորդ նամակաւ տեղեկութիւն տալ: (2) Ալայը՝ բոլոր: (3) Հիտէս՝ սասնի, այսպէս: (4) Եարամիչ՝ պէտքակամ:

Յեկան կեանքին վրայ տեղեկութիւններ եւ դիտողութիւններ կը ստանանակէ :

... խմբադիր «Հայրենիք» պատուական լրագրոյ :

Ձեր պատուական լրագրոյ 333 թուոյն մէջ Մայիս 28 թիւ յօդուածովս խոստացած ըլլալով տեղւոյս նշանուելէ սկսեալ մինչեւ ցամառանութիւն որ-պի՛տի վիճակ եւ ի՛նչ սովորութիւն ունենալը մի առ մի գրել, ահաւասիկ ներկայիս կը նկարագրեմ դիտողութեան արժանի կէտերը. խնդրելով յարգոյ ընթերցողներէն, որ աւելի զգացմունքս շօշափեն, ոչ թէ գրիչս (1) որ թէպէտ տկար, բայց եւ այնպէս անհամբեր է :

Տեղս մանչ մը 12-13 տարեկան հասակին մէջ կը նշանեն, առանց տղին հարցնելու եւ նորա հաճութիւնը ստանալու, ինչպէս օրիորդինը : Ենթադրենք խի թէ կը հարցնեն, ամէն ոք դիտէ, որ նոյն հասակին մէջ տղան չի կրնար ուղիղ դատողութիւն կամ ընտրութիւն ընել. վերջապէս ծնողք բացարձակապէս կ'ընտրեն զհարսնացուն չնայելով հեղահամբոյր, համեստուհին եւ ազնււսիրտը (չըսեմ թէ կրթեալ, զի կիւրինի մէջ կրթեալ օրիորդ փնտռելը Յիսուսի թղենիէն պտուղ յուսալն է) այլ մեծուհին եւ դեղեցիկը, հերիք է որքան զպատանին մեծ եւ տարեւոր ըլլայ, ու իրենց սպասաւորէ ե՛րբ հարս ըլլայ. ուստի անկարելի է դիտնալ թէ (իրենց աղախին թէ մանչին հարս կը փնտռեն). ուստի անմիջապէս կը սկսին երկու կողմանէ երթեւեկութիւններ ընել, հրաւէրք, շուսյութիւնք, հոգ չէ, թէ նիւթականներն չի ներեր, զի տուտով ստակ պատրաստ է, մանաւանդ պատանոյ տնէն. ինչու որ հարսընցունն օսկիով շատ մը մասնաւոր այցելութիւններ ընելէ վերջ, ծնողք ընդհանուր կերպով նախ հայրը բարեկամներով, դրացիներով, եւ ազգականներով կ'այցելէ օսկիով, եւ ապա մայրը բարեկամուհիներով, ազգականուհիներով, ո՛վ որ կ'ուզէ ըլլայ, անշուշտ օսկի մը նուէր պիտի տանին, զորս հարսնացուն ճակատը, լանջը կամ վիզը պիտի կախէ եւ անոցմով պարծի : Թողլով սոյն պժգալի կէտերը մի առ մի աչքէ անցնել, յարգոյ ընթերցողիս ուշադրութիւնը կը հրաւիրեմ տղայի առ աղջիկն տուած այցելութեան վրայ : Տեղս նշանեալները դիրար ազատօրէն կամ յայտնի տեսնել խիստ ամօթ բան եւ քրէական մեղք համարուած լինելով կը ստիպուի պատանին ծածուկ լուր զրկել իւր քենուոյն կամ ուրիշի մը՝ թէ այս ինչ գիշեր այցելել պիտի գամ, ուստի քէնին տանը մէջ տեղ մը կը պատրաստէ ամենայն դժուշութեամբ, որ մէկը չիմանայ (չատ անգամ յարժար տեղ մը չյաջողելով անպատիւ տեղ մը կը յատկացնէ, զոր օրինակ իշու դրախտը եւն.) պատանին գիշեր ատեն աւազակի պէս կ'երթայ, եւ կէս ժամ քենուոյն հետ միասին տեսակցելէ վերջը քենին կը ձգէ կ'երթայ՝ քոյրը տղուն յանձնելով, որ սովորապէս մինչ լոյս, աղջիկ եւ մանչ առանձին կը տեսնուին... պարկեշտ սովորութիւն : Այս կերպ յարաբերութիւններէն(2) վերջ շատ կը պատահի, որ նշանածք իրարմէ ետ կ'ըլլան, երբեմն իրենցմէ եւ երբեմն իրենց ընտանեաց մէջ ծագած սնտոխ միջնորդ ու դժտութիւններով. ասկէ ամէն ոք կրնայ մակարերել թէ ի՛նչ չարիք եւ թշուառութիւնք կը ծնանին եւ ի՞նչ է պատճառը, եթէ ոչ 6-7 տարիներով նշանած կենալը : Տարիներ անցնելէ վերջ եթէ պատանուոյն հայրը հարսանիք ընել ուզելով աղջկան հօրմէ խօսք առնելու երթայ, եւ առաջարկէ, թէ հարսանիք տի ընեմ, ալ դործ կը բուսնի, ամէն բարեկամութիւն կը խան-

(1) Ուսումնական մէկը չըլլալս կը խոստովանիմ, որովհետեւ ոչ կամուսնուր դպրոց/ացած եւ ոչ ալ ուսումնական դասատուէ դաս առած եմ :

(2) Մի փոխիմ պտուղը տեսնուած է :

դարուի, կը սկսի աղջկան հայրը սպառնալ (չեմ տա՛ր, հարս ընելիք աղջիկ չունիմ, հողիս ելա՞ւ, 2-3 տարի վերջը, եւն. եւն.) :

Տղուն հայրը շատ աղաչելէ եւ ամէն կերպ ազդեցութիւն գործածելէ մերջ յաւատեալով 1 կամ 2 տարի վերջը խօսք կը կապեն⁽¹⁾ եւ կամ մէջերնին կրկին դժտութիւն ծագելով 3էն 7 տարի նշանուած կեցող աղջիկը ետ կընեն եւ ուրիշի մը կու տան կամ առնող չըլլալով հետացուի կը վերապահեն :

... Խմբագիր, թէեւ ըստ առողջարանից ներելի չէ որչափ ալ քաջառողջ ըլլայ պատանին 23-24 տարիքէն առաջ ամուսնացնել, բայց հոս ընդհակառակը կը գործադրուի, 15-20 տարեկանի մէջ սովորաբար կամուսնանան : Անոնք որ 14-23 տարիքնուն մէջ կամուսնանան, պատճառը նիւթական վիճակնուն անկարողութիւնն է, ընդ նմին, հաւասար ամուսնութիւն խիստ հազուադէպ է, ինչու որչափ ալ աղջիկը պատանիէն քանի մը տարի պզտիկ ըլլալու ալ է նէ, հոս դժբախտաբար կամ օրիորդը 3-4 տարի մեծ կընտրեն, ինչպէս առաջ յիշեցի, եւ կամ տարիքով տղայ եւ աղջիկ միեւնոյն կ'ըլլան :

Ահա այս է տեղւոյս ամուսնութեան վիճակը : Սոյն կէտերու ուշադրութեան մասին թէեւ Ազգասէր Տ. Ներսէս Ս. Պատրիարքը, ինչպէս ամէն տեղ նոյնպէս ալ Կիւրին (իբր 3 տարի առաջ) հրահանգ զրկած էր, բայց, աւա՛ղ, որ կարգացող ու ուշադրութեան առնող կամ իմաստը հասկցող չկայ : Բայց կրկին այսպիսի ցաւալի կէտերու մասին նորին ամենապատուութեան ուշադրութիւնը կը հրաւիրեմ, որ հող տանի ազգայնոց այս կերպ վտանգաւոր խնդիրներուն :

... Տէր, այս մասին Ձեր կողմանէ ալ պէտք եղած դիտողութիւնը չինայելով, Ձեր պատուական լրագրոյ մօտակայ թերթին մի անկիւնը դետեղելիդ խնդրելով իմ շնորհակալիքը կանխաւ կը մատուցանեմ :

20 Օգոստոս 1877

Մ. ՍԱՐԳԻՍ Ա. ՄԻՆԱՍԵԱՆ

Յ. Գ. Մինչ ցարդ դպրոցներու բացումը եւ փակումը միապետական չորպաճիութեան կամքէն կախում ունենալով՝ թէեւ քանի մը ցերեկօթիկ եւ դիշերօթիկ անուանեալ դպրոցներ բացուեցան, սակայն դոհացուցիչ արդիւնք մը չկրցին ունենալ : Ռուտի առայժմ աշխոյժ երիտասարդաց խումբ մը 3 տարի առաջ Այնթապի մէջ իրենց հիմնած Հայրենասիրաց ընկերութեան դրամով տեղւոյս Մայր եկեղեցւոյ վարժարանի ամայի մնացած վերնայարկին մի մասը վերանորոգելով, 40 տղայոց համար ցերեկօթիկ «Արամեան» վարժարան մը բացաւ, ընդ դասատուութեամբ Խաչատուր պատուէլի Փանոսեանի, որպէսզի անգամ մըն ալ ինքը փորձէ : Մինչեւ հիմա փորձառու ծերութիւնը իւր խոհեմութեամբ մէկ տեղ ոյժը թափեց, բայց չյաջողեցաւ. տեսցուք թէ անփորձ երիտասարդութիւնը տի յաջողի՞. որի համար համայն ազգայնոց առ երկին բարեմաղթութիւնը կ'ակնկալենք :

Նայն

«ՀԱՅՐԵՆԻՔ», Կ. Պոլիս, 1877, Թիւ 376 :

(1) Այս աստիճանի հասնել վերջ հարս հանելու գնացած ժամանակ դռները գոց կը գտնեն եւ շատ մը վեճեր... :

Կիւրինի մէջ 2500 տուն բնակիչէն աւելի կը հաշուի որոնք հետեւեալ կերպով կը բաժնուին. 1500 տուն Լուսաւորչական Հայ, 900 տուն Մահմէտական, 50 տուն Հռովմէական հայ եւ 50 տունէն աւելի Բողոքական հայ: Տեղւոյս մահմէտականք ի սկզբանէ անտի գմեղ «կեալուր» կանուանեն եւ մենք արդէն վարժուած ըլլալով կը կենակցինք նոցա հետ. մեր վկայութիւնը արդէն անընդունելի է կառավարութեան մէջ. ուրիշ կէտեր ասկէ կրնան մակարեութիւլ: Հռովմէական հայք ունին մի ազնուասիրտ առաջնորդ Գեր. Յովհաննէս Մ. վարդապետ Տիրբանակերտցի. նոյնպէս Բողոքական հայք ունին մի քարոզիչ պատուելի Մարտիրոս Պէշկէթուրեան որոնք մերազնեայց հետ սիրով կը վարուին եւ ես իմ շնորհակալիքս կը յայտնեմ նոցա: Տեղւոյս ազգայնոց մեծ մասը ուսման մասին տակաւին անտարբեր կը դռնուի. կանոնաւոր ընկերութիւն եւ ժողովատեղի կամ լսարան չկայ. լրագիր կարդացող մասն ալ խիստ քիչ է, որոնք մեծ մասամբ քաղաքական խնդրոց համար կը բաժանորդագրին: Ահաւասիկ տեղս եկող լրագրաց ցանկը, 2 օրինակ Մանդումէ որոյ մին առ Հռովմէական հայս. 5 օրինակ Հայրենիք. 2 օրինակ Թատրոն բարեկամ մանկանց Հայրենասիրաց Ընկ. Արամեան վարժարանի նուիրեալ, մին Մանուկ էֆ. Գոչունեանէ, իսկ միւսը Մ. Թէրճէն աղա Թէրճէնեանէ, 16 օրինակ Աւետարներ Լուսաւորչական եւ Բողոքական Հայոց բլանկան. բայց ցաւ ի սիրտ կը յայտնեմ որ ազգային թերթերու բաժանորդք խիստ քիչ են եւ սակայն օր ըստ օրէ աւելնալու յոյս կը տեսնուի:

Տեղս կայ 4 եկեղեցի 9 քահանայով որոցմէ զրեթէ մէկը կամ երկուքը իւրեանց կոչման նուազ ինչ կը պատասխանեն. իսկ միւսներէն որը առանց գրեւտի մկրտութեան պաշտօն կը կատարէ. ուրիշ մը բժշկութեան կը պարապի եւ մինչեւ իսկ տաճկաց հիւանդներու այցելելու եւ ստակի պատճառաւ հրապարակի մէջ դանակոծուելու ստրկութեան կը զիջանի, ուրիշ մ'ալ ժամադրութեան կը պարապի. վերջապէս անուրանալի է որ գմեր քահանայս մեծաւ մասամբ իւրեանց պարէնը ճարելու համար քահանայացուցած են, որպէսզի, Ազդին վրայ բեռ չըլլան... որոնք համար մը Աւետարան չեն կարող ուղիղ կարդալ. եւ ամենէն ցաւալին այն է որ բանիրուն Առաջնորդ մը կը պակսի մեզ, ժողովուրդը եւ քահանաները յուզութիւն հրաւիրելու համար:

Գալով դպրոցներուն, ունիմք 7 դպրոց, 5ը ազգային, 2ը մասնաւոր: Մայր դպրոցի մէջ 70 աղայք կը կրթուին դաստիարակի մը ձեռք որ լոկ հասարակ ընթերցանութիւն թերեւս դիտէ եւ քերականութեան դասը օրը անդամ մը ուրիշ դասատուէ առնելով, սանուց կը հաղորդէ: Այս դպրոցին մէջ հետեւեալ դասերը կաւանդուին, Հասարակ ընթերցումն, Քրիստոնէական, Քերականութիւն եւ Թուարանութիւն: Հասարակ ընթերցման համար ամէն տղայ իւր հօրը տունը դռնուած գիրքը բերելով անոր վրայ դաս կ'առնէ:

Ինքնընտիր դաստիարակը իւր ամսականը ըստ իւր որոշման աշակերտաց ծնողներէն կ'առնու իւրաքանչիւր ամիս. հոգաբարձուք դպրոցի անհուն չըջնը լրանալէ վերջը տի ընտրուին... Չախճոր թաղի Ս. Փրկչաց եկեղեցւոյն դպրոց 80-ի չափ աշակերտք կ'երթեկեն, որոյ դասատուք երկու կառավարիչ են, ամսականին Ազդէն կը տրուի եւ սոյն դպրոցին մէջ եւս աւանդուած դասերը վերջինին համանման են. նոյնպէս եւ Էօրէն թաղի Ս. Գէորգոյ եկեղեցւոյ դպրոցը. բայց այս թաղը մի Պարթեւեան անուն ընկերութիւն հաստատած է շնորհիւ Յ. էֆ. Աճէմեանի եւ Նահանպետ աղա Նա-

հասկանալի. 100 լիրայի մօտ ստակ ունի. նպատակը նոյն թաղի տղայոց կրթութիւնն է. նաեւ մի դպրոց Շուղուլ թաղի Ս. Յակոբայ եկեղեցին ունի, յորում՝ կուսանին 50-ի մօտ աշակերտք. դասերը վերիններու համանման են, դասատուն աղբայնոց կողմանէ ընտրուած է: Խասպաղ թաղի Լուսաւորչեան թանգարանի ընկերութեան վարժարանը կանոնաւոր չըլլալուն այժմ դոցուեցաւ. անդամք դրաւոր բան մը չեն գիտեր, այլ ինչ որ տեսած են:

Գանք հիմա մասնաւոր դպրոցներուն. տեղւոյս Վահանեան ընկերութեան շնորհիւ (այս ընկերութեան անդամոց մէջ մահու եւ կենաց խնդիր մը ծագած է այժմ որ բնական է մեր ազգայնոց) բացուած է 1874-ին մի Ղեւոնդեանց ուսումնարան. ուր կ'ուսանին 40 աշակերտք, որոց դասատուն է Պր. Աւետիս Պրթիկեան Վանեցի. (ընկերութեան անդամոց խնդիրը այս դասատուն է): Աւանդեան դասերն են Հասարակ ընթերցում, Քերականութիւն, Թուարանութիւն, Աշխարհագրութիւն, Տրամաբանութիւն, Ճարտասանութիւն, Տաճկերէն, բայց Ազգային պատմութիւն այն ատեն դաս պիտի տրուի, եթէ ընկերութեան անդամք (հոգաբարձուք) բարեհաճին դպրոց այդեղի: Բաղաքիս առաջին ուսումնարանը սա է ուր աւելի քան 50 լիրա ծախք կ'ըլլայ. այս՝ Վահանեան ընկերութեան միապետական անդամոց կը վերաբերի եւ ոչ ոք չէ կարող միջամտել:

Հայրենասիրաց ընկերութեան շնորհիւ բացուած է 1877 Յուլիս 20-ին մի շքեղ վարժարան Արամեան անուն որ ունի 40 աշակերտ եւ շրջան 5 տարի. Աղբ. Վարչութեան հրահանգին համեմատ կ'ընթանայ. անդամք եօթը երիտասարդներ են. սոյն դպրոցի մէջ աւանդեալ դասերն են Հասարակ ընթերցում, Քրիստոնէական, Աղբ. Պատմութիւն, Սրբազան Պատմութիւն, Քերականութիւն, Թուարանութիւն, Երաժշտութիւն կրօնական (հին եղանակ) եւ ազգային:

Ահա՛ այս է տեղւոյս ազգայնոց վարժարանաց վիճակը եւ տակաւին անթիւ տղայք իւրեանց թանկագին ժամանակը աստ անդ խաղերով կ'անցընեն. մէկ մասն ալ Հոսովմէական եւ Բողոքականաց վարժարանը երթալով Առտուածաշունչ կը կարգան: Իսկ իդական սեռի կրթութիւնը ոյր քարոզ կը կանգնի Պր. Սարաճ, հոս ազգային կործանում մը կը նկատեն, որոյ ապացոյց է 2—5 տարի առաջ Չարիճոր թաղի մէջ բացուած աղջկանց վարժարանը եւ զրեթէ վեց ամիս տեւեց. Աղբայք հազիւ հազ պատեհութիւն ունեցան դոցելու...

2 Մարտ 1878, Կիւրիճ

Ա. Ս. Ա. ՄԻՆԱՍԵԱՆ

Մեր մեծարդոյ թղթակցին տուած սոյն տեղեկութիւններէն յանչափս դո՛ւ եմք եւ կը փափաքիմք որ դաւառաց մեր արդոյ դործակալներն ալ սոյն օրինակին հետեւին որքան կարելի է երկարաբանութեանէ խորշելով:

7.— Ասկի վերջը Ասիոյ հայաբնակ գաւառաց փոխանակ Հայաստան կոչելու վայաստան անուանելու է. որովհետեւ չիկայ տեղ մը որ սրտերնին այրած չըլլայ, չիկայ տեղ մը որ պատիւնին, ինչքերնին, կեանքերնին բռնարարուած չըլլայ, չեմք կարծեր թէ Հայոց կրած այս դառնակակիժ տառապանքը աշխարհիս մէջ չլսող մը գտնուի. բայց դարձեալ խեղճ գաւառացուց վիճակը օր քան օր աւելի ծանրանալու վրայ է. մեր այս ըսածը հաստատե-

լու համար Շապին Գարահիսարէն Աւետարեբի ուղղուած նամակի մը հետեւեալ կտորը յառաջ կը բերեմք :

«Հոս կ'ուզեմ քանի մը խօսք ըսել Քրիստոնէից հարստահարութեանցը վրայ որոնց ականատես եղանք եւ կամ ստոյգ աղբիւրներէ տեղեկացանք : Այսպիսի դառն ժամանակ անգամ որ բոլոր այս երկիրը թշուառութեան տակ կը հեծէ, Մահմետականք չղաղբեցան իրենց Քրիստոնեայ քաղաքակիցները նեղելէ : Այս կողմերը չգտնուեցաւ քաղաք մը կամ գիւղ մը, ուր Քրիստոնեայք ազատ մնացին հարստահարութենէ Շուկային մէջ Քրիստոնեաները ծեծել, անոնց հազուստը հանել, «Կեալարքա եագըշմագ»⁽¹⁾ ըսելով դանոնք ձիէն վար առնել, սոյնորական բաներ են, եւ աչօք տեսյա Կիւրին : Այս ճամբորդութեան ատեն որչափ գիւղ որ հանդիպեցանք, տեսանք որ ամենուն աչքէն արտասուք կը հոսէին : Մանաւանդ այն տեղերուն բնակչաց որ ճամբու վրայ են՝ նեղութիւնը եւ հարստահարութիւնը զօրքերէն պատմել լեզու մը կարող չէ : Եթէ կառավարութեան դիմեն Քրիստոնեայք, եւս աւելի կը տուժեն : Այս բաները տեսայ նոյնիսկ այս քաղաքին մէջ : Չնչին Տաճիկ մը՝ որ բոլոր կենացը մէջ տեղոյս Քրիստոնեաները կը նեղէր, եւ կառավարութենէն երբեք չսպուած չէր, ամիս մը առաջ մեռաւ ի միւրթարութեան թողլով գրիստոնեայս :

Կը յուսացուէր թէ երբ խաղաղութեան նշոյլը ծագէր, չարիքները պիտի վերնային, բայց այնպէս չեղաւ :

Քրիստոնէից հարստահարութիւնը մանաւանդ քուէի զօրքէն է : Զօրքերուն գլուխ եղող թէ ոստիկան եւ թէ պաշտօնեայ առտուն մէկ դիւղէն կ'ելլեն, մինչեւ իրենց իջեաւնը ճամբան ամէն գիւղ հանդիպելով կ'ընեն. «Հազըր օլուս, աւփար Կէլիօր» (Պատրաստ եղէք, զինուոր կու դայ) : Զօրքը կու դայ դիւղացիք կ'ելլեն, կու լան, կը պաղատին, կ'աղերսեն, օգուտ չընեն : Եթէ բան մը առին, ուրիշ գիւղ կ'երթան, ապա թէ ոչ հոն կը մնան, կ'ուտեն, կը խմեն, դառ կ'ուզեն, հաւ, միս, գինի, օղի, հարս, աղջիկ, ամէն բան կ'ուզեն, իրենց ասպնջականները կը ծեծեն, անասունները կը պառկեցնեն որ մորթեն մինչեւ որ քան մը առնեն. տունները կը մտնեն, արք եւ կանայք կը կողոպտեն, կերակրոյ ամանները, անկողնոյ երեսներն իրենց պարկերը կը դնեն, եկեղեցիները կը քարոտեն, կարասիները կը կտորտրեն : Էղտիպէրի եկեղեցին Ռուսիայէն բերուած դանդակ մը ունէր. զօրքը վար առնելով այս դանդակը կտորտեց : Սէվինտիկի քահանային ուսին վրայ ծանր բեռ դնելով մինչեւ Առաջիկա վարեցին 3 ժամ եւ 700 դահեկան առնելով թողուցին ի ներկայութեան գայմազամին որ Կնտիրէս կը նստի, եւ կաշառակրծութեամբ բոլոր գիւղացիները կողոպտած է. Մահմետականք անգամ անոր վրայ միշտ դանդառ կ'ընեն : Հիմա հինգ գիւղի մէջ, 60-էն մինչեւ 80-ական յօրք 25 օրէ ի վեր կեցած են. գիւղացիներէն կ'ուտեն. երբեմն ալ կերակուրի չհաւնելով դանոնք կը ծեծեն : Սղութիւնն այնչափ է, որ 15 քարչ կոտիկ մը ցորենը 40-էն մինչեւ 50 դահեկանի կը ծախուի : Կառավարութիւնը համբարանոցներ ունի ամէն գիւղ. հրաման եկած է որ բացուին համբարները եւ գիւղացւոց տրուի. բայց տեղոյն կառավարիչք կը սպասեն բան մը յախշտակել եւ այնպէս ցրուել : Վերջապէս որոնք են որ այս երկիրը եւ անոր բնակիչները կը վրդովեն : Քիւրտը եւ Զէրքէզն է, նաեւ տէրութեան

(1) Զվայելիք :

պաշտօնատարներէն ոմանք են: Աղաչենք Տէրոջը որ Վեհափառ կայսեր դահն ամբաղնէ եւ զօրացնէ, որպէսզի ամէն մարդ իր զործքին հասուցումն անկ արգարութեամբ ընդունուի:

1878, քիւ 596, էջ 11—12

«ՄԱՄՈՒԼ», Կ. Պոլիս

8.— ԱԶԳԱՅԻՆ

Շարժուա Չարսանճախէն, Քզիէն, Արաբկիրէն. Կիւրիէն, Բալուէն, Եգեսիայէն եկած հայ լրագրաց մէջ հրատարակուած նամակները մարդս կարողալ չկրնար աչքին արտասուքը բռնել: առանց այդ անօրէն Քիւրտերուն եւ Չերքէզներուն նոյն կողմերը գործած չարութիւնին իմանալով եւ լսելով:

Տարակոյս չկայ թէ՛ Պատրիարքարանը այս ամէնն իմանալով իր սովորական թագրիրները գրած է առ Բ. Դուռը: Բայց ներուի մեզ հարցնելու թէ՛ Բ. Դուռը ի՞նչ կը մտածէ իբր դարման իր այս հաւատարիմ հպատակ ժողովուրդեան ցաւոցը:

Մեր լսածը Բ. Դուռը երկու ամիսէ ի վեր Պետական խորհրդոյ անդամ Ալի Շէֆիք պէյն Հայաստան պիտի զրկէ Քիւրտերուն գործած աւարառութիւններն ու հարստահարութիւնները քննելու եւ անոնց դարման մը դտնելու պաշտօնով:

Իարձեալ վերջին անգամ մ'ալ կը լսենք թէ՛ Բ. Դուռը Ալի Շէֆիք պէյնի տուած այս նոր պաշտօնն աւելի ընդարձակեր է՝ յատուկ յանձնաժողով մը կազմելով, որ Հայաստանի բնակչաց երեւելիներէն պիտի բաղկանայ եղեր, եւ որոյ անդամներէն մին ալ Կարնոյ երեսփոխան Կիրակոս էֆէնտին է, որ քիչ օրէն Ալի Շէֆիք պէյնի հետ ճամբայ պիտի ելլէ Բ. Դրան կողմէն իրենց յանձնուելիք յատուկ հրահանգներով:

Հստ մեզ Բ. Դուռը այս անօրինութիւնը ընելով պարապ տեղը զահմէթ մը ըրած պիտի ըլլայ, առանց գոհացուցիչ արդիւնք մը տեսնուելու, բացի ժամանակի կորուստէ, որովհետեւ գաւառաց մէջ Քիւրտերու ձեռք կատարուած հարստահարութիւնները 20 տարիէ ի վեր ստուգուած եւ հաստատուած են, անթիւ մահահրազութիւններով, Պատրիարքարանի կողմէն զրուած բազմաթիւ թագրիրներով, նոյն իսկ ասկէ առաջ թէ՛ Պատրիարքարանի մէջ եւ թէ՛ Բ. Դուռը յատուկ մասնաժողովներու եւ յանձնաժողովներու պատրաստած եւ մատուցած տեղեկագիրներով, ու որոնք դարմանն ալ ցոյց տալով՝ հարիւրաւոր մեծ Եպարգոսներ գրով եւ բանիւ խոստացած են ցոյց տրուած դարմանները գործադրել, բայց բնաւ իրենց խոստումը չեն կատարած, կամ կամք չունենալնուն եւ կամ հրաժարումնին շուտով վրայ հասնելուն պատճառաւ:

Այս տեսութեամբ մենք կ'ըսենք թէ՛ Բ. Դուռը շատ լաւ ըրած եւ արդարութեամբ շարժած կ'ըլլար փոխանակ հազար ու մէկ ազնամ մասնաժողովներու ձեռք ստուգուած ճշմարտութիւն մը նորէն ստուգութեան համար երկար բարակ մասնաժողովներ կազմելու շատ աղէկ ըրած կ'ըլլար կ'ըսենք, եթէ հին խոստումներն եւ որոշուած ու ցոյց տրուած դարմանները առանց ստեն կորսնցնելու անմիջապէս գործադրութեան դնել հրամայելու բարեհաճէր:

«ՄԱՄՈՒԼ» քիւ 600, 1878, Պոլիս

Կիրիճէն հետեւեալ գաղութեան դէպքը կը գրեն մեզ.—

«1877ի «Աւետարներ»ի 14րդ թւոյն մէջ, հրատարակուած փետր. 25 Այնթապէն դրած նամակովնիս Հայաստանի այլեւայլ դաւառներու մէջ կողմնորոշուած եկեղեցեաց դումարներուն եւ տեղւոյն անդաստիարակութեան վրայ կը ցաւակցէինք եւ ի դպուչութիւն ընթերցողաց մանաւանդ Կիրիճեցոց յորդոր կը կարգայինք: Մեր հայրենակիցք անփոյթ դռնուելով հոգ չտարին դպրոցներ բանալու եւ ծախքը եկեղեցւոյ դանձէն հոգալու, ու վերջապէս թողուցին եկեղեցւոյ գումարը, արծաթ եւ ոսկիները այնքան ատեն, որ աւագակները կարեւորութիւնը գալով 1878 Ապրիլ 22 լուսնալու գիշերը կողոպտեցին զայն իբր 300 ոսկւոյ մօտ գումար մը, անհետացաւ դնաց եւ մինչեւ այսօր ոեւէ տեղէ մը նշոյլ մը չէ տեսնուած (միայն տեղի ունեցած կարծիքներէն աւագակք գրդուուելով Սեպտ. 26-ին պատերազմ փրցնելով եկեղեցւոյն թաղեցոց հետ, 30ամեայ ամուսնացեալ քաջ պատանի մ'ալ դնդակով մը կեանքէն զրկեցին...) Այս եկեղեցին քաղաքիս էօրէն թաղի Ս. Գէորգայ եկեղեցին է, թաղեցիք աղքատ ըլլալով կանոնաւոր վարժարան մը չունէին, եւ վերջապէս դաստիարակութեան յոյժ կարեւոր ըլլալը չճանչնալով եկեղեցւոյ դանձէն ալ չհոգացին. այժմ եկեղեցին առանց դանձու եւ թաղը առանց վարժարանի մնաց. իցիւ թէ տեղւոյս ազգայինք նկատողութեան առնէին մեր 1877 Փետրուար 25ի գրութիւնը:

«Ստիպուեցայ ցաւօք սրտի դրել, որ քաղաքիս ազգայնոց դեռ խրատ չեն եղած տեղի ունեցած դէպքերը, չգիտեմ թէ ե՞րբ պիտի արթնան մահաօրիթ քնէն...: Հայրենասիրաց ընկ. 1877 Յուլիս 20ին տեղւոյս Մայր եկեղեցւոյ վերնաշարիկի մի մասը իւր քսակէն վերանորոգել տալով, Արամեան վարժարան մը բացաւ. սակայն յիշեալ վարժարանը 1400 հայ տան բաւական չըլլալուն ուզեց Արամեան «Սանուց» վարժարան մ'ալ բանալ դիմացի յարկը եւ միայն վերանորոգման ծախուց համար խնդրադիր մատոյց առ Ադրիային Ժողովն, որ դոնէ յիշեալ ծախքը (20 լր. օսմ.) Ս. եկեղեցւոյ դանձէն տրուելու շնորհը ընեն. բայց ապարդիւն եւ ի դուր. խնդրադիրը 2-3 եղաւ, սակայն ի դերեւ, (այո՛, հա՛, վաղը միւս օր եւայլն) ըսելով, Հոկտ. 1ին լացուելիք վարժարանը յետաձգեցին եւ վերջապէս չուզեցին տալ:

«Ամէն խելահաս մարդ կը խոստովանի որ, ինչպէս երկիրս լուսաւորողը արեգակն է, նոյնպէս եւ Ազգ մը փրկող ու կենդանացնողը դպրոցն է. սակայն տակաւին մեր չորպաճիները չեն համոզուած եւ չեն ուզեր համոզուիլ, թէ դպրոցը կարեւորագոյն եւ նուիրական յարկ մըն է, եկեղեցւոյ դանձը՝ ոսկի արծաթները պահել եւ օր մը աւագակաց ձեռքը ձգել լաւ կը համարին, քան թէ ի լոյս ածել եւ լուսաւորել Ազգը:

«ՀԱՅՐԵՆԻՔ», քիւ 507, 1879, Պոլիս Մ. Ս. Ա. ՄԻՆԱՍԵԱՆ

8 Սեպտ. 1879, Կիրիճ

Կիրիճէն մեզ գրուած հետեւեալ նամակը քէն ու ձեռքերնիս հասած, սակայն կարեւոր տեղեկութիւններ պարունակելուն համար արժանի դատեցիմք հրատարակել.

«Տէր խմբագիր,
«Քաղաքիս առաջնորդ՝ Գեր. Չաքարիա Սրբազան վերջին օրերս ազ-

դային Պատրիարքարանէ առած հրահանգին համեմատ, Սահմանադրութիւնը ի դործ ածելու համար նախորդ ամսոյ ՉԼին Մանճըլըզէն քաղաքս եկաւ. սակայն դեռ մինչեւ այսօր գրեթէ օրինաւոր ձեռնարկութիւն մը չըրաւ. բայց կը յաւելումք ըսել թէ՛ եթէ տեղս օրինաւոր կերպով ազգային Սահմանադրութիւն գործադրուի, յոյժ օղտակար պիտի լինի ազգայնոց:

«Դպրոցներու մասին ասկէ առաջ տեղեկութիւններ տրուած են. եթէ ւանուց ծնողքներէ պատուաւոր անձինք ստորագրութիւննին անարդելու եւ զրժելու չլինին ու դասատուք ալ անկեղծ լինին, անոնք բաւական բարեկարգ միճակի մէջ կը գտնուին:

«Մ. Ս. Ա. էֆ. Մինասեանն ալ ազգային գործերէ հրաժարած է, բայց հեռուոր տեղեր դառնուող ընկերակիցներու ստիպմամբ, այժմ Հայրենասիրաց ընկերութեան տնօրէնութիւնը առժամանակեայ կերպիւ կը վարէ: Աւելորդ չեմ համարեր յիշեալի հրաժարականին օրինակը հոս դնել:

«Ի հինգ ամաց յետէ սիրելի ազգիս անձնուիրաբար ծառայելէն ետք, այսօր կամովին եւ այնպէս խիստ իրաւացի պատճառներով ազգային ընդհանուր գործերէ հրաժարած եմ, տասը տարի պայմանաժամաւ, ի 27 Յունիս 1879, Կիւրին»:

«Արդարեւ ըստ իս ցաւալի է Մինասեանց էֆէնտի սոյն տաճարեայ հրաժարականը. բայց եւ այնպէս չգիտեմք թէ ինչ նպատակ ունի: Կարեւոր կը համարիմ վերջին օրերս տեղի ունեցած մի երեւելի դէպքի պատմութիւնը ընել հոս:

«Սերաստիայէն քաղաքիս ազգային ժողովին ուղղեալ նամակ մը՝ որ ամսոյս Յին հասաւ՝ կը ծանուցանէր Սերաստիոյ անգղիական վսեմ հիւպատոս մըսթր Ուելսընի Սերաստիոյ միճակը այցելելու ելած լինելը, յաւելցունելով թէ՛ Կիւրին ալ պիտի այցելէ. վասն որոյ Առաջնորդ Հայրը եւ ազգային ժողովն որոշեցին պատգամաւոր զրկել զՄարտիրոս էֆ. Պակըճեան, Արամեան վարժարանի դասատուն որ անգղիերէնի լաւ հմուտ է:

«Ազգ. ժողովին մէջ մինչդեռ կը խորհուէր հիւպատոսին տեղ մը պատրաստել՝ Մինասեան էֆէնտի հիւպատոսն ինքն ընդունելու հաճութիւն յայտնեց եւ ժողովականք շնորհակալութիւննին յայտնելով ըստ այնմ նամակ գրեցին առ վսեմ հիւպատոսն յԱզգիլիյէ: Ուստի Սեպտ. 5 Չորեքշաբթի առաւօտ Պակըճեան էֆ. երեք ընկերներով հրաւիրակ զրկուեցան, որոնց նոյն օրը հանդիպած էր, ազգայիններէն քսանէն աւելի պատուաւոր անձինք նոցա հետ ըլլալով նաեւ Գեր. Չաքարի Սրբադանն, Ստեփան Ծ. վարդապետ, վահահայրն Աշոտոյ Ս. Յակովբայ վանուց եւ դպրոցի երգեցիկ մանուկներ, մինչեւ քաղաքին եզերքը դիմաւորեցին, ուր տեղ հիւպատոսն պարտէզի մը հաւնած ըլլալով վրաններ լարուիլ հրամայած էր: Նոյն միջոցին դիմաւորող տեարք բարեկեցին նորին վսեմութեան դալուստը, ու ժամու մը չափ տեսութիւն ընելէ վերջ իրեն համար տեղ պատրաստուած ըլլալը յայտնելով հրաւէր կարգացին, բայց նորին վսեմութիւնը չընդունեց պատճառաբանելով թէ իրեն համար շատ օղտակար է վրանի տակ անցընելը եւ եթէ ազգայնոց հրաւէրէն շատ դուրս ու շնորհակալ է: Ս. Հայրը եւ ազգային տեարք դարձան քաղաք: Նոյն օրը ժամը 9ին փոխադարձ այցելութիւն տուաւ ազգային Առաջնորդարան, ուր ազգային վայելուչ ընդունելութիւն ըրին: Հոս Մինասեան կրկնեց իր հրաւէրը, հիւպատոսն խոստացաւ յաջորդ օրը ժամը 9ին ճաշի դալ միայն:

«Յ Սեպտեմբեր Հինգշաբթի Մինասեանի կողմանէ հրաւիրակ զրկուեցաւ Պակճեան էֆ., խոստացեալ պահուն հիւպատոսն ու թարգմանը բարեհաճեցան ներկայանալ Մինասեանի տունը, հրաւիրեալ էին նաեւ Զաքարիա Սրբազան, Ստեփան Մ. վարդապետ, տեղւոյս բարեկիրթ տեղակալ Մէհմէտ պէյ էֆ., Ազգ. ժողովոյ ատենապետ Մ. Յակոբ աղա Թերճէնեան, Մ. Մարգար աղա Գոչունեան, Պակճեան էֆ. եւ Տարեմտէցի Յակոբ վարժապետ: Մէկ ու կէս ժամ մասնաւոր տեսակցութիւններ ըլլալէ վերջ ժամը 11ին սեղան պատրաստուեցաւ ինը հրաւիրելոց համար, եւ Մինասեանի հայրը Մ. Աւետիս աղա ալ սեղան նստան, ճաշի ատեն Պակճեան էֆ. բաժակ առնելով (ըստ առաջարկութեան Սրբազանի) ոտքի կանգնած Անգղիոյ վեհ. թագուհւոյն կենաց անգղիերէն լեզուաւ բարեմաղթութիւններ ընելով դաւաթը յատակեց. յետոյ վսեմ. հիւպատոսն դաւաթ առած վեհ. թագուհւոյն կենաց եւ սեղանակիցներու սիրոյն յոտին կանգնեցաւ բաժակը յատակելու, սեղանականներ անմիջապէս նորին վսեմութեան հետեւելով յոտն կանգնեցան, դաւաթներն իրարու բաղիսեցան զոր իւրաքանչիւր ոք կը պարպէր հիւպատոսի սիրոյն, ժամը 12 կէսին սեղանի վերջ տրուեցաւ եւ ժամը 12,45ին շնորհակալեօք մեկնեցաւ հիւպատոսն, ու յաջորդ օրը մեկնեցաւ ի Սերաստիա: Յուսալի է մեզ թէ վսեմ. հիւպատոսը վիճակիս բարեկարգութեանց օգտակար պիտի լինի:

«Բերկրութեամբ կը լսեմք վսեմ. Ապետին պէյի Սերաստիոյ կուսակալ անուանիլը եւ անակնթարթ կը սպասուի դաւաթեանը, բարեկարգութիւններ տեսնելու բաղձանօք:

«Հուսկ Խմբագրապետ Տէր՝ խնդրելով, որ բարեհաճիք ներկայս Ձեր հայրենանուէր Հայրենեաց մօտակայ մի թերթի էջերուն մէջ գետեղել եւ ընդունիլ իմ խորին յարգանքս: Մնամ...

«ՀԱՅՐԵՆԻՔ», Իւլ 579, Պոլիս, 1879 ԳՐԻԳՈՐ Ա. Թ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

10.— ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԸ

Կիւրինի Հայոց դործարաններէն ելած զուտ բրդէ գեղեցիկ ու դիմացկուն բանթալոնցու, սեթրիցու, բարտըսիւցու քաղմիրներ, բաղմոցի ծածկոցներ, ինչպէս նաեւ եւրոպական վաճառքներէն՝ աղէկ տեսակ ճերմակեղէններ, քարեոլայի ծածկոցներ 21/2 եւ 31/2 կանդուն լայնքով ընտիր տեսակէն ամերիկեան կտաններ, կանանց վերաբերեալ վուշէ (քէթէն) սպիտակ թաշկինակներ, մագարայի թիրէ, եւայլն, աժան եւ որոշեալ զնով կը ծախուին Կ. Պոլիս, Չաքմաքճըլար եօդուչու Մեծ Նոր խանին կից թիւ 29, Մ. Մոմճեան եւ Ընկ. վաճառասենեակը, ուր կ'ընդունուին նաեւ ուղուած տեսակներու համար յանձնարարութիւնք:

«ՄԱՄՈՒԼ», Իւլ 745, 1880, Պոլիս.

11.— Կ Ի Ի Ր Ի Ն

9 Հոկտ. 1880,

Մեծաշուք Տէր,
Ահա ըստ խոստման մեր առաջին տեղեկագրոյն՝ կը դրենք առ ձեր սրատուական թերթն երկրորդ տեղեկագիրս՝ յայսմ նուազի եւս խօսելով վարժարանաց ընթացից եւ որպիսութեանց վրայ:

Արդէն մեր 80 - Օգոստոս 20 թուական դրոյն միջոցաւ յայտնեցինք թէ՛ Կիւրին այժմ խաւարի եւ տգիտութեան դէմ մաքառելու ճիգ կը գործէ, եւ արդարեւ այնպէս իսկ է, սակայն սոյն խաւարը թանձր եւ աղջամղջին լինելուն՝ նորա դէմ մարտնչելու աննկուն ախոյեաններ, անձնուէր մարտիկներ եւ լուսաւորեալ երիտասարդներ հարկաւոր են, որպէսզի լուսոյ հրաբորբոք աշտանակներ վառելով կանգնեն ի չորս անկիւնս Կիւրինու, դժբախտաբար այսպիսի երիտասարդներ եւս խիստ հազուադիւտ են քաղաքիս մէջ: Յայտնեցինք միանգամայն որ Լուսաւորչեան թանգարանի Հոգաբարձուք անդուլ կ'աշխատին բարեկարգել մեր Ռուբինեան վարժարանը, բայց այս անգամ մորմոքեալ սրտիւ կը յայտնենք թէ՛ աշակերտաց ծնողք տգիտութեան մարդախոշոշ դազանին ճիրանաց մէջ խեղդուած լինելուն համար, աշխատասէր Հոգաբարձուաց ջանքը տրանջանօք կը պսակեն, եւ խոչընդոտ կը լինին եղած բարեկարգութեանց:

Մի միայն այս ուրախութեան աւետիան ունինք հաղորդել որ, Կիլիկիոյ Հովուապետ Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթողիկոսը Կիւրինու փոքր հօտին այցելութեան ելած ժամանակ, անտերունջ միաբարբառ խնդրանօք Սեբաստիոյ Գեր. Պետրոս սրբազան եպիսկոպոսն քաղաքիս առաջնորդ կարգելով Նորին Սրբազնութեան փոխանորդ առաքեցաւ Արժ. Յովհաննէս աշալուրջ եւ պատմագէտ Ծ. վարդապետ Մեսիայեան: Եւ արդ յոյսով ենք որ նոցին երկու Ամուլից անխոնջ աշխատութեամբ պիտի արժանանանք մեր իղձն պսակուած տեսնել, որ է՝ վարժարանաց բարեկարգութիւն, ընկերութեանց յառաջդիմութիւն:

Գալով միւս վարժարանաց վիճակին, անցեալներն Սեպ. 28ին Ձախձոր թաղի Մեսրոպեան վարժարանի սանուց քննութիւնը կատարուելով ընդ նախադահութեամբ Արժ. Փոխ-Առաջնորդին, վարժարանիս Հոգաբարձուաց հետ՝ դմեզ եւս հրաւիրած էին: Այդ՝ նախ վարժարանի դասատու Պ. Սարգիս Խումաթեան համոռօտիւ ծանօթութիւն տուաւ վարժարանի ընթացից եւ որպիսութեան մասին՝ յայտնելով որ Գննիչք թէ՛ եւ Հայոց Մեսրոպեան այգիէն խաղողաց ողկոյզներ կ'թելու յոյսով դիմած են, բայց աւելի ճաքաղ պիտի առնեն քան թէ՛ ողկոյզ կ'թեն. արդէն, ըսաւ, կրնանք վարժարանի խարխուլ եւ կիսակործան վիճակէն մակարերել նորա սանուց վիճակն, որոնց թիւն 152էն աւելի լինելով առանց տեւականութեան ըստ կամս կը շարժին՝ ի շնորհուկս մեր աղայից, որ բազմապատիկ բարձրացուցած բողոքանաց կամ պահերսանաց ձայնս չհաճեցան լսել եւ վարժարանը բարեկարգելով Հոգաբարձու, կարգ եւ կանոն հաստատել...: Երբ ճաքաղն կատարեցինք, հարկ եղեւ եւ ինձ նուաստութեանս՝ հրամանաւ Շնորհափայլ նախադահին ինչ ինչ դիտողութիւններ առնել վարժարանի ընթացից եւ նորա յետադիմութեան մասին՝ ցուցանելով թէ՛ հէզ Հայը գերդ Երիքովի դիպաստ անկելոյն տգիտութեան սայրասուր սլաքներով խոցուած եւ նորա սրտին մէջ անմիաբանութեան բիւրաւոր նիզակներ մխուած՝ դիւր փչացեալ աչքն յառելով վարդաբոյն ճապաղեաց մէջէն դողդոջուն մատուցն կը կարկառէ, Հայոց մատաղերամ մանկունքէն ձեռնտուութիւն կը հայցէ եւ կիսահազ ձայնիւ կը հեծեճէ ատելով «դպրո՞ց դպրո՞ց...» այլ աւա՞ղ, որ Կիւրինու համայն դպրոցաց եւ ի մասնաւորի Մեսրոպեան վարժարանի այս յետադէմ վիճակն չկրնար հէզ Հայուն վիրաց սպեղանի դնել եւ դարմանել:

Չնոյն վաւերացոյց նաեւ Շնորհաշուք նախադահն թէ՛ եւ հակիրճ բայց

սրտառուչ ատենարանութեամբ ճառելով վարժարանաց անհրաժեշտ կարեւորութեան վրայ :

Ահա՛ այս է Կիւրինու մեզ ծանօթ վարժարանաց ճշգրիտ պատկերն, թէեւ զազիազիուն եւ ցաւալի վիճակ, բայց ինչպէս վերեւ ասացինք, լիուրի յուսով կ'ակնկալենք ապագայ բարեկարգութեանց, որ եւ յայնժամ Ձեր պատուական թերթին ուրախական լուրեր հաղորդելու պատեհ առիթ պիտի ունենանք :

«ՄԱՄՈՒԼ», ժԲ. տարի, Թիւ 757, 1880

Մ. Մ. Ա. ԶԳՕՆԵԱՆ

12.— ԿԻԼԻԿԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

20 Հոկտ. 1880, Կիւրին

Պարոն Խմբագրապետ,

Թոյլ տուէք մերթ ընդ մերթ կարեւոր լուրեր հաղորդեմ Ձեզ Կիլիկիայէն եւ նորա վիճակներէն :

Կիլիկիոյ Վեհ. Մկրտիչ Կաթողիկոսը Յունիս Ծին Հաճընէն Կիւրին եկաւ իւր մի կարեւոր վիճակին այցելութիւն մը տալու : Աւետարեր Մանչը նոյն օր կէս օրէն առաջ հազիւ հասաւ Կիւրին, մինչդեռ օր մը առաջ դաւ յանձն առած է եղեր. քաղաքիս ազգայինք ընդհուպ առաջնորդարան դու մարտելով պատրաստութիւններ տեսան եւ դիմաւորել սկսան. եւ առաջին պիմաւորողներն հասան մին Ղըզըլպուրուն զիւղ՝ ուր միանալով Հայրապետին հետ դարձան : Արդէն քաղաքիս ամէն կարգի ազգայինք քաղաքէն դուրս կը վազէին իրենց Վեհապետն դիմաւորելու : Երբ Մուսլուխ հասան, որ քաղաքի կեդրոնէն դրեթէ մի ժամ է, բազմութեան թիւը 1500ը անցած էր, թէ հեծեալք թէ հետեւալք, նոյնիսկ կառավարութեան պաշտօնէից մեծ մասն յիմաւորած էին, նոյնպէս դասք քահանայից, մանկունք դպրոցականք, արք եւ կանայք, ծերք եւ տղայք, խաչերով, ցընծախներով, երգ եւ շարականներով, սուսեր եւ հրացաններով՝ որոնց ամէնուն ձայն միաւորած ատեն օդը կը թնդացնէին, որուն Կիւրինի ռամիկ ժողովրդեան աչքերը շլացան, թէ այս ի՞նչ հանդէս, ի՞նչ ցնծութիւն, ի՞նչ բերկրառիթ օր եւ ի՞նչ երջանկութիւն է. երբ քաղաք հասան, որ ժամը 12 եղած էր բազմութեան թիւը 3000ը անցած էր, Մայր եկեղեցւոյ կոչնակը կը հնչէր եւ Հայոց սիրտը ուրախութեամբ կը լեցուէր, Մայր եկեղեցի իջաւ Վեհապետն օրհնեց ժողովուրդը, որ իւր այդչափ անկեղծ յարգանքներ կը մատուցանեն եւ սիրալիր ընդունելութիւն կ'ընեն. ապա արիութեան եւ յառաջդիմութեան հրաւիրեց ժողովուրդն եւ Վեհապետ կայսեր կենաց բարեմաղթութիւններ ընելէ ետք վերջացուց. եւ այն խուռն բազմութիւնը որ լեցուած էր եկեղեցին, սրահը եւ փողոցները, նոյն հանդիսիւ տարին Մինասեանց տուն՝ որոնք պատրաստուած էին հիւրընկալելու : Ահա... խմբագիր Ձեզ մեծ հանդէսի մը նկարագրութիւնը՝ որ թէպէտ 4-5 ամսեան է. այլ սակայն, ուղեցի ձեռնարկութեանս հիմը մեծ ձգել, մեծ մարդէ սկսիլ, որպէսզի հաստատուն եւ յարատեւ ըլլայ, եթէ դուք եւս հաճութիւն ունենաք հետզհետէ հիւրընկալել մեր գրուածքներ Ձեր յարգելի թերթերուն մէջ : Վեհ. Հայրապետը Կիւրին երկու ամիս եւ 2 օր կեցաւ, այս երկու ամսեան միջոցին ըստ օրինի Սահմանադրութեան երեսփոխանական, Կրօնական, Քաղաքական եւ Թաղ. ժողովներ հաստատեց :

Ահաւասիկ Քաղ. ժողովոյ անդամոց անուանք : Կայծակ Արապեան,

Յարութիւն Մակարեան, Մկրտիչ Պարոնեան, Ճանօ Տոտախեան, Հ. Թերճան Թերճանեան, Յակոբ Արապեան, Հ. Յովհան Ճարայեան:

Սակայն... խմբադրապետ, ինչպէ՞ս մխիթարուի նախորդ չորպաճի-
ութիւնը, որ դուրի է սահմանադրական ժողովներէ. յերաւի թէ ես ալ չորպա-
ճիութեան դասին մէջ ըլլայի, պիտի ցաւէի ու կարեւորութիւն պիտի չտայի
նորընտիր ժողովոց:

Ահա... խմբադիր Ձեզ ուրիշ տեղեկութիւններ ալ հաղորդեմ, դուցէ
հաճելի թուին. նկարագրեմ՝ եւ դու տես թէ Վեհ. Հայրը ինչ գործեր տեսաւ
Կիւրին: Սրբ. պատարաւ մատոյց, օրհնութիւն տուաւ, Ս. Գրիգոր Լուսա-
ւորչի աջը բացաւ, ժողովներ հաստատեց, քաղաքական սովորութեանց կա-
նոններ դրաւ, եկեղեցիները այցելեց, նոյնպէս վարժարաններէն մի քանին:
Կիւրինցիներու հետ հաշտուեցաւ, 7-նամեայ մնացորդ պաղիներէ համար 50
լիրայ առաւ եւ տարեկան 20 լիրայ ալ աթոռին տուրք հաստատեց եւ Քաղ-
ժողովէն խօսք առաւ, եւ դնաց Օգոստոս 7ին Սեբաստիա, ուր ըստ խնդրա-
նաց քաղաքիս ազգայնոց Սեբաստիոյ եւ Կիւրինի վիճակը միացնելով՝ Գեր-
Պետրոս Արք. եպիսկոպոսն քաղաքիս Առաջնորդ կարգեց: Շնորհակալ ենք
Ազգ. Պատրիարքարանէն, որ դմեզ Չաքարեա եպիսկոպոսին ձեռքէն ազա-
տեց... օրհնեալ ըլլայ Պ. Նազարէթ Իսթամպուլեան որ «Մասիս»ի միջոցաւ
Չաքարիայի արժանիքը նկարեց 2 Օգոստոս 21 կոնդակովն վաւերացուց.
Նորի դերապատուութեան փոխանորդ Հոգեշնորհ Յովհաննէս Ծ. վարդապետ,
որ Օգոստոս 30ին քաղաքս հասաւ, այսօր իւր ազգասիրական պարտաւորու-
թիւնները կը կատարէ դպրոցներն այցելելով եւ յառաջդիմութեանը ջանք ի
դործ աշխատելով:

Ուշադիր խմբադրապետ եւ ես դրեմ Ձեզ, Կիւրինցիք կ'ասեն թէ Ս.
Կաթողիկոսը Կիւրինէն 500 լիրայ տարաւ 200-ը Ս. Աթոռոյ անուամբ, բայց
ան ալ փոխարինութիւն ըրած է, ձրիապէս երկու քահանայ քանի մը դպիրներ
ձեռնադրած եւ ընկերութեանց ալ 10 մէճիտ նուէր տուած. բայց ան որքան
թախանձանօք. (մեղքը ըսողներու վիզը) բայց մի մեծ դործ ալ տեսաւ՝ հրա-
մայեց որ նշանեալ երիտասարդք եւ կուսանք անձուկ միջոցում ամուսնանան:
Ուստի երկու ամսեան միջոցում 70-էն աւելի մանչ եւ աղջկունք իւրեանց
կարծած երջանկութեան հասան. օրհնեալ ըլլայ Հայրապետը...:

Հոկտեմբեր 15-ին Ս. Կաթողիկոսը Սոսյ Ս. Աթոռն ժողով կազմել կը
խոստանար եւ ահա քաղաքէս 2-3ական անձինք կը խնդրէր Աթոռոյ վերաշի-
նութեան եւ բարեկարգութեան վրայ խորհելու համար, սակայն ազգայինք
կ'ըսեն թէ Կաթողիկոսը պէտք է Աթոռը իւր քսակէն շինէ, բարեկարգէ եւ
ապա մեղմէ ստակ ուզէ: Յիրաւի ազգայնոց յոյսն եղած այս աթոռը բարե-
կարգութեան պէտք ունի բայց հովուապետը անփոյթ կ'երեւի. հետզհետէ կը
դրեմ Ձեզ այս մասին. այժմ ընդունեցէք իմ մեծարանցս հաւաստին:

«ՄԱՄՈՒԼ», ԺԲ. տարի, քիւ 766, 1880, Պալիս

Ձերդ ՄԻՀՐԴԱՏ

13.— ՀԱՆԴԷՍ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ Ի ԿԻՒՐԻՆ

1881 Յուլուար 18, Կիւրին

... Տէր Խմբադիր

Բարեհաճեցէք վերստի երկտողիկս հիւրընկալել Ձեր պատուական
թերթին մէջ որ այս անգամ իբրեւ աւետարեր ազանեակ, ցնծութեան ոստ
մը կտուցն առած՝ կը սաւառնի Կիլիկիոյ հորիզոնէն աւետելով նոր տարւոյ

հանդէս մը, որ ականատեսից զգայուն սրտից հուր ներշնչեց, նիրհեցոց արթնութեան շեփոր հանդիսացաւ: Այս երրորդ հանդէսն տեղի ունեցաւ Լուսաւորչեան թանգարանի Ռուբինեան վարժարանի մէջ. երրորդ կ'ասեմ զի առաջին հանդէսն տեղի ունեցաւ 1878ին յԱրամեան վարժարանն, իսկ երկրորդն 1880ին յԱռաջնորդարանն Հայոց ընդ նախադահութեամբ Գերաշնորհ Ստեփան Ծայրագոյն վարդապետ Աղճապէկեանի:

Այն ինչ 1880 թուականի վերջին տխուր դիշերն խուսափելու կը ճեպէր, եւ նոր տարւոյ դալտեան աւետալուր փողն կը հնչէր, յայնժամ Հայկազուն սրբիք ժպիտ դէմքով եւ վառ սրտիւ խուռն բարձութեամբ սկսան իւրեանց նուիրական մօր ծոցն ի Ս. Եկեղեցի ընթանալով. եւ անդ հանդիսաւոր պատարագ մատուցուելով Արժ. փոխ առաջնորդ Յովհաննէս Ծ. վարդապետ Մեսրոպեանը սրտառուչ առեւտրանութեամբ նոր տարւոյ վերայ ճառելով սգեւորեց Քրիստոսի դառնուկներն նոր տարի նոր լոյս եւ նոր կեանք մաղթեթելով հանուրց Հայոց, եւ ապա ծանուցաւ թէ ժամը 6 ու կէսին նոր տարւոյ հանդէս պիտի կատարուի ի թանգարան Լուսաւորչեան: Ուստի որոշեալ ժամանակին մանկունք դպրոցական, դասք շինականաց, մեծամեծք եւ փոքունք սկսան դիմել հանդիսատեղին, յորում նախ երգեցիկք քաղցրանուագ ձայներով հիւրընկալեցին այս ազնիւ խումբը եւ նոցա սիրտը անպատում ուրախութեամբ լցուցին: Ամէնուն դէմքին վերայ խնդութեան շառաւիղ կը ցոլար, ցնծութեան լոյս կը շողշողար. եւ մինչդեռ կաթողին սիրով եղբայր գեղբայր կը դիպէր, անտուտ մատաղ մանկտին իրրեւ աւետաբեր սոխակ կը ճռուողէր, իւր թօթովախօս լեզուաւ մերթ անցլոյն տխուր յիշատակն եւ դառն ազնաները թուելով ունկնդրաց աղիքն կը սրորէր: Եւ մերթ նոր տարւոյ աւետաւորի ոյտակերն նկարելով մի ձեռն արմաւենի եւ միւս ձեռն ձիթենի՝ համայնից լիակատար յոյս կ'ընծայէր: Եւ այսպէս վեց յառաջագէմ մանկունք սնուստրաստի թօթովախօսելով՝ յոյժ զոհացուցին ունկնդիրները, որդէն ծափահարութեան ձայներէն վարժարանի կամարներն կը հնչէին: Երբ վարժարանին նորածիլ բողբոջներն իրենց անուշաբոյր ծաղկանց դեւատիթիթ կոկոններն մատուցանելով հանդիսականաց յետս քաշուեցան, անդիէն առեան ներկայացաւ վարժարանի հոգաբարձութեան առեւտրապետ Մ. Ս. Ս. Մինասեան պարոնը, որ նախապէս նոր տարի մաղթեց Հայոց ազանց, շատ դարուններ անմեղ մանկանց նոր հոգի նոր կեանք համայն ունկնդրաց, ապա ո՛հ դուշեց, հոգւոց հանեց, եւ շիթ մը մարդարտափայլ արտօսը սկսաւ փայլել նորա աչաց մէջ, թուաւ յիշելոյն մտոց թռչնիկը ոլորտս առնելով շրջեցաւ Հայաստանի աղետարչ աւերակաց վրայ, ճախր առաւ անցելոյն արեան գոլորջօք ազականեալ եթերին մէջ եւ չժուժալով շտապաւ վերադարձաւ ի նոր աշխարհն, որոնեց նորա մէջ մի ձիթենի իւր բնիկը նորա ոստից վերայ հաստակելու համար... բայց ո՛վ երկինք, պիտի կարենա՞յ արդեօք այս թափատական թռչնիկը հասանել իւր ըզձին...: Երգեցիկք մի քանի երգօք վերջ տուին հանդէսին, եւ նոր տարւոյ մուսայն հանգիստ տուաւ իւր քնարին ի ժամ 9 ու կէս:

Յետ աւարտման հանդիսիւ երկուսուսան մանկունք դպրոցական եւ պատուարժան հոգաբարձուներէն ոմանք դասատուի հետ միասին դնացին յառաջնորդարան Հայոց ի դիմաց հանուր ընկերութեան՝ բերկրութեան դարնի մատուցանել Արժ. փոխ Առաջնորդին, յորում ներկայ էր նաեւ Հռովմէական Հայոց առաջնորդ Հոգեշնորհ Հայր Յովհաննէս Ծ. վարդապետ Մուրատ-

ևան. սանուց մէջէն Ղեւոն Ծառուկեանը մի ճառ կարդայ. Սանուք երգեցին, Ս. Հարք օրհնեցին եւ ձայնք լռեցին:

Տէր խմբադիր, մի ցնծութեան ոտտ եւս ձեզ ձօնեմ. Ձախճորոյ Մեսրոպեան վարժարանը, որոյ տարտամ վիճակին համար ցաւ յայտնեցի Հոկտ. 9 թուական նամակաւ ուրախութեամբ սրտի կ'աւետեմ թէ այժմ մի քանի ողջամիտ հոգարարձուաց ջանիւք ըստ բաւականին բարեկարգեցաւ:

Ուրեմն վերջ տամ բանիս եւ մնամ միշտ երախտապարտ Ազնիւ Ազգէս:

«ՄԱՄՈՒԼ», քիւ 786, 1881, Պոլիս

Մ. Մ. Ա. ԶԳՕՆԵԱՆ

14.—

Կիւրիւն, 28 Յունուար 1881

... Խմբադիր Տէր

Բարեհաճեցէք Ձեր պատուական լրագրոյ միջոցաւ ի լոյս ընծայել հետեւեալ նամակս՝ Ձեր ուշիմ խոհեմութեամբ հարկ եղած յորդորներն եւս յաւելացնելով:

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Մ Ի

ԱՌ ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՆ ԱԶԳԱՆՈՒԵՐ ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿ. ՀԱՅՈՑ

Մեծաշուք եւ Ազգասէր Տեարք

Ձեր լուսասփիւռ եւ բարենպատակ ընկերութիւնը հանուրց Հայոց լքեալ սրտից խանդ եւ աւիւն կը ներշնչէ, իւր սիրազորութեամբ համայն Ազգութիւնն երախտապարտ կը կացուցանէ, եւ մանաւանդ իբրեւ ճաճանչապեղ լուսացնցող Աստղ մի Հռոյմայ զառամեալ դստեր՝ Բիւզանդիոնի մէջէն ցոլանալով կը շողշողայ Տորոսի մշուշապատ գագաթանց վերայ, իւր մշտափարատ շաւիղներն կը սփռէ համայն Կիլիկիոյ աւերակաց վրայ:

Ո՛վ երկինք, արդեօք այս խեղճուկ Ազգայնաց հառաչանաց ծուխերն իւրեանց դիւցազանց արեան ճապաղեաց դոլորչեաց հետ միանալով ժամանեցի՞նք քո անմահ աթոռոյդ առջեւ, որ բարեհաճեցար շնորհել նոցա Արուսեակ պաղպաղուն, Աստղ առաւօտու:

Պատկառելի Տեարք, անկեղծօրէն ասելով Ձեր սխրագործ ընկերութեան առ Ազգն մատուցած բազմադիմի օժանդակութիւնքն անուրանալի են, եւ Ազգայինք պարտաւոր անյայտաղ իւրեանց շնորհակալիքը յայտնելու, ոչր վասն մենք կանխելով կը փութանք այս պարտինք ի դործ դնելու եւ կ'առաջարկեմք, որ Այլն եւս քան զեւս երախտապարտ պիտի կացուցանէք եթէ բարեհաճիք յանուն լուսաւորութեան ազգային նորասթափ երիտասարդաց եւ ի նպաստ յառաջդիմութեան ուսումնատենչ մանկանց՝ երկու նոր թերթ հրատարակել, մին շաբաթական՝ երիտասարդաց համար, առաջին երեսն Ազգ. լուրերով, միջին երեսքն նամականեօք եւ կարեւոր յօդուածներով եւ վերջին երեսն քաղաքական նիւթերով զարդարելով: Իսկ երկրորդ թերթն ամսական՝ գալորդական մանկանց համար, Ազգ. համառօտ լուրերով, ուսումնական եւ քաղաքական նիւթերով զարդարելով եւ զանոնք աժան գնով ծախելով (առաջնոյն դինը 2 մեծիտ, իսկ երկրորդինը 1/2 մեծիտ առնելով), որպէսզի այն լուսումնածարաւ աղքատիկ մանկտին որ լրագիր կարդալու խիստ անձկալրեաց է, բայց ազգ. լրագրաց սղազնութեան պատճառաւ կամ բնաւ չընթեռնոյր եւ կամ օտար թերթերու կը դիմէ, Ձեր Ազգանուէր ընկերութեան շնորհիւ իւր պատուքն մեղմացնելու բարեբախտութիւնն ունենայ: Արդէն լիայսս ենք, որ Ձեր այս օգտակար ձեռնարկը մեծ ընդունելութիւն գտնելով եւ

բազմաթիւ բաժանորդներ շահելով թէ՛ ինքն պիտի օգտի եւ թէ մանկունք Հայաստանեայց : Ի վաւերացումն բանիս կը խոստանամ իմ ովսանն տասնական բաժանորդներ գտանել երկու թերթից միայն քաղաքիս մէջ.— Արդ ազգային ողջամիտ երիտասարդներէն կը խնդրուի որ այս գործոյն կիրառութեան եւ ի կատար յանգման համար ինքեանք եւս հարկ եղած ճիշդ չխնայեն :
Որով մնամ ակնկալու գործադրութեանն առաջարկիս եւ բարեմաղթող յաջողութեան գործոցդ :

«ՄԱՄՈՒԼ», Իւ 786, 1881, Կ. Պալիս

Մ. Ս. Ս. ՄԻՆԱՍ

15.— ԿԻՎԻԿԵԱՆ ՍՈՒՐՀԱՆՌԱԿ

Կիւրիս, 8 Յուլիս 1881

Բ.

Մկրտիչ Կաթողիկոսի երեք օգտակար գործերը, — Վիճակային երեսփոխորդը Սիս.— Կիւրիսի բնակիչը.— Քարողիչ վարդապետ մը.— Հեռադրաց տնկանոնութիւնը :

Կիւրիկոյ Վեհ. Կաթողիկոսը քաղաքիս ազգայնոց երեք բարիքներ ըրաւ. Ա. արդիւնց հարսանեաց մէջ օղիի գործածութիւնը : Բ. արդիւնց նուազն բոլորովին հայոցս համար՝ որ թէ նիւթապէս եւ թէ բարոյսապէս նպաստեց ազգայնոցս՝ որ ուրանալն արդարութեան դէմ է : Գ. Չախճոր եւ Ղարա թէփէ թաղի մէջ հաստատեց աղջկանց վարժարաններ, որոնց անունն լսեցինք բայց...

Քաղաքիս մէջ ոմանք կ'ըսեն թէ Վեհափառ Կաթողիկոսը ինչ ինչ անվայել թերութիւններ ունէր... բացի արծաթսիրութենէ, բայց ես պիտի չխօսիմ այդ մասին :

*

**

Ա. Կաթողիկոսը Սերասոխայէն դառնալով Տարեհատէ, Էլպիսթան, Եփրատս, Ուլիսիս եւ Գերմանիկ հանդիպելով Հոկ. 15 Սիս դռնուեցաւ, եւ ինչպէս ձեզ հաղորդած էի դումարուեցաւ վիճակիս երեսփոխանական ժողովը ի Սիս, 36 անդամներով եւ զբաղեցաւ հետեւեալ խնդիրներուն հինգ նիստերու մէջ :

- Ա. Խնդիր Կաթողիկոսական իրաւասութեանց :
- Բ. Յարաբերութիւն ընդ կեդրոնական վարչութեան :
- Գ. Նորոգութիւն աւերակաց Ս. Աթոռոյն :
- Դ. Տարեկան եկամտից Ս. Աթոռոյն :
- Ե. Կարդադրութիւն եւ միաբանութիւն ժողովոց Ս. Աթոռոյն :
- Զ. Առանձնաշնորհութիւն Կաթողիկոսութեան ի Բ. Դռնէ :

Այս 6 խնդիրներն արձանագրուելով ընդարձակ ալ տեղեկագիր մը յինուած է, որ Ն. Վեհափառութիւնը անձամբ Պոլիս բերած է վարչութեան : Պ. Խմբադրապետ այս տեղեկութեանս ստուգութեանը վրայ վստահ եմ՝ բայց սա հետեւեալ կէտը ի լրոյ իմացած եմ եւ ձեզ հաղորդել արժանի կը համարիմ : Ս. Մկրտիչ Կաթողիկոսի դահակալութենէ մինչ 15 Հոկտ. 1880 Ստոյ Ս. Աթոռոյն 2700 լիւրա ծախք եղած է եւ միայն նոյն միջոցին 2200 լիւրա եկամուտ ունեցած է, եւ այս հաշուով 700 լիւրա պարտք ըրած է Ստոյ աթոռը :

ու սոյն դումարն ալ վեհ. Մկրտիչ Կաթողիկոս իւր քօակէն տալով Աթոռոյն նուիրած է՝ եթէ ստոյգ է այս լուրը յերաւի դովհատի արժանի է Մկրտիչ Կաթողիկոսը:

Այս մասին այսքանով կը բաւականանամ առ այժմ:

Կիւրինի ժողովուրդը քարոզասէր է, բայց չգիտեմ թէ ինչու այս փոխ առաջնորդ Արժ. Յովհ. վարդապետի քարոզէն գանդատ կ'ընէ. արդեօք ատենարանին երկար խօսի՞լն է պատճառը՝ թէ ուսումնական կամ վոլթէրի եւն.ի անուններն շատ կրկնելուն ժողովրդեան չհասկնալն է, այս կէտը զիս պարմացուց, բայց քննելով հասկնալ եւ ձեզ գրել կը խոստանամ:

**

Կիւրին 2500 տնէ բաղկացեալ քաղաք մը ըլլալով 1500ի մօտ լուսաւորչական հայ, 700 թուրք, 75 բողոքական եւ 50 տուն ալ հռոմէական հայ դանուիլը կարծեմ ձեզ ծանօթ է, լուսաւորչական հայերն ունին 4 եկեղեցի, 12 քահանայով եւ 6 ալ վարժարան, 9 վարժապետ կամ օղնականներով, բողոքական հայերն ունին երկու աղօթարան 2 քարոզիչ եւ 3 վարժարան, հռոմէականներն 2 եկեղեցի եւ մի վարդապետ, բայց դպրոց չունին եւ տղայք լուսաւորչականաց դպրոցը կը յաճախեն մասամբ:

Այս եկեղեցեաց եւ դպրոցներու վրայ հետզհետէ կարեւոր տեղեկութիւններ պիտի հաղորդեմ. եւ ապա պիտի սկսիմ Կիլիկիոյ ուրիշ քաղաքներունը:

**

Կիւրին հեռադրական թիւը 1879 Հոկտ. 13ին հաստատուեցաւ բայց եւ այնպէս կրնամ ըսել թէ չկրցաւ վաճառականաց կարեւոր խնդիրներն ընդ հուպ իւր տեղերն հասցնել: Կիւրինէն Այնթապ տրուած հեռագիր մը 8, ուրիշ մը 11, երրորդ մը 5 օրէն հասաւ: Մարաշ, Բերիա եւայլն տրուած հեռագիրներ շատ անգամ 8-10-15 օրերէն հասած են: Մարաշէ մի կարեւոր հեռագիր 17 օրէն հասաւ հոս՝ վերջապէս օսմանեան հեռադրատանց մէջ մեծ անկարգութիւն տիրած է եւ պաշտօնեայք ըստ ամենայնի անտարբեր են իւրեանց պաշտօնի մասին, վասն որոյ խնդրեմ՝ այս մասին հաճեցէք հեռադրական տեսչութեան ուշն ու զրուշն հրաւիրել, զի տէրութիւնն ալ կը վնասի այս անտարբերութենէն ըստ որում վաճառականք պարտաւորուած եւ ստիպուած են բահելով զրկել իւրեանց կարեւոր խնդրոց լուրերն, այս օրերս մուհաճիրներու ալ խարդախութիւնները երեւան ելլել սկսան, սակայն կառավարութեան պաշտօնեայք ծածկել կ'ուզեն, այս մասին, գրել կ'ուզեմ սակայն ատենս անձուկ է, առ այժմ ընդունեցէք Պ. Տնօրէն յարգանքս, ձերդ

«ՄԱՄՈՒԼ», ԺԳ. տարի, քիւ 782, Կ. Պոլիս, 1881

ՄԻՀՐԴԱՏ

16.— ԿԻԻՐԻՆ

6 Ապրիլ 1884, Կիւրին

... Խմբադիր Տէր

Յայսմ նուագի եւս կրկին մի քանի ուրախալից դէպքեր աւետելու բա-

ութխաութիւնն ունենալով՝ ապիկար գրիչս յասպարէզ կը մղեմ, ոյր վասն եւ Ձեր ներողամտութիւնը կը հայցեմ :

Ա. Կիւրնոյ վարժարանաց մի քանեաց վիճակին վերայ արդէն փոքր ի շատ է տեղեկութիւն հաղորդած եմ Ձեր պատուական Հանդէսին, բայց նոցա անբարեօք, կացութեան համար միշտ վշտացած եմ, փառք Անեղրին, որ հաճեցաւ հուսկ չնորհել մեզ բարեօքման պաշտօնեաներ, մի ուսումնական խորհուրդ՝ որ հինգ անգամէ կը թաղկանայ, եւ վարչական ժողովոյ ընտրութեամբ ի պաշտօն կոչուելով խղճի մտօք ձեռնարկեցին իրենց պարտիքը կատարելու՝ այցելելով Ազգ. վարժարաններն եւ նոցա բարեկարգութեանց համար հարկ եղած տնօրէնութիւնը ընելով ու Հոգաբարձութեանց հաղորդելով :

Ահաւասիկ յիշեալ անդամոց անուանքն : Մ. Ս. Էֆ. Մինասեան, Մ. Յ. Էֆ. Փիրանեան, Մ. Գ. Էֆ. Թօփալեան, Մելքոն Էֆ. Բիւրքճեան, Թաղէոս Էֆ. Փիրանեան,

Թէեւ այս նորակազմ Ռեսումն. Խորհրդոյ պատուարժան անդամներն ըստ կարի մտադիր են իրենց պաշտօնն անթերի կատարելու, սակայն Կիւրնոյ յետադիմութեան պատճառ եղող պանդխտութիւնը վաղ ասոնցմէ մի քանիսն ալ իւր թունաշաղտիս զիրկը հրաւիրեց, որով եւ յառաջդիմութեան անիւներն դանդաղեցան :

Բ. Նոր տարւոյ Հանդիսին ցնծութեան ոստն արդէն ձօնեցինք ձեզ, կը մնայ արդ ձօնել սրբոց Վարդանանց Հանդիսի բերկրութեան դափնին, որ վերընձիւղեցաւ ի Մայր եկեղեցի, կրկին Լուսաւ. Թանգարանի ընկերութեան Հոգաբարձութեան հովանաւորութեամբ եւ նորա վարժարանի սանուց ատենարանութեամբ : Կանխիկ հրաւիրադիրներ զրկուեցան արժանաւոր անձանց եւ ժամը 5-ին եկեղեցոյ կոչնակն սկսաւ հնչել, եւ հասարակութիւնն խոնիլ ի Հանդիսատեղին. ժամը 5:30-ին հանդէսն սկսաւ ընդ նախադահուութեամբ Գերաշնորհ Փոխ. Առաջնորդին եւ ներկայութեամբ մաքրակրօն քահանայից, պատկառելի սրբաց եւ ուսումնատենչ ժողովրդոց, սկսաւ դասատուի յառաջարանութեամբ, ապա՝ երկու աշակերտներ ատեն ներկայանալով հանդէսին կարեւորութիւնը բացատրեցին (մին հերքելով եւ միւսն հաստատելով) : Յետ այնորիկ Թատրոնաձեւ խօսակցութիւններ եղան՝ սրբոց Վարդանանց հասարակութեան վերայ զգալի զաղափար մը ընծայելու համար, եւ այս խօսակցութիւնը կատարեցին հինգ աշակերտներ, յորս Վարդան Տէմիրճեան առնուն աշակերտը իւր կենդանի շարժումներով աղի արտօսը շարժեց համայն Հանդիսականներն : Մի քանի ձառեր կարդացուեցան եւ ընկերութեան Ատենադեան շնորհակալութիւն յայտնեց ունկնդրաց՝ իւրեանց յօժարակամ ունկնդրութեան համար : Հանդէսն կնքուեցաւ Գեր. փոխ. Առաջնորդի յորդորական բանիւք եւ օրհնութեամբ : Յիրաւի ասելով՝ ամէն ունկնդիրներն ըզդածուեցան, զի քան դառաջինն չքեղ եղաւ թէ՛ ունկնդրաց բազմութեամբ եւ թէ՛ ատենախօսութեամբ, վերջացաւ ի ժամ 8:30-ին :

Գ. Քննութիւն եւ պարգեւաբաշխութիւն Ռեսումնասիրաց Ընկ. Մայր վարժարանի սանուց, որ կատարեցաւ նոյնպէս ի Մայր եկեղեցի. հրաւիրուելով էին քաղաքիս դասատուներն եւ ծնողք սանուց : Վարժարանի դասատուն Պ. Նշան Չատրճեան ձայնաւոր լինելով եւ այն պաշտօնի համար իսկ ընտրուած լինելով, թէեւ քննիչք միայն ձայնաւորութիւն կակնկալէին, բայց անկեղծ ասելով՝ սանունք ուրիշ ուսմանց մէջ եւս մեր յուսացածէն աւելի յաջողակ դասուեցան : Քննութիւնը տեղի ունեցաւ Մարտի 15-ին, իսկ Մարտ

22-ին կրկին ի նոյն անդի պարզեւարաշխութեան հանդէսը կատարուեցաւ . եւ այսպէս ժողովուրդն սկսաւ սթափիլ իւր խոր քնէն : Ուրեմն յառաջադիմութիւն մաղթելով հանուրջ Հայոց , կնքեմ խօսքս՝

«ՄԱՄՈՒԼ», ժԳ. տարի քիւ 803, 1881: Պոլիս

Մ. Մ. Ա. Զգօնեան

17.— ԿԻԼԻԿԵԱՆ ՍՈՒՐԶԱՆԴԱԿ

22 Օգոստոս 1881, Կիրիմ

Գ.

1. Կիրիմի վարժարանաց վիճակագրութիւնը .— 2. Առեստի նուագութիւնը .— 3. Հասանքի վնասը .— 4. Զարմանալի դատաւար մը .— 5. Նոր ընկերութիւն մը .— 6. Նոր վարժարան մը :

Պարոն Խմբագրապետ,

Ինչպէս մեր նախորդ յօդուածով յիշեցինք, այժմ Կիւրին 6 վարժարան ունի, որուն վիճակագրութիւնը ընենք հոս եւ դուք ընթերցողաց հետ ուշադիր եղիք :

1. Մեսրոպեան վարժարան .— Այս վարժարանը Զախճոր թաղի Սրբ. Փրկիչ եկեղեցւոյ սրահին մէջ երկուքի բաժնուած վարժարան մի է, մին ուսումնարան եւ մին ընտելարան . ուսումնարանի մէջ կ'ուսանին 50 աշակերտ՝ ընդ դասատուութեամբ Պ. Սարգիս Խումթեանի, եւ ընտելարանի մէջ կ'ուսանին 100-էն աւելի մատաղ սանունք, որոց (թէ՛ ուսումնարանի եւ թէ՛ ընտելարանի) երաժիշտ դասատուն է Պ. Յակոբ Գերմանիկցի եւ ընտելարանի օգնական Պ. Թադէոս Ժամկոչեան, կայ մի ալ աղջկանց վարժարան, ուր կը յաճախեն 20-էն աւելի աղջկունք . այս երեք վարժարաններն, որ մի հաշուած ենք, երկսեռ է, 170-էն աւելի ուսանողներ կը յաճախեն եւ 4 պաշտօնեայ ունի, որոց կը վճարուի տարեկան աւելի քան 70 ոսկի, եւ այս ստակը կը տրուի նոյն թաղի Սիրալիը ընկերութենէ, եւ ուսանողք ազատ են դպրոցական տուրք վճարելէ :

Ըստ իս այս վարժարանը կը կարօտի ոչ-բժախնդիր հոգաբարձութեան — որովհետեւ լսած եմ թէ քանի հոգաբարձութիւն որ ունեցած է վաղուց ի վեր, բոլորն ալ բժախնդրութիւնը սկզբունք ըրած են — եւ առ նուազն 5 նոր դասատուներու, որով կարելի է բարեկարգուել, եւ բարեկարգութիւնը հեշտ է, մինչդեռ դրամական սակաւութիւն եւ ծնողաց հետ ստակի սակարկութիւն չկայ :

2.— Ռուբինեան վարժարան .— Խաս-Պաղ թաղի Լուսաւորչեան ընկ. թանգարանի մէջ բացուած է այս վարժարանը եւ 50 տղաք կը դաստիարակուին Պ. Մանուկ Զրօնեանէ եւ ունի մի ալ կառավարիչ, ըստ բաւականին բարեկարգ է այս վարժարանը, ունի փութաջան հոգաբարձութիւն մի, որն կը խոստանայ առաջիկայ Մայիս 1-ին աւելի բարեկարգել, որ աւելի բարեկարգ կրնայ ըլլալ եթէ Մինասեան՝ հոգաբարձութեան անդամ եւ Ա. պետ չըլլայ, (զի այսպէս կ'ըսեն եւ կ'ուզեն հաւատացնել կարգ մ'անձինք) : Այս վարժարանին ծախք կ'ըլլայ տարեկան աւելի 26 ոսկի, որոյ 18-ը մեծ դժուրութեամբ աշակերտաց ծնողներէ կը հաւաքուի եւ 8-ն ալ այս Լուսաւորչեան թանգարանի ընկերութիւնը կը վճարէ իւր սնտուկէն, թէպէտ աղքատ . սպասենք բարեկարգութեանը :

3.— Մայր վարժարան Ուսումնասիրաց.— Որ մայր եկեղեցւոյ սրահին մէջն է եւ Ուսումնասիրաց ընկերութեան խնամոց ներքեւ բացուած ու երկու մասի բաժնուած, մին ուսումնարան եւ միւսը ծաղկոց: Ուսումնարանի մէջ կ'ուսանին 50 աշակերտներ եւ կը դասախօսէ Պ. Նշան Չատրճեան (երաժիշտ) առանց օղնականի: Ընտելարանի մէջ կը դասնուին 100-ի մօտ մանկտիք, որուն կը դասախօսէ Պ. Կարապետ Մարաշեան. այս վարժարանաց Հոգաբարձութեան պաշտօնը Ուսումնասիրաց ընկ. անդամքը կը վարեն. Հոգաբարձութեան պաշտօնը գրեթէ այժմ Պ. Մատթիա աշխոյժ երիտասարդը կը վարէ, ըստ որում ուրիշ ընկերները կը բացակային:

Տարեկան աւելի քան 35 լիրա ծախք կ'ըլլայ, որոյ մէկ մասն կը հաւաքուի ծնողներէն, միւս մասն Մայր եկեղեցին կը վճարէ: Այս վարժարանաց բարեկարգութիւնն եւս կը կարօտի, առ նուազն երկու ուսումնական դասատուների, մին ուսումնարանի, մին ընտելարանի համար:

4.— Մարանեան վարժարան.— Այս վարժարանն եւս Մայր եկեղեցւոյ սրահին մէջ ըլլալով, Մարանեան գերդաստանի տնօրէնութեան տակ է: Հոս կ'ուսանին աւելի քան 30 աշակերտք, կը դասախօսէ Պ. Աւետիս Պեթիկեան, սակայն այս վարժարանին Ազգ. Պատմութիւնն անձանօթ է, բայց եւ այնպէս յանցանքը վարժարանին չըլլալով՝ դասատուինն է, վասնզի այս անձը եօթն ամաց յետէ Կիւզին դասատուութեան պաշտօն վարած է քանի վարժարաններու մէջ, այլ սակայն Ազգ. պատմութիւնն բնաւ չէ դասախօսած: Այս վարժարանն ունի երթեւեկ կառավարիչ մ'ալ եւ տարեկան 40 լիրայի մօտ ծախք կ'ըլլայ, որոյ մէկ մասն ծնողացմէ կը հոգացուի, միւս մասն ալ Մարանեան գերդաստանն կը վճարէ:

5.— Լուսաւարչեան վարժարան.— Էօրէն թաղի մէջ Պարթեւեան ընկերութեան շնորհիւ բացուած վարժարան մը, ուր կը յաճախեն 50 աշակերտներ. կը դասախօսէ Պ. Խաչեր Մանկրճեան. ունի Հոգաբարձութիւն մի. տարեկան 20 լիրա ծախք կ'ըլլայ, ընկերութենէ եւ ծնողներէ կը հոգացուի: Կը կարօտի մի ուսումնական դասատուի որ Պ. Մանկրճեան կառավարչութեան պաշտօնն վարէ, թէպէտ անձնուէր է:

6.— Ծաւրուլի վարժարան.— Ուր կը դասախօսէ Պ. Յակոբ Եփրեմեան, կը յաճախեն 30-ի մօտ սանունք: Եփրեմեանի տարեկանն է 24 լ. օսմ. այս դասարանին մեծ մասը Եողկաթ բնակող քանի մը հայրենասէր Տիարց կողմանէ կը վճարուի եւ փոքր մասն ալ ծնողներէ կ'առնուի: Այս մասին լաւ տեղեկութիւն չունենալուս՝ առ այժմ այսքան միայն կը գրեմ:

Պարոն Տնօրէն, ահա այս վիճակագրութիւնը մեզ կը ներկայացնէ, որ Կիւրիինի 6 անունով 9 վարժարանաց մէջ 12 պաշտօնեայ կը դասնուի եւ 480-էն աւելի ուսանողներ, չմոռնանք յիշելու որ 20-ի մօտ լուսաւարչական տղայք ալ բողոքականաց դպրոցը կը դաստիարակուին եւ այսպիսով ուսանողաց թիւը քան 500 է, որ ըսել է աղբայնոց երեք տնէն մի տղայ դպրոց կը յաճախէ եւ 1500 տնէ բաղկացեալ Հայոց դաստիարակուող 500 տղայոց համար 205 կամ 210 լիրա կը ծախսուի... Ընթերցողը կրնան մակարերել թէ, ո՞ր աստիճանի բարեկարգ վարժարաններ ունի Կիւրիին, ցաւալին այն է որ այս 210 լիրա ծախքին համար ալ ապահովեալ եկամուտներ յատկացուած չըլլալով՝ հոգաբարձուք միշտ խայտառակ վիճակի մէջ են՝ ծնողացմէ ստակ հաւաքելու մասին, մինչդեռ հեշտ միջոցներ կան եւ ունին ամէն վարժարանները բարեկարգելու, ապահովեալ եկամուտներ ունենալու եւլն. եւլն. վասն զի եթէ աղբայ-

նոց (Կիւրիւնի) դանձերն ի մի ձուլուին եւ կալուածներու տրուին, տարին առ նուազն 600 լիւրա եկամուտ բերող կալուածներու տէր կ'ըլլան եւ այս գումարն ալ թէ՛ դպրոցաց, թէ՛ եկեղեցեաց եւ թէ՛ ուրիշ ազգային ծախուց կը բաւեն: Այս ստիժիւ պիտի խօսինք ուրիշ օր մը:

Առեւտուրի նուազութիւնը: Պարոն տնօրէն, առեւտուրը բոլորովին դադրած է եւ ժողովուրդն շուարած է թէ ինչ դործով դրադի իւր օրապահիկն հայթայթելու համար, որ կողմ դառնայ վնասի կը հանդիպի, ուղղակի կամ անուղղակի տուրքերն օր ըստ օրէ կ'աւելնան, դիւղերն երթեւեկելու համար աղահոգութիւն չկայ, խեղճ հայ ժողովուրդը ամբի բերան մնացած է, եթէ Գիւղէն քանի մը գրիւ ցորեան բերելու համար ծրար մի ապրանքով Գիւղն երթայ, բոլորովին կը կողոպտուի եւ մեզ յիշեցնել կու տայ այն տաճկական առածը «Բալասա բիբիմնէ կիտէրիմէն Էվտէֆի պըլդուրտան օլտուֆ»⁽¹⁾ եւ շատ անգամ կ'ընդունած է, որ կառավարութեան բողոքել, աղերսել անօգուտ բաներ են, պաշտօնեայք իւրեանց քսական ուռեցնելու ճիգն ունին թէ արքունական գանձէն եւ թէ ստուապեալ ժողովուրդէն: Շատ մը ապրանքներ տարապայման աժընցած են՝ եւ կը գուշակուի թէ սնանկութիւնն ալ պիտի աժընայ, զգոյշ լիւր, Պ. խմբագրապետ, թերթերդ ապառիկ չտաս:

3. Հոսանքիմ վնասը.— Կիւրիւնի գրեթէ մէջտեղէն դեռ մը կ'անցնի, այս գետը ամէն տարի Մարտ կամ Ապրիլ ամսոյն մէջ յորդելով (ձեան հալելէն) մեծամեծ վնասներ կը պատճառէ, երբեմն ալ զոհեր կը տանի կ'ըսեն: Այս տարուան վնասը մինչեւ 1000 մէճիտի կը հասնի կ'ըսեն, բայց թէ ո՞ր աստիճանի ճիշդ է չեմ գիտեր:

4. Զարմանալի դատաւոր մը.— Կիւրիւն կայ զարմանալի դատաւոր մը, որ «Թուժճի» կ'ըսեն, ինքն Տարեհատեցի եւ թթասէր ըլլալուն համար: Անգամ մը խտարէի ժողովոյն մէջ իրեն անվայել ընթացից համար եղած մաղպաթան ստտիկանի ձեռքէն (չուրսը) առնելով կը պահէ եւ չտար, ժողովքը ատեան կանչելով մաղպաթան կ'ուղէ, բայց նա «պէնի մուհաքէմէ մի իտէճէքսինիզ» ըսելով խոյս կու տայ՝ թէպէտ երկրորդ մի կը շինուի, բայց ցաւ է ըսել թէ սպարդիւն կը մնայ, այս դատաւորը ցնորած կ'երեւի, եթէ ասոր քանի մի դործերու պատմութիւնը ըսեմ պիտի գարմանաք, սակայն կը վախնամ թէ ժամավաճառ է, ըսեն մեզ ընթերցողք: Անցեալ օրեր այս դատաւորը Պէտալէթի ժողովոյն մէջ դատի եկող գիւղացոյն քով կ'ելլէ եւ ձեռքը գիւղացոյն ծոցը խօթելով քսակը կը հանէ ու 30 դահեկան մէջէն առնելով կ'ըսէ գիւղացոյն՝ «պէնիմ ֆիլան ֆէօյլիտէ 30 դա. պաճաղք վարտըր, սէնտ՝ օնտան ալ»⁽²⁾: Ընթերցողք կ'ընան մակարերել թէ ինչ վիճակ, ինչ անդորրութիւն կ'ունենայ ժողովուրդ մի, որ այսպիսի պաշտօնէից ձեռքով կը կառավարուի: Այս անձը իւր դատաւորութեան առաջին պաշտօնն է որ հոս կը վարէ, ... «սափրիչութիւնը խեղճ կիւրիւնցուց դիտուն պիտի սորվի»:

5. Նոր ընկերութիւն մը.— Եաշ թէփէ թալը Մայր եկեղեցոյ, Շուրուլի կամ Էօրէնի դպրոցներէն բաւական հեռաւորութիւն ունենալուն, աղայք ո՛չ այն եւ ո՛չ այս դպրոց կրնային յաճախել եւ շատ մը աղայք առանց դատարակութեան մնացած են, վասն որոյ այս անտարբերութիւնն ալ յիշեալ թաղի պատուարժան ազգայնոց խիղճն խայթած ըլլալով, կարծենք Յունվար

(1) Բալասա բիբիմնի երթալով, տան մէջ եղած պուրդուրը կորսնցուցիմ:

(2) Այսինքն գիւղացիէն 30 դրուշ առնելիք ունիմ, դուն ալ գնա անկէ առ:

ամսոյ մէջ ընկերութիւն մը ըրին եւ 20—25 լրիւ գումար մը ունեցան ու անմիջապէս սկսան դպրոցի մը շինութեան, որոյ յաջողութիւն կը մտադրենք եւ կը խոստանանք այս ընկերութեան մանրամասն տեղեկագրութիւնը ընել ընկերութեանց տեղեկագրութիւնը ըրած միջոցնու ըստ կարգին:

6. Եւր վարժարան մը.— Մեր երկրորդ յօդուածով զբաժ էինք Կիւրինի Հոսովէական Հայոց դպրոց շունենալն. շնորհակալ ենք որ մեր անշուք դրութենէն դրդեալ դպրոցի կարեւորութիւնը զգալով Եաշ Թէփէ Թաղը տան մը մէջ դպրոց մի բացին Պ. Սարգիս Հարգուարթեան լուսաւորչական Հայն դասատու ընելով, ուր տեղ կը յաճախեն այժմ 30-ի մօտ աշակերտներ թէ լուսաւորչական եւ թէ Հոսովէական Հայերէն. այս դպրոցը տակաւին չկոչանք այցելել եւ մանրամասնութիւնն իմանալ, սակայն խոստում մ'ալ ասոր կ'ընեմ. կ'ուզես հաւատայ, չես ուզեր վերջէն կը տեսնես. կամքդ գիտէ:

Ան այժմ Պ. Խմբագրապետ այքանով մենք այս անգամի կը բաւակա- նանամք ուրեմն եւ դուք ալ բաւականանալով տուէք Մամլոյն, որ նա եւս հա- ղորդէ ընթերցողացդ:

Բարեկամդ՝ ՄԻՀՐԳԱՏ

14 Ապրիլ 1881, Կիւրին «ՄԱՄՈՒԼ», ԺԳ. Տարի, Թիւ 812, 1881 Պոլիս.

18.— ԿԻԼԻԿԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ԺԲ.

... Խմբագիր

Ուշ դիր պահիկ մի ինձ եւ գրեմ, անցեալները տեղի ունեցաւ Ուսում- նասիրաց վարժարանի քննութիւնն եւ պարզեւարաշխութիւնը՝ նոյնպէս եւ Ռուբինեան վարժարանի քննութիւնն եւ պարզեւարաշխութեան հանդէսը, արդարեւ երկոցունց հողաբարձութեանց եւ դասատուաց շնորհակալութիւն յայտնել պարտաւոր ենք. զի երկու հանդէսներու մէջ եւս քանի մի տղայոց կարգացած ճառերն եւ ասեմախօսութիւնները զմայլեցուցին հանդիսականները եւ մեծապէս գոհ ըրին, սոյն երկու քննութեանց եւ հանդիսից նկարագրութիւնը մի ուրիշ աղագայն զբաժ լինելը լսելով կը բաւականանամ այս չափով:

Ռուբինեան վարժարանի հողաբարձութիւնը այսօր խմբովին հրատարած է, նոյնպէս կը լսենք թէ յիշեալ վարժարանի Լուս. Ընկերութեան Ընդհանուր Ժողովոյ անդամոց մէջ մեծ փոփոխութիւն եղած է, եթէ մի օգտակար հետեւութիւն ունենայ պատրաստ ենք հրատարակ հանել:

Խասարաղ Թաղի մէջ կայ մի այնպիսի հրէշ-մարդ որ Լուս. Թանգարանի ընկերութիւնը եւս տասլալելու փափաք ունի, ընկերութեան ստակները կոկորդը անցուցած չուզեր վճարել, առանց ընկերութեան անդամ ըլլալու, անսոթօթարար հաշիւ պահանջել կը յանդգնի, կը կարծուի թէ ընկերութեան Ժողովոյ պաշտօնեաներու փոփոխումը այս հրէշի պատճառաւ է: Այժմ ընկերութիւնը հրատարակաւ կը յայտարարէ թէ իւր նոր դիւանն կազմած է: Ընդհանուր Ժողով՝ Մեծ. Մ. Սարգիս Ա. Միմասեան՝ Ատեմապետ, Մեծ. Գրիգոր Տէր Արքահամեան՝ Ատեմաղայիր, եւ Մեծ. Յակոբ Ժամկոչեան Գանձապետ, եւ կը խնդրէ նուիրատու ազգայիններէ որ ուրիշ տեղ ընկերութեան անուան որեւէ նուէրներ չտան, արդէն ընկերութիւնը մտադիր է մէն մի տարի (Մայիս 1) ընկերութեան ելեւմտից տեղեկագիրն հրատարակել:

Այս օրեր կինէ քահանայից խոսովութիւն ապաշխարանք մէկզմէկ ան-
ցան: Կիւրինցին օրինաւոր եւ ուսեալ քահանայ մի ունեցաւ Արժ. Տ. Խորէն
քահանայ Գիզիրեան, որ նաեւ նախադուշակութիւնով մեկնեցաւ Տէնէք Մա-
տէն, այժմ Կիւրինի ժողովներ, կրօնականներ, իշխաններ եւ բացառութիւնը
յարդեղով դպրոցներ «Քիւրտ չալար Զինկեանի օյնար» է, կը տեսնուինք վեր-
ջէն:

ՄԱՄՈՒԼ, 1882, քիւ 946

Մնամ յարգանք՝ ՄԻՀՐԴԱՏ

Բ.

'Ի-րդ կրկնութիւն խնդրանաց.— Սահմանադրութեան արդիւնքը.—
Յանկ մեռելոց.— Թշուառութիւն:

1.— Տեսնելով ձեր յամառութիւնը մեր Դ. եւ Զ. յօդուածներու հրա-
տարակութեան մասին, պարտաւորութեանք կասկածիլ թէ՛ դուցէ կորսուած
են մեր սոյն յօդուածները. եւ ահաւասիկ այս անգամ ղրկեցի ձեզ Դ. յօդուած-
նուս երկրորդ պատճէնը, այս չորրորդ անգամ խնդրելով որ բարեհաճիք հրա-
տարակել, զի ինչպէս նախորդ յօդուածով ըսի, մեր յօդուածները մեծի մա-
սամբ պանդխտութեան մէջ դանտուղ Կիւրինցի երիտասարդաց իրենց հայրենի-
քէն տեղեկութիւններ տալու կը ծառայէ:

Մեր դործին դառնանք:

2.— Խէրն անիծած Սահմանադրութիւնը Կիւրինի զլխուն չորսու մը
պիտի հիւսէ ամա, պէտք է սա մէկ երկու ամիսն ալ անցնենք. կազ եւ կոխ,
երկպառակութիւն եւ խոսովութիւն յառաջդիմական մեծ քայլեր առնելու
սկսան. կը փափաքինք որ այդ մեծ քայլերը շարունակելով դուրս ելլէին քա-
ղաքէն եւ դերերնին ուրիշ տեղ լրացնէին:

3.— Եթէ մէկ երկու տեղեկութիւններ տլ տամ պարտքէս կ'ազատիմ:

Ա. Մեռաւ Երեսօրխանական ընդհանուր ժողովը, կեանքը Քաղաքական
ժողովոյ:

Բ. Մեռաւ Ուսումնական խորհուրդը, կեանքը վարժապետաց:

Գ. Մեռաւ Կեդրոնական սնտուկը, կեանքը ընկերութեանց: Ժ. յօդուա-
ծով պիտի սկսինք տեղեկութիւն տալ Կիւրինի Ազգ. ընկերութեանց վիճակէն:

Դ. Մեռաւ Տ. Մովսէս քահանան, կարգը միւսներուն... հա՛ իրաւ,
կեանքը պիտի ըսէի, ներեցէք:

Տակաւին 16 հատ ալ հոգեւարքի մէջ հիւանդ կայ, անոնց վրայ ալ կը
խօսինք հետզհետէ. Աստուած երկու բարիէն բարի մը տայ, եթէ ոչ այս հարս-
նիքին հարսը չ'ելեր...:

4.— Ինչպէս Ը. յօդուածովս ըսի, Կիւրինի աղքատաց թիւը օր ըստ օրէ
բազմանալու վրայ է, վասն որոյ եւ կազմուեցաւ մասնատողով մի: Պատուար-
ժան մասնատողովը անմիջապէս ձեռնարկեց հանգանակութեան դորձոյն, որոյ
դումարն՝ մինչ 8 Յունուար, հասած էր 100 Օսմ. ոսկւոյ եւ հետզհետէ աւել-
նալով, մինչ այսօր դրեթէ 150 ոսկւոյ մօտեցաւ, պատուարժան մասնատողովը
մտադիր է փոխել այս դումար ցորեանի եւ բաշխել աղքատաց. այս դումարով
կրնայ առնուիլ իբր 1500 դրիւ ցորեն. յաջողութիւն կը մաղթենք սոյն բարե-
նպատակ դործին, բայց եւ այնպէս չենք ալ կրնար լռութեամբ անցնիլ այն
Թշուառութեան վրայ որ կը կրեն աղքատ բնակիչք. բազմաթիւ ընտանիքներ

զրկուած են երկար օրերէ հետէ տաք սպուրչ սը. ցուրտը խստաշունչ է, բայց զուրկ են ածուխէ եւ փայտէ. մասաղ սղայքներ ցրտէ կը դողդղան, չունենալով մինչ խի ոտքի կօշիկ մի եւ անօթութենէ կը նուաղին չգանելով չորաբեկ հաց մի. արքունական տղոց համար խստութիւն կը բանեցուի եւ հաց երազողներ կը բանասարկուին. ի՞նչ ընէ խեղճ ժողովուրդ. հաց չունի, զգեստ չունի, ածուխ չունի եւ որ էականն է գործելու գործ չունի. Կիւրինցին՝ որ իւր ապրուստը վերջերս դօտեգործութեան մէջ գտած էր, անոր առուտունն ալ բոլորովին դադրած է. ի մի բան մոռցած է այն աղքատաց թշուառ խումբը թէ ինչ գոյն ունի արդար մէծիտն եւ Ս. լիրան: Սիրելի ընթերցող, եթէ այս թշուառ ընտանեաց մի քանիսի դարմանալի եւ ողբալի պատմութիւնը ընեմ, որչափ ալ քարսիրտ ըլլաս, պիտի արտասուես... սակայն այժմ լռելեայն կը տանիմ «Աստուած իմ Յիսուս, փութա օգնութեան» գոչելը բաւ համարելով:

Եթէ վստահ ըլլաս թէ Կիւրինցի պանդխտեալ երիտասարդութիւն գո՛հ կ'ըլլայ, դրելու կարեւոր նիւթերս բազմաթիւ են, բայց ժամանակս սուշ. պէտք է գիտնան թէ՛ գոհողութիւն կ'ընէ Հայ երիտասարդաց բարեկամն՝

«ՄԱՄՈՒՎ», ԺԴ. տարի, Թիւ 894, 1882, Պալիս

ՄԻՀՐԴԱՏ

19.— Կիլիկեան Սուրիանդակ

18 Յուլիս, 1882

Գ.

... Խմբագիր

Գիեմ, երկայն ատեն լռեցի, սակայն ներողութիւն կը հայցեմ, վասնզի ատենէ մը ի վեր ստիպուած եմ ուրիշ գործով զբաղիլ: Մտադիր էի թէեւ քաղաքիս ընկերութեանց վրայ խօսիլ, բայց այլ եւ այլ պատճառներով ուրիշ անդամի թողուցի. հիմա ունինք օրուան խնդիրներ՝ որք անհրաժեշտ պարտք կը դնեն մեր վրայ դրելու:

1.— Կարծեմ Մանգուսէի 6842 թուոյն մէջ էր, որ կարդացի Կիւրինէն գրուած նամակ մի, Նշան Չատրըճեան ստորագրութեամբ, որ քաղաքիս երաժշտապետն է, Պ. Նշան կը գրէր տեղակալ Մէհմէտ Ալըմ պէյի ազգային վարժարան տուած այցելութիւնը եւ խել մ'ալ անխորապէս մանխորապէս շարած էր, որով ընթերցող հասարակութիւնը պիտի խաբուի թէ՛ Կիւրինցին արդարասէր դայմագամ մը ունի, մինչդեռ նորա ունեցած ու բռնած ընթացքը հակառակը կը հաստատեն...:

2.— Բայց ի՞նչ ըսենք նորեկ դատաւոր Սասունի զատէ Հիւսէին էֆէնտի որ վեհանձն, ծանրաբարոյ եւ արդարասէր անձ մի է. չ'ուզեր զատուիլ Նիզամէ եւ միշտ իւր խօսքն եղած է «Քեօթիլէ սահիպ չըգմայըն, քեօթիլէր քերպիլէ օլաուն, տէվլիքին էմրի եէրինի պուլաուն»⁽¹⁾ արդարեւ Հիւսէյին էֆէնտի մեծ յոյս կու տայ մեզ թէ բարեկարգութեան բարեկամ եւ օրինաց գործադիր մըն է:

3.— Ուսումնական խորհուրդը քիչ մը սթաիեցաւ թմրութենէ. բայց չդիտենք թէ յարատեւութիւն պիտի ունենա՞յ: Ազդ. Քաղ. Ժողովը Աստուծոյ էմանէթ, անխոնջ կ'աշխատի, կ'ուզէ ազգին օգուտ ըլլայ, կ'ուզէ վնաս. եօթը անդամներէ երկուքը մնացին, ատեան կը բանան, ասեան կը դոյցեն, գործ կը

(1) Չաքին օգնական մի ըլլաք, չարքը քոյ կրքուին, պետութեան հրամանը իր տեղը քոյ գտնէ:

տեսնեն եւ նամակներ կը դրեն մին փ. Ատեապետ եւ միւսը փ. Ատենադպիր ստորադրելով. արդեօք ասոնց ժողովականն ո՞վ է :

4.— Գաղաքիս մէջ լսարաններ կը բացուին, ատենախօսութիւններ կ'ըլլան, սակայն անդին եօթնամեայ վարժապետը՝ ճրի քարոզ չըլլար ըսելով ունկնդիրները կը վռնտէ... եթէ ատեն ունենայի պիտի դրէի երկար, բայց այս վերջնոյն բաղդը յաջող է եղեր :

5.— Յունիս 27-ի էր կարծեմ, Արապեան-Պարոնեան վարժարանի իննամսեայ քննութիւնը տեղի ունեցաւ ի ներկայութեան բազմաթիւ անձանց : Աշակերտք երեքիսուսեան դասերու մէջ միանգամայն շատ յաջողակ եւ դոհացուցիչ էին : Արզարեա Պ. Ն. Թէրզեանի անձնուէր աշխատութիւնը մեծ դոհունակութեան արժանի էր, որն արդէն հանդիսականաց դէմքին վրայ նշմարուած փայլը կը վկայէր, եթէ չեմ սխալիր պիտի համարձակիմ ըսել թէ Կիւրիինի մէջ տրուած քննութիւններուն առաջինը համարուեցաւ աշակերտաց վարժ եւ քաջ սրտասխաններուն համար . կ'ողջի մանրամասն գրել, բայց լսեցի թէ ուրիշ մի ազգային դրած է սոյն քննութեան մանրամասնութիւնքը :

«ՄԱՄՈՒԼ», Թիւ 933, 1882, Պոլիս .

ՄԻՂԻԱՏ

20.— ... Հետեւեալ սրտամոլիկ նամակներն Կիւրիինէն մեզ դրկուած ըլլալով, կը փառքանք հրատարակել եւ Ազգային վարչութեան խորին ուշադրութիւնն հրաւիրել յիշեալ անձին ազատութեանը համար :

12 Նոյեմբեր 1882, Կիւրիին .

... Խմբագիր «Մամուլ» հանդէսի, Գ. Այվազեան, ի Պոլիս,
Ազգասէր Տէր,

Ձեր՝ որ նուիրական պաշտօն եւ սկզբունքն է, ամէն հայ անհատի բըռնարարեալ իրաւունքն պաշտպանել՝ մեզ կը պարտաւորէ, Ձեր Ազգասիրութեան ներկայացնել, աւելի քան 18 ամիսէ ի վեր Սեբաստիոյ բանտերու խորը հառաչող Մարտիրոս Գասպարեան Բալսեանցի ողորմելի վիճակը, որ այսքան միջոցին ոչ Պատրիարքարանէ եւ ոչ Սեբաստիոյ Գեր. Առաջնորդէ փոյթ չէ ապրուած : Սոյն երիտասարդի մեզ ուղղեալ երկու նամակները ներփակեալ ձեզ դրկելով, ձեր ուշիմ ուշադրութիւնը կը հրաւիրենք այս կէտին վրայ, խնդրելով որ ամէն ջանք եւ զոհողութիւն ի դործ դնէք, այդ ողորմելի երիտասարդն ազատելու համար եւ հրաւիրէք ուշն եւ զրուշն անոնց, որոց որ անկ է : Մեր կողմանէ այս չափն բաւ համարելով կ'ըսենք թէ արդէն մանրամասնութիւնք պիտի դանէք իւր նամակներէն՝ ուստի եթէ յարմար դատէք թէ ներկայս եւ թէ նոյն նամակներու յարմար տեսնուած մասերն հրատարակելու շնորհն ընէք, Ձեր հանդէսի մէջ, որով Ձեր նուիրական պաշտօնն կատարած եւ զմեզ շնորհակալ ըրած պիտի լինիք :

Մնամք յարգանքով, ձեր բաժանորդներն ի Կիւրիին
Ս. Յ. ԹէրձԱՆՅԱՆ, Մ. Ս. Ա. ՄԻՂԻԱՍ

Սիվադու կառավարութեան լրանոր

1882 թիւ 25 Հոկտ .

Սարգիս աղա Մահտեսի Մինասեան եւ Սահակ աղա Հաճի Թէրճանեան
(Խորին աղերսանք)

Ազնիւ եւ ազգասէր աղայքս, Սեպտ. ամսոյ դրած աղերսագրիս պա-

տասխանին կարօտով կը սպասեմ, բայց լուր մը չառայ երեւումէ մեր աղերս, չի ունդունելով թերի պիտի թողնուք. բայց ի սրտէ կը պաղատիմ, ո՛հ կ'աղերսեմ. խորին հառաչանօք կ'աղաչեմ, խնդիրս կատարելու փոյթ ունեցէք, թէ որ ձեզմէ ալ յոյսս կտրեմ, ապա որին դիմեմ կ'աղաչեմ, եղբա՛րք, որքան թշուառ պանդուխտ հայ մը եղայ, ուր որ ձեռք կը մեկնեմ նէ լուկ կը մնայ, ո՛հ, կրկին կ'աղաչեմ իդձո կատարեցէք հայ եմ եւ պանդուխտ, մեր ազգութեանը անվայել է, որ պանդուխտ մը այնքան հայաբնակ երկրում բանտի մէջ ձեռները ծոցին ստակի համար մնայ կարօտով, ով ազնիւ աղայք, կրկին երասանկեալ ձեր ձեռք եւ ոտք կը համբուրեմ ի սէր ազգութիւնը աղաչանքս լսէք ու պանդխտութիւնս խնայէք, եւ մանաւանդ Քրիստոսի կենարար Սուրբ Խաչի սիրուն այս գրաբեր Սալիշովն մեզ պատասխան ըլլալ կամ չըլլալն ինձ չէք գրեր, Մաթէոս աղային գրէք կամ Սաչիկ Մանիգեգեղեանին գրեցէք, փերջապէս թերեւս հաստատ յոյս դնելով ձեր խնամոցը կը սպասեմ. կրկին կ'աղաչեմ եւ կը խնդրեմ այս անգամս սպասելու չի թողուք, ողջէք եւ ողջ լինիք ձեր յարատեւութեանցը ցանկացող Ռուսեացի Մարտիրոս բալեց իշխանի, չգիտեմ ինչպէս գրեմ եւ ինչպէս աղաչեմ որ խեղճութիւնս եւ պանդխտութեանս վրայ ցաւիք. քովս չէք, որ ձեր ոտքը համբուրեմ, ելլեմ ձեռքներդ համբուրեմ ու լամ արտասուօք ոտքերներդ լուամ. ով ազնիւ աղայք այս որքան գէշ բախտ ունեցեր եմ. որ իմ քաղցրիկ ջուրս լեզի դարձուցի. առ այժմ էս ի՞նչ ընեմ, ո՛ւր դիմեմ, որուն աղաչեմ, որուն պաղատեմ, մնացած եմ չփոթուած, ո՛հ իշխանք խորունկ կավի մէջ ընկած եմ ձեռքէս բռնիք ազատէք. ձեր ծնողացը սիրուն եւ ձեր արեւուն, ինձ նպաստէք, դառնարտասուօք գձեզ կ'աղերսեմ:

Բարձրապատիւ հաճի Մարգիս աղա Մինասեան եւ Սահակ էֆէնտի հաճի Թէրճանեան, ըստ սիրոյ եւ յարգանաց բարեւ.

«ՄԱՄՈՒԼ», էջ 261, 1882, Կ. Պոլիս.

21. — Թղթակցութիւն ի Փոքր Ասիոյ

Կիւրիճ, 30 Յունիս 1882.

Հաճեցէք Ձեր պատուական Մասեաց մէջ մի փոքրիկ անկիւն շնորհել մեզ, ուր գետեղենք քանի մը երախտագիտական տողեր առ Մեծ. Գէորգ էֆ. Կ. Թոփալեան, որ հայրենասիրաբար մի օրինակ Մասիս նուիրեց տեղւոյս Ձախձոր թաղի Ազգային վարժարանին եւ հայրենակից երիտասարդութեան, որոյ ազգասիրութեանն կը նուիրեմք, հրապարակաւ մեր խորին շնորհակալիքն ի դիմաց Հայ երիտասարդութեան եւ մանկուոյն, որք բարեբաղդութիւն կ'ունենան վերժանել զԱզգօգուտ թերթը շնորհիւ յիշեալ բարերարին: Իցի՛ւ թէ մեր ձեռնհաս հայրենակիցներն եւս նորա օրինակին հետեւէին, որն որ Վոսփորի փառաւոր ափանց վրայ իսկ չէր մոռացած յիշել իւր թշուառ հայրենեաց անտէրունջ վարժարանը եւ անօդնական երիտասարդութիւնը:

Այս առթիւ, Տէր, կը հաղորդեմ ձեզ Կիլիկիոյ մթիւն խորշերէն մին բերկրառիթ լուր ի միսթարութիւն եւ յուրախութիւն ընթերցողաց, որք կը փափաքին միշտ տեսնել յառաջդիմական քայլեր ազգային ուսանող մարմնոյն մէջ: Ամսոյս 27-ին Ձախձոր թաղիս Մեսրոպեան վարժարանին մէջ տեղի ունեցաւ Արապեան-Պարոնեան վարժարանի ութամսեայ հարցաքննութիւնը ընդ նախազահութեամբ Փոխ-Առաջնորդ Արժ. Տ. Գասպար Հօր ի ներկայութեան յաղաքիս երեւելի ազգայնոց եւ խուռն բազմութեան, որուն հանդիսատես

գտնուեցաւ նաեւ դիտմամբ՝ տեղւոյս դատաւոր Սապոնճի զատէ Հիւսէյին է-
ֆէնտի Սերաստացի, հանդերձ բնիկ Հաճ Ալի էֆէնտի զատէ Գեամիլ էֆէն-
տիով: Բննիչներն էին հետեւեալք. Մանուկ Պատ. Զգօնեան Ուլնեցի, Յակոբ
Պատ. Ժամկոչեան, Նշան Պատ. Զատրճեան Սերաստացի, ընդ որս եւ մենք:
Իսկ քննելի աւարկայք, Աղբ. Պատմութիւն, Աշխարհադրութիւն, Քերական-
ութիւն, Թուարանութիւն, Գրադիտութիւն, Տաճկերէն եւ Գաղղիերէն: Քըն-
նութիւնը սկսաւ ի ժամ երկու, եւ տեւեց ի ժամ վեց, յորում կը փայլէր անձ-
նուէր դասատուին (որ է՝ Նշան էֆ. Թէրզեան Սերաստացի) անխոնջ ջանքը եւ
աշակերտաց զբալի յառաջդիմութիւնը, մանաւանդ Աշխարհադրութեան ու
Գաղղիերէնի մէջ: Այս բերկրառիթ տեսարանին ո՛չ նուազ քաղցրութիւն
կ'ընծայէին Պ. Զատրճեանի կարգ մը երաժիշտ աշակերտաց երգած Աղբային
սրտատուչ երգերը: Յառաջդիմասէր դատաւորը իւր մաղթանքը եւ շնորհակա-
լութիւնը յայտնելով մեկնելէ վերջ, Մանուկ Պատ. Զգօնեան մի հակիրճ բա-
նաստութեամբ դրուատելով զքննութիւնն, շնորհաւորեց ի դիմաց քննչաց՝
Տիարս Արապեանց եւ Պարոնեանց, զանձնուէր դասատուն եւ զփութաջան ա-
շակերտսն: Եւ ապա հանդէսը վերջանալով, բազմութիւնը ցրուեցաւ մեծաւ
գոհունակութեամբ:

Տէ'ր խմբագիր, եթէ թաղիս համար կայ մի միւլթարական կէտ, այդ
նա Արապեան - Պարոնեան վարժարանն է անշուշտ, որ փառաւոր ապագայ
մը կը խոստանայ տեղւոյս Աղբային յառաջդիմութեան իւր կանոնաւորու-
թեամբ եւ յարատեւութեամբ. զի այդ վարժարանի սանունք ըստ մեծի մասին
մեծատանց կամ երեւելեաց զուակներ լինելով, անշուշտ օր մը աղբային գոր-
ծոց դեկը անոնց ձեռքը պիտի յանձնուի յաջորդաբար, եւ փափաքելի է յու-
սալ թէ բարոյապէս եւ նիւթապէս պիտի նպաստեն յառաջդիմութեան, եւ ի-
րենց ծնողքներէն տարբեր ընթացք ունենալով միութեամբ եւ համաձայնու-
թեամբ պիտի գործեն յօրում Հայրենեաց եւ Աղբին:

Տէ'ր, բնական է, որ վարդ քաղողը փուշն ալ հետը կը քաղէ, զի զու-
գընթաց է անոր հետ. վասն որոյ կը ներկայացնեմ Ազնիւ ընթերցողաց այս
հրապուրիչ տեսարանին հետ տխուր տեսարան մ'ալ: Վերը Մեսրոպեան
վարժարան մը յիշեցի, որ այժմ անուանական է եւեթ, եւ անձնական կրից
գոհուած. այս նուիրական յարկը 150ի չափ հայ մանկտունն Աղբ. վարժա-
րանն էր, որ կը հոգացուէր Յ-Յ տարի առաջ կազմուած Սիրալիւր ընկերու-
թեան ծախիւք, եւ վերջին տարիներս սկսած էր տակաւ առ տակաւ բարեկար-
գուիլ եւ յառաջդիմել, սակայն թաղիս եկեղեցւոյն վերաշինութեան պատ-
ճառաւ յիշեալ ընկերութեան անդամոց մէջ ծագած անհամաձայնութեանց
շնորհիւ դժբախտաբար գոցուեցաւ, եւ այժմ խեղճ աշակերտք պարտէզնե-
րու եւ փողոցներու մէջ կը թափառին երեք ամիսէ ի վեր բաց ի յայնց, որք
հարուստի զաւակ ըլլալնուն համար կարողացան ուրիշ վարժարաններ մտնել
թողակաւ. սոյն վարժարանի կառավարիչն աւելի իւր ապրուստը հայթայթե-
լու համար վարժարանին նախակրթարանին մէջ կը շարունակէ իւր սաշտո-
նը մէն մի աշակերտէ ըստ կարողութեան թողակ պահանջելով, որուն ջով
կը յաճախեն 110ի չափ աշակերտք, զոր աւելի հովուութեան արժան է ան-
ուանել ջոն թէ դաստիարակութիւն, զբօսցնել՝ քան թէ սորվեցնել, ահա-
ասիկ այս է հիմա կիւրնոյ կամ մասնաւորապէս թաղիս ժողովրդեան աղ-
բատ մասին արդահատելի վիճակը, որուն բարոյական հետեւանքը խիստ
դառն է. այսպէս է նաեւ էօրէն կոչուած թաղին նկարագիրն, որոնց եկեղե-
ցին ու դպրոցը գոցուած են երեք ամիսէ ի վեր շնորհիւ պժուալի խռովու-

թեանց, եւ կուսակցութիւնք կը սպանան Ազգ. ժողովոյն, եթէ ի նպաստ իրենց չվճո՛՛ն, մին կաթողիկ ըլլալ եւ մին Բողոքական, յորմէ Բողոքականք օգուտ քաղել ուզելով, իսկոյն եկեղեցւոյն քով ժողովարան մը բացին, ինչպէս Չախճոր թաղիս մէջ, ըստ Տաճկական առածին թէ «Քուրտ տոււանիլը կիւնի սէվէր»։ (քիւրտը մշուշոտ օրը կը սիրէ)։ Անտէրո՛ւնջ ժողովուրդը, անհովի՛ւ ոչխար։ Տէ՛ր, բազում ինչ ունիմ գրել, բայց առ այժմ այս բաւական է։

Մնամ յարդանօք՝

«ՄԱՍԻՍ», 1882

ՍԱՐԳԻՍ Յ. ԽՈՒՄԱԹԵԱՆ

22.— ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ Ի ՓՈՒՔՐ ԱՍԻՈՅ

Կիւրիմ, 25 Փետր. 1883

Դժբախտութիւն ունիմ նկարագրել ձեզ քաղաքիս ազգայնոց տնտեսական եւ նիւթական կեանքը, զոր՝ իբրեւ հայրենեաց երիտասարդ, ի մօտոյ ճանաչելով չեմ վարանիր ըստ իմում կարի ներկայացնել, եւ նորին Օգոստոսի առ Վեհապետութեան բարձր գուլթն ու ազգային նորընտիր վարչութեան ուշադրութիւնն հրաւիրել առ այն։

Թերեւս շատեր լաւ դադափար ունին Կիւրնոյ նիւթակաթն կենաց նըկատմամբ, եւ շալագործութիւնը մշտահոս աղբիւր կը հաճարին նորա տընտեսական բարօրութեան համար։ Արդարեւ անցելոյն մէջ պահ մը յառաջդիմած եւ փայլած է Կիւրին. բայց ստուգիւ դատելով այսօր տառապայման յետադիմութեան եւ անտանելի թշուառութեան մէջ կը գտնուի, եւ բնականաբար իւր արդի կացութիւնը գինքը յոչնչութիւն պիտի դատապարտէ ի մօտոյ։ Թէեւ չեմ ուզեր շարագուշակ լինել, սակայն ներկայն ակներեւ կը ցուցնէ զապագայն, որ անխուսափելի է, զի 1500 տուն հայ բնակչաց մեծագոյն մասը օրական պարենի կամ ուտեստի կարօտ կը գտնուի (ի բաց առեալ մի քանի գերդաստաններէ, զորս կարելի է մատով թուել) եւ խիստ շատ են հանդանակութեամբ ապրող ընտանիք. վասնզի չանցնիր Կիւրակի մը, յորում քահանայք արտասուօք չը ծանուցանեն յատենի Ս. Եկեղեցւոյ յականէ անուանէ, այս կամ այն ինչ ընտանեաց նօթութիւնն ու մերկութիւնը, դուրս եւ կարեկցութիւն հայցելով այնպիսի ժողովրդէ մը, որ գրեթէ թշուառագոյն քան զնոսա, (աւելորդ է ստորագրել եւ մեր թուրք հայրենակցաց վիճակը, որ եւ ոչ մի նախանձելի կէտ մը ունի, լինելով անշուշտ միեւնոյն հայրենեաց տարաբախտ դաւակուռք)։ անուրանալի է արդարեւ սոցա ժրութիւնն եւ անիրոնջ աշխատութիւնն, սակայն երեք անգութ դահիճներ այնպէս կաշկանդեցին եւ թուլցուցին իւրեանց վաստակաւոր բազուկներ, որ յակամայից պիտի ստիպուին մուրացիկ լինել՝ հակառակ իրենց բնածին վեհանձնութեան եւ գործունէութեան. եւ ո՞րք են այդ անգութ դահիճները.— Սով հացի, Սով գործոյ, եւ Առատութիւն աւագակութեանց։

Սով հացի. Շատերուն ծանօթ դժբախտութիւն մի է, որ քաղաքս հանդերձ իւր շրջակայիւք ահաւասիկ ինն սարիէ ի վեր կը հեծէ հացի խնդրոյն տակ, կը մաքառի այդ անողոք թշնամոյն հետ, որ իւր հարստութիւնը կողոպտեց, գանձն սպառեց, շտեմարանները պարպեց, քսակը թօթուեց եւ շատերուն իրենց հայրենիքն ուրանալ տուաւ ըստ առածին թէ՛ իմաստունն իւր հանդիստն՝ իսկ յիմարը զիւր հայրենիք կը փնտո՛ւ։

Սով գործոյ. Այս եւս ոչ նուազ քան զ՛առաջինն հարուածեց սոյն խեղճ ժողովուրդը, եւ օր քան զօր կը սպանայ նմա անհաշտ աչօք, ըստ որում

չկան աստ օրինաւոր պահեստք եւ հանրօգուտ ձեռնարկք, որք զէթ մի չոր հաց հայթայթեն դործօն ձեռքերու, թող զիւզն եւ զմիս սննդարար, զորս կարելի է երազնուն մէջ կը տեսնեն, զի դանուած պահեստք նահապետական դրութեամբ, եւ ջրհեղեղի դարէն մնացած են. թէեւ երբեմն շալագործութիւնը բաւական գիւրութիւն ընծայած էր մեր կենաց, սակայն դեհիկ դործաւորաց անհետատեսութիւնը զայդ շահու ազբիւրն եւս սպառած կամ ցամքեցողցած է ծաւալելով զայն յայլ եւ այլ քաղաքս, իրենց հացը ուրիշին տուած են, եւ այսօր յոյժ յաջողակ շալագործ մը զօրն ի բուն եւ զընչերն ի կէս աշխատելով, չէ կարող երեք դահեկտն շահիլ, մինչդեռ իրեն կը սպասեն առնրւազն հինգ կամ եօթն զլուխ ընտանիք բերանարաց. ասկէ կրնայ հետեւիլ թէ ճշնաւորի մը կենսք բարեբաստիկ է քան գտցայն :

Առատութիւն աւագակուրեանց : Այս երրորդը Փոքր Ասիոյ մէջ արդէն յաճախողէ՛լ լինելով հանդերձ, այս կողմերը մանաւանդ առաւելակշռութիւն ստացած է, ի շնորհս այնպիսի աւագակապետեաց, որք թշնամի են բարեխրնամ կառավարութեան շահուն եւ աշխատասէր ժողովրդեան զարգացման՝ բառնալ ուղղապահութիւնն ճանապարհաց, կենաց եւ ընչից :

Այսու ամենայնիւ տեղւոյս արքունի գինուորականտրոց ծանրութիւնը ոչ նուազ մտատանջութիւն պատճառած է խեղճ հասարակութեան, զոր իբր 1,100 լիրա կը հաշուեն, մինչդեռ ողորմելիները կէսն անդամ հատուցանելու սոյժ չունին. եւ այս ու այն առիթներով, ինչպէս կը լսեմք, յառաջիկայ դարնան ստուար բազմութիւն մը մտադիր է գաղթել այսր եւ անդր չորարեկ հող մը դանելու յոյսով. ողբալի՛ վիճակ : Ասկէ առաջ, զիտէ՞ք, քանի հարիւր ձեռնհաս եւ անձեռնհաս գերզատաններ գաղթած են այլուր, մինչ իրենց ներկայութիւնն յոյժ կարեւոր էր աղքատիկներուն համար, եւ այս ուղղութեամբ այսօր անտանելի եղած է թշուառ հասարակութեան տխուր վիճակը, մինչ զի անցեալ օր էօրէն եւ Ծուղուլ ըսուած թաղերէն հանրագրեր մատուցուած են կառավարութեան ծանուցանող թէ՛ մեր ընտանիք եւ մեր գաւազունը նօթի եւ մերկ ըլլալով, ստիպուած եմք քանի մը օրէն զանոնք եկեղեցեաց եւ վղիթներու դռները շարելով մուրացնել, եթէ անմիջական օգնութիւն մը չհասնի մեզ, ուր կը մնայ մեզ արքունի տուրք հատուցանել եւն. նոյնպէս եւ երէկ շատ մը թուրքեր աղերսադիր մը մատուցած են տեղակալին «հաց» աղաղակելով, զոր կարծեմ ինչա ըրած է Սեբաստիոյ դաւառապետ Բարձր Կուսակալին : Կը թողում Գարահիսար կոչուած 50 տնէ բաղկացեալ Հայ գիւղին հացի խնդրապիրն մատուցեալ առ Ազգ. Ժողովն, զոր ես այսօր գրելու գժբախտութիւնն ունեցած եմ. վերջապէս ամէն կողմէ կ'աղաղակեն «Հա՛ց, Հա՛ց». եւ ինչպէս կը լսեմք ստոյգ աղբիւրներէ, Տէր Ոմբադիր, այս ու այսպիսի խմատներով տեղւոյս աղբային խորհուրդներէն եւ ժողովներէն հանրագիր մը յղուած է յԱղբային Պատրիարքարան, Կայսերական հպատակուտէր կառավարութեան դռնն ու կարեկցութիւնը հայցելու, որպէսզի տեղւոյս գինուորական տուրքը կիսով չափ թեթեւցնելու, եւ շալագործութիւնն ուրիշ քաղաքաց համար արգելելով, 10-12 տարի Կիւրնիոյ մէջ միայն դործուելու (որոյ հեղինակն է) առանցնաշնորհումը սրբաբեկու բարեհաճի վեհապետարար ի քաջալերութիւն զարգացման այդ արհեստի : Վերջապէս ժողովուրդը յուսահատական վիճակ մը ունի. գաղթականութեան գաղափարն երթալով կը մարմնանայ եւ վտանգ կայ թէ Կիւրնի օր մը աւերակաց կոյտ մը կոչուելու տարաբախտութիւնը կունենայ, որուն առաջը միայն Նորին Օղոստափառ Վեհապետութիւնը միայն կարող է առնուլ :

Եթէ բարեհաճիք զայս հրատարակել, կը խոստանամ վերջը քաղաքիս
և իւր դիւղօրէից բարոյական վիճակն ընդարձակօրէն նկարագրել ձեզ :

«Մասիս», քիւ 3441, 1883,

ՍԱՐԳԻՍ Յ. ԽՈՒՄԱԹԵԱՆ

23. — ԿԻՒՐԻՆԻ ՎԻՃԱԿԸ

9 Փետր. 1883, ԿԻՒՐԻՆ

Հետեւեալը պատճէմն է այս անգամ ի դիմաց Կիւրինի ազգային ժողո-
վականաց Ս. Պասաբիարք Հօր զրկուած հանրագրոյ մը .

Բարձրաշնորհ Ս. Պատրիարք Հայր, Նախագահ Ազգ. Պատկառելի
Վարչութեան .

Քաղաքիս Հայ հասարակութիւնն՝ որ անհայ, անպաշտպան՝ կորստեան
վհիւսն եղերքը կը դեղերէր, Ձեր վերադարձն ի Պատրիարքական բարձր Աթոռ
դայն եռանդով ողեւորեց միահամուռ դիմել յեկեղեցի եւ Եկեղեցւոյ եւ
Հայրենեաց արի պաշտպանին անդին կենաց համար բիւր օրհնաբանութիւն-
ներ ձօնել առ Աստուած եւ առ Բարեխնամ կայսր, որ շնորհեցին մեզ մեր սի-
ւելի Պատրիարքն անդրէն բազմիւ իւր Ս. Աթոռին վրայ, եւ մանաւանդ բա-
ցառիկ շնորհիւ ըստ հարկին ներկայանալ մինչեւ իսկ Նորին Օգոստոսիառ
Կայսրութեան եւ պաշտպանել ազգ եւ կրօնական ամէն շահեր . ահաւասիկ
սոյն քաջալերութեամբ կը փութամք ներկայել Ձեզ մեր անտանելի վիճակը,
որ իւր բարեռքամբ երկրին պատիւ եւ ժողովրդեան հաց ու դործ պիտի մա-
տակարարէ :

Ժողովուրդներ կան՝ որ ծուլութեամբ իւրեանց երջանկութեան պա-
տանքն ինքեանք կը պատրաստեն անձամբ անձին, որոց արդար բաժինն է ան-
վերջ թշուառութիւն եւ աղքատութիւն . իսկ այն ժողովուրդներ՝ որ հանձար,
տաղանդ եւ դործունէութիւն ունին եւ պարագայից բերմամբ այլեւս անկա-
րելի կը լինի այդ ամէնը գործադրել, բնականաբար պիտի դիմեն իւրեանց
վեհապետին եւ խնդրել խոնարհաբար, որ հարթուին արդելանաց ամէն խաչ
եւ խուժ :

Այս երկրորդ կարգէն է Քաղաքիս ժողովուրդը, որ ինչպէս բազմաց
յայտնի է, ի սկզբանէ անտի բոլոր վաճառաշահ քաղաքներ դիմած եւ առեւ-
տըրական զանազան գործերով յաջողակութիւն ցուցած են . իսկ անդրամա-
պուխ ժողովուրդը լոկ ինքնօրնութեամբ հնարած են շալագործութիւնը, որ
այսօր իւր նախնական վիճակին մէջ անգամ պատիւ կը բերէ երկրին եւ հայ-
կական հնարագիտութեան, եւ ի շնորհս իւրեանց այս արհեստին՝ արքունա-
կան տրոց եւ նպաստներու եւ բարեգործական հանդանակութեանց մէջ միշտ
ամենէն առատաձեռն եղած են բաղդատմամբ իւր ժողովրդականութեան .
այլ սակայն երկու երեք տարիէ հետէ ամէն տեսակ չարիք դէզադէզ կը կու-
տին մեր վրայ . գործինակ՝ դաղթականութիւնն եկաւ երկու հազար լիրայէն
աւելի արժողութեամբ Հայոց կալուածները գրեթէ գրաւեց, եւ անդ տներ կը
չինէ . մեծ հեղեղ մը անցեալ տարի ողողեց Կիւրնոյ Շուղուլ կոչուած թաղին
տներն եւ այդինքր, եւ բոլորովին ծանր վնասով աւերեց . եւ որ ամենէն ան-
տանելին է, ցորենի եւ հացի տարապայման թանկութիւնը եւ ճանապարհաց
անապահովութիւնը՝ դիւղօրէից առուստերով իւր օրական պարէնը ճարող
աղքատիկ ժողովրդեան համար, ահա այս առթիւ քաղաքիս կարող անձինք
մեծադոյն մասամբ դաղթած են եւ կը դաղթեն խումբ խումբ . այնպէս որ քա-
ղաքիս մէջ մնացած են եօթն կամ ութ կարող ընտանիք, որոց եթէ բոլոր ու-

Կեցածը հացի կարօտ աղքատաց բաժնուին, հազիւ հազ մէկ երկու ամսուան պաշար կը լինի, իսկ գործաւոր ժողովուրդը՝ գործոց այս վիճակէն յուսահատ՝ ընտանիք եւ զաւակ դրանն ետին նօթի ձգելով՝ տարադէմ կը դիմէ օտար տեղեր չոր հացի մը ետեւէն, զոր ոչ երբեք կարողացած է ձեռք բերել, հեռեւարար շալապործութեան արհեստը՝ փոխանակ կատարելագործուելու՝ իւր շահը իսպառ կորսուած է ի վնաս երկրին:

Ո՛ր Բարձրաշնորհ Ս. Հայր, առանց չափազանցութեան Ձեզ կը ներկայենք ժողովրդեան ճիշդ վիճակը, որոյ բնակութեան, զգեստի եւ կերակուրի խնդիրները երկրորդական պէտքեր են, այսօր լոկ չոր հացի կարօտ թաղէ թաղ խմբովին աղերսադրերով կառավարութենէն հաց կ'աղաղակեն, եւ նա խնդիրը կը յանձնարարէ Ազգային ժողովոց, զորս կը պաշարեն հացի աղաղակով: Եկեղեցւոյ դուռը կը ձգուին յաճախ նորածին երեխաներ, զի հայրը հաց եւ մայրը կաթ չունի արդէն սնուցանելու, այս ամէնուն վրայ աւելցած է նաեւ արքունական տրոց ծանրութիւնը, որով հացի խնդիրը մոռցած կը ծախեն տուն, կահ կարասիք իւրեանց պարտուց հաւատարմութեան համար. վերջապէս Տեղւոյս կառավարութիւնը լողովրդեան աղքատիկ եւ օրհասական վիճակէն յուսահատեալ տեղեկազրեց Սեբաստիոյ նահանգապետ՝ Վսեմ. Կուսակալին եւ մենք ժողովականքս կը դիմենք Ձեր շնորհիւ մեր դառն եւ յորդարցունքը թափել մեր Օղոստ. Վեհապետին գթութեան առջեւ. որպէսզի եթէ երբեք կարելի է մի բացառիկ շնորհով՝ ուրիշ տեղեր շալի դործ ունեցողներուն չվնասելու համար տարի մը նոցա միջոց արուելով՝ տասը տարիի չափ արտօնադրով մի շալապործութիւնը միայն քաղաքիս յատկանայ (*). նոյնպէս նաեւ բոլոր տեղացի դիւտերը ի քաջալերութիւն քաղաքիս հնարագիտութեան եւ ի բարձունք թշուառութեան. զի այս կերպով առհասարակ հայ եւ թուրք գործաւորներ իւրեանց արհեստին կը ձեռնարկեն եւ իսպառ. կ'անհետանայ աղքատութիւնը. եւ թէ՛ արհեստը փոխանակ այսպէս նախնական, ստորին եւ անչահարեր վիճակին մէջ մնայու, կատարելագործուելով Պարսկաստանի եւ այլ տեղեաց բոլոր ձեռագործները կը գերազանցէ. նամանաւանդ պաշտօնապէս կը ստուգենք որ այս պայմանաւ տասը տարուան միջոցին աւելի աժան գնով վաճառման նպաստող օրինաւոր գործարաններ կարելի է հաստատել, որ իւրեանց արդեամբ պատիւ կը բերեն օսմանեան երկրին. իսկ եթէ չէ կարելի ընդունելի լինիլ մեր սոյն խնդիր այսպիսի հայրենասէր Մեծ Եպարզօսի ատեն, դէթ արտասուօք կ'աղերսենք որ զինուորական արքունի տրոց պագիէն շնորհուի սոյն աղքատիկ ժողովրդեան յորդ արտասուած համար, եւ ներկայ տուրքը, որ յաջող ժամանակներու վրայ չափուելով՝ 1050 լիրայի կը հասնի, կիսով չափ թեթեւայ յանուն գթութեան եւ սիրոյ Հայրախնամ Օղոստ. Կայսեր մերոյ, որում անդին կենաց եւ անասան զահակալութեան սրտագին աղօթողներ ենք ի դիմաց տարաբախտ ժողովրդեան:

Ուստի, ո՛ր Բարձր. Ս. Հայր, մեր սոյն հացի դործի խնդիրը արտասուօք կը տարածենք Ձեր Սրբազնութեան Բ. Աթոռոյն առջեւ, եւ կ'աղաչեմք խո-

(*) Այս պահանջում ամօտեղի եւ ապօրէն է. փոքր Ասիոյ մէջ կամ ուրիշ հայաբնակ ֆալակներ ալ, որք շալ կը գործեն, եւ որք նուազ չեն տառապիր, որպէս Կեսարիոյ եւ Մա. բաշի շաղագործք: Եթէ Կիւրիկեցւոց շինած շալն աւելի լաւ եւ աւելի աժան է, վաճառման մեծաշնորհն ինքնին կը վայելէ. եթէ չէ, ի՞նչ իրաւամբ միւս ֆալակներուն հարտարագործութիւնը կրնայ արգիլուիլ:

նարհարար որ բարեհաճիք հայրաբար ներկայացնել զայս մեր Օգոստ. վեհապետին, որուն զթութեան ժամէ ի ժամ սպասող խոնարհ որդիք Ձեր Բ. Սըրբադնութեան:

Ի զիմաց Ազգ. Ժողովոյ
(Ստորագրութիւնք)

24. — ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔ

1884 Նայ. 16, Կիրիմ

— Նախընթաց Կիրակի մեր քահանայական դատուն վրայ երկու պաշտօնեայ եւս աւելցան ձեռնադրութեամբ Գեր. Շիշմանեան եպիսկոպոսի: Մին բնիկներէն ձէմճէմեան Թորոս անուն անձ մ'է, իսկ միւսը դասատուաց խմբէն Սերաստացի Պ. Արիսողոմ Յովակիմեան: Առաջինը կոչուեցաւ Տ. Հմայեակ, որ թէեւ ոչ ուսեալ, այլ պարկեշտ ու օրինակելի կեանք մ'ունեցած է, իսկ երկրորդն Տ. Գարեգին, որ ուսեալ է յոյժ եւ նոյնպէս պարկեշտ կեանք մը վարած է մինչեւ ցարդ:

— Մէկ երկու ամսէ ի վեր տեղս մի նորապանդ բողբալեան երեւան ելած է «Մկրտիչեան» անունով, որ կրկնամկրտութիւն կը քարոզէ առարկելով թէ յերախայութեան ստացուած մկրտութիւն անվաւեր է եւ խեղահատութեան մէջ պէտք է վերստին մկրտուիլ փրկուելու համար: Այդ յարգամեծար սխառուելին անցեալները կը համոզէ ապուշ մը, զոր ջաղացքին առուն մէջ կ'ընկըմէ եւ կը հանէ քիչ մնալով որ խեղդամահ առնէ իւր առաջին մկրտեալը: Պատուելին որ կաղ է ստքով, ինչպէս եւ խելքով, նախընթաց կիրակիներէն մին մեր եկեղեցին դալով, աւարտումէն յետոյ կը սկսի քանի մը արեղ ցրեղ խօսքեր ընել դաւթի մէջ: Գեր. Շիշմանեան եպիսկոպոսն իմանալով զայս իրողութիւն՝ արտաքսել կու տայ զնա. յաջորդ Կիրակի ալ մկրտութեան վրայ ճառելով ջախջախիչ փաստերով հերքեց զկրկնամկրտութիւնն, եւ յորդորեց ժողովուրդն զդուշանալ այդ աղանդաւորէն եւ հեռու կենալ այդպիսի տղայական լուսացումներէ, որ հակառակ են ողջամիտ վարդապետութեան քրիստոնէական եկեղեցւոյ:

«ԱՐՄԻՆԵԼՔ», ԲԻՒ 281, 1884.

25. — ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ԱՐՄԻՆԵԼՔ»Ի

Սեպտտիա, 3 Ապրիլ, 1884

Մեծաւ զարմանօք կարդացինք «Արեւելք»ի 60րդ թուոյն մէջ՝ թէ Կիլիկիոյ կաթողիկոս Մկրտիչ Սրբազան յետ դանդատելոյ Բ. Դրան Ազգ. Պատրիարքարանի նկատմամբ՝ դանդատեր է նաեւ Սերաստիոյ Առաջնորդ Պետրոս Սրբազան Կիլիկիոյ թեմերն կը միացնէ էջմիածնի թեմերուն հետ:

Արդարեւ բաւական բառ չենք դտներ՝ արժանապէս նկարագրելու Կիլիկիոյ «Վեհափառ»ին այս ազգափնաս ուղղութեան ցաւալի պարագաներ, ինչպէս նաեւ յայտարարել մեր սրտի դառն ցաւեր եւ անշուշտ դիտնալով թէ Ազգ. Կեդր. Վարչութիւնն աղղուապէս պիտի սլաշտպանէ Ազգին հանրական շահերն, պաշտօնապէս հերքելով Կիլիկիոյ Գահակալին այդ անհիմն դանդատներ, մենք կ'անցնինք մի քանի խօսք ընել Նորին Ամենապատուութեան այն անտեղի դանդատանաց համար որ, քաղաքիս Գեր. Առաջնորդին կը վերաբերի:

Եւ այս առաջին անգամ չէ, որ կ'ամբաստանէ Մկրտիչ Կաթողիկոս զԱռաջնորդն Սերաստիոյ, այլ ասկից չորս ամիս յառաջ ալ յատուկ դրու-

թեամբ մի քաղաքիս Վսեմ. Կուսակալին բողոքած էր, թէ Պետրոս Սրբազան Կիլիկիոյ թեմերէն Կիւրինի, Տարենտէի, Մանճըլըզի, Ադիզիէի, Կէտիկ ու էմլէկ Նահիէներու ազգային տարեկան տուրքերն բռնութեամբ կը հաւաքէ, եւ ընդդիմացողներուն ալ կը սպառնայ թէ կառավարութեան առջեւ Ձեր դործերն չեմ պաշտպաներ, եւ թէ «Օտար տէրութեան մը իշխանութեան ենթարկել կ'ուզէ յիշեալ տեղերն»:

Յայնժամ Գեր. Պետրոս Սրբազան քաղաքիս գիւղօրէից այցելութեան դացած ըլլալով Մկրտիչ Կաթողիկոսի այդ ամբաստանագիրը Վսեմ. Կուսակալին կողմէ իրեն հաղորդուած, եւ Նորին Սրբազնութիւնն ալ արժանաւոր հերքում մի յղած էր: Իսկ այս անգամ Ն. Ամեն. Սրբազնութիւնն իւր այդ անհիմն ամբաստանութիւն Բ. Դրան առջեւ վերստին կրկնած, եւ ազգային զրաթերթք ալ հրապարակադոյժ ըրած լինելուն, արդարութեան պարտք տեսցինք պարզել ճշմարտութիւնը: Ասկից յառաջ Մանճըլըզի հրաժարեալ Առաջնորդ Չաքարիա եպիսկոպոսէն տեղւոյն Վանուց հաշիւներն պահանջելու համար Ազգ. Պատրիարքարանի կողմէն եկած կրկին հրամանագրոց վրայ Պետրոս Սրբազան կը ստիպուի ուղեւորիլ ի Մանճըլըզ: Սակայն երբ Ղազի-Մաղարայ գիւղ կը հասնի, տեսակցելով Չաքարիա եպիսկոպոսին հետ եւ ձմբան սաստկութիւնն աւելնալով ետ կը դառնայ գէպի Սերաստիոյ վիճակային գիւղերն, եւ դանձնք այցելելով ուր ուրեմն Սերաստիա կը վերադառնայ:

Այս է ահաւասիկ բոլոր իրողութիւն. եւ սակայն Ամեն. Մկրտիչ Կաթողիկոս չենք գիտեր ի՞նչ ոգւով եւ ի՞նչ նպատակաւ կը յանդունի բացարձակ ստութիւններ ստեղծելով՝ պաշտօնապէս ամբաստանել՝ թէ Պետրոս եպիսկոպոս Կիւրինի եւ շրջակայից կրօնական ուրքերն բռնի կը հաւաքէ, սպառնալիքներ կ'ընէ, Կիլիկիոյ թեմերն օտար տէրութեան մը հպատակ կաթողիկոսութեան հետ միացնել կ'ուզէ եւայլն, մինչդեռ Գեր. Պետրոս Սրբազան ո՛չ ի Կիւրին եւ ո՛չ այլուր բնաւ ոտք կոխած չէ այդպիսի բան մը պահանջելու համար. ո՛չ սպառնալիք ըրած եւ ո՛չ Կիլիկիոյ թեմայնոց երեսը տեսած: Արդեօք Մկրտիչ Կաթողիկոս չէ՞ր որ ասկից գրեթէ երեք տարի առաջ երբ Սերաստիա եկաւ, տեսնելով Սերաստիոյ Առաջնորդին դործունէութիւն, եւ նկատելով Սերաստիոյ Վիրայթի կարեւոր գերքն, ինքնաբերաբար առաջարկեց Պետրոս Սրբազանի, Կիւրինի եւ շրջակայից վերաբերեալ քաղաքական դործերն տնօրինելով՝ նոցա ներկայացուցին լինել առաջի կառավարութեան, եւ այս նպատակաւ Արժ. Յովհաննէս վարդապետ Կիւրինի իբր Առաջնորդ տարու:

«ԱՐՄԻՆԻԱ», ԹԻՒ 88, 1884,

26. — ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ — Թուրքիոյ վիճակներ

Արդէն ծանուցած եմք թէ էջմիածնայ Ս. Սինողի կողմանէ կաթողիկոսական ընտրութեան հրաւերք յանձնուած կամ յղուած են ուղղակի Երուսաղէմայ Պատրիարքին, եւ Կիլիկիոյ եւ Աղթամարայ կաթողիկոսներուն. բայց այս երկուքին մի մի հրաւիրագիր յղուած է, որով Ս. Սինողէն Տաճկաստանի մէջ միայն 47 քուէատեր վիճակք կը ճանչցուն, եւ հետեւապէս, միայն 94 քուէ փոխանակ 65 վիճակաց եւ 130 քուէից, որպէս 1866 տարւոյ ընտրողական ձեւը կ'ենթադրէ:

Այդ 65 վիճակներէն 45 հատը ուղղակի Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան կ'ենթարկուին, եւ անոնց թուոյն եւ անուանց վրայ տեղեկութիւն տուած եմք:

Ս. Երուսաղէմայ Պատրիարքութեան վիճակները հետեւեալ կերպով յառաջ բերուած են 1866 ամի ցուցակին մէջ :

1) Երուսաղէմ, 2) Յոպպէ (Նաֆա), 3) Դամասկոս (Շամ), 4) Վերիտոն (Պէյրութ), 5) Կիպրոս կղզի :

Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը 13 վիճակի բաժնուած է հետեւեալ կերպով .

1) Սիւ, 2) Ատանա, 3) Բերիա (Հալէպ), 4) Այնթապ, 5) Հաճըն, 6) Մարաշ, 7) Ձէյթուն, 8) Անտիոք եւ Պելէն, 9) Նոզաթ, 10) Կիւրին, 11) Տիւրիկ, 12) Մալաթիա եւ Պեհեսնի, 13) Տարենտէ :

Ասոնց մէջ Մալաթիա եւ Պեհեսնի միացեալ վիճակներ լինելով, պէտք է վիճակաց թուոյն մէջ զատարար դրուին : Ասոնցմէ դուրս Մանճըլըզ, Տարսոն եւ Քիլիս իսկապէս որոշ վիճակներ են, եւ իբր այնպէս նշանակուած կը դասուին պաշտօնական գրութեանց մէջ, եւ յատուկ առաջնորդներ ալ ունեցած են եւ այսօր իսկ ունին յատուկ առաջնորդի ներկայացուցիչներ :

Աղթամարայ կաթողիկոսութիւնը իբր երկու վիճակ նշանակուած է .

1) Աղթամար, 2) Կարկար :

Չեմք կարող ստոյգ կերպով ճշդել Աղթամարայ վիճակները, թէպէտ եւ գիտեմք թէ Հայոց Ձոր, Կաւաշ, Կարճկան, Շատախ, Խիզան, Կեցան, Կարկար, Մոկս եւ Տեհ իրարմէ բաժան վիճակներ են, յատուկ գլխաւոր եւ վիճակաւոր վանքերով եւ թեմական գիւղերով եւ ընդարձակ սահմաններով :

«ԱՐԵՒԵԼԻ» քիւ 34, 1884

Մ .

27. — ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

30 Սեպտ. 1885

Կիւրինէն Սեպտ. 30 թուականաւ խմբագրութեանս ուղղեալ նամակէ մը հետեւեալը կը քաղենք, որ տեղւոյն Առաջնորդ Շիշմանեան Ղեւոնդ եպիսկոպոսի պաշտօնավարութեան կը վերաբերի, եւ որոյ վրայ կը հրաւիրեմք Ազդ. Վարչութեան մասնաւոր ուշադրութիւնը :

Ի սկզբան Սերաստիոյ Գեր. Առաջնորդին տարեկան քսան լիրան վճարելու անկարող ազքատ ժողովրդեան տկար ուսին տասը լիրայի պատուական ամսական մը հանգչեցուց զանազան դարձուածներով եւ հակառակող անձինք եւս հրաժարեցուց քաղաքական եւ երեսփոխանական ժողովոց անդամակցութենէն, իբրեւ ըմբոստ եւ անաստ Ազդ. Օրինաց : Իւր ստորագրութեամբ վաւերացեալ օրինաւոր թաղ. Խորհուրդ մը բոլորովին ի պաշտօնէ լուծեց, իւր եւ իւր Քաղաքական ժողովոյ տրամադրութեան տակ առած ինն հարիւր լիրայի չափ եկեղեցւոյ եւ դպրոցի առնելեաց մուրհակներուն հաշիւը հասկընալ ուզելնուն համար, որ միայն իրենց թաղին կը վերաբերէր : Կ. Պոլսոյ Ներսէսեան վարժարանի անուամբ քահանայի մը եւ վարդապետի մը ձեռամբ տնէ տուն կիներէ ոսկեղէններ եւ արծաթեղէններ հաւաքեց, որոյ գումարը հարիւր լիրայի կը հասնի կ'ըսուի, եւ չեմք գիտեր թէ հասա՞ւ իւր տեղը թէ ոչ : Իւր այս եւ նմանօրինակ ձախող արարքներուն հակառակող մի քանի պատուաւոր անձինք փառաւորապէս բանադրեց յականէ անուանէ, եւ օր մը եւս գումանս մուկ եւ զայլ ոք էջ անուանեց եկեղեցւոյ Ս. բեմէն :

Երէկ Կիրակի օրն հրաման կ'ընէ փակել բոլոր քաղաքի եկեղեցիներն եւ ամէն անձանց ի Մայր եկեղեցին հաւաքուիլ իւր հրաժեշտի ողջոյնն ըն-

դունելու համար. եկեղեցին կ'աւարտի, հարիւրի չափ անդէտ ժողովուրդներ կը սկսին աղաղակել եկեղեցւոյ դաւիթին մէջ եւ միատեղ ճամբայ կը մտնեն հակադեմոնիանց տունն երթալու համար, իսկ այսօր որ է Երկուշաբթի կոչնակ կը հնչուի, ուր կը հաւաքուին Ղեւոնդեանք, որոց Նորին Սրբազնութիւն խօսք կու տայ որ, եթէ երեսուն օրէն Պատրիարքարանէն իւր առաջնորդական վաւերագիրը բերել տան, կը մնայ ապա թէ ոչ անպատճառ պիտի երթայ....

«ԱՐՅԻՆԵԼՔ», ԲԻԼ 575, 1885

28.—ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ

ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՒ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ — 1887 —

Ա.— Կիլիկիոյ ժողովուրդը ճանչցուած է ի հնումն որպէս յանդուլն ծովահէն, եւ իրօք, իր բախտախնդիր արշաւանքով սարսափ ազգած է մինչեւ Իտալիոյ սահմանները: Քրիստոսէ կէս դարու չափ առաջ Պոմպէոսի լաղթանակներէն անմիջապէս վերջն իսկ, Կիլիկիոն, որ Կիլիկիոյ կառավարչն էր (բրոգոնսուլ), միշտ կը գանդատէր այս անգուստ լեռնականներուն դէմ: Վեսպասիանոսի ատեն բնիկ իշխաններու եւ Օգոստոսի ատեն վեց ազատ քաղաքներու գոյութիւնն ալ կը ցուցնեն այն հողին, որ երկար դարերու շրջանին մէջ վառ մնացած է Կիլիկիոյ բնակչաց սրտին մէջ:

Այսուհադերձ պէտք է յիշել նաեւ որ, Կիլիկիա, դիտութեանց եւ դարութեանց մէջ ալ նշանաւոր հանդիսացած է: Տարսոն քաղաքը, Քրիստոսի ատեններն իսկ ծանօթ էր որպէս մի կարեւոր կեդրոն հեթանոս փիլիսոփայութեան եւ Կիլիկեցի հռչակաւոր անձեր են Քրիստիբոս ստոյիկեան փիլիսոփան, Արագոս բանաստեղծն եւ Ս. Պողոս առաքեալն:

Նկատելով որ խիստ պիտի երկարի խօսիլ Կիլիկիոյ պատմական բոլոր անցքերուն եւ ասորական, հայկական, արաբական, եգիպտական եւ օսմանեան դրաւումներուն վրայ, կ'անցնիմ անցողակի կերպով ներկայացնելու Կիլիկիոյ հայոց արդի կացութիւնը:

Բ.— Այդլային—եկեղեցական տեսակէտով, այժմ Կիլիկիա աւելի ընդարձակ է դէպի արեւելեան հիւսիս եւ հարաւ, ուր հայ ժողովրդի մի ստուար բազմութիւն կը մնակի դարերէ ի վեր եւ ըստ այնմ Սիսի կաթողիկոսական թեմը շատ աւելի ընդարձակ է, քան բուն աշխարհագրական Կիլիկիան:

Աւելի որոշ դադափար մը տալու համար, կը նշանակեմ ի ստորեւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ենթարկուած քաղաքները՝ իրենց բնակիչներու թիւերովն հանդերձ, ինչպէս նաեւ բաժանումներն բուն Կիլիկիոյ, Փոքր Ասիոյ եւ Սուրբոյ մէջ:

Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Սիսի վիճակը, իր գիւղերով	հոգի 10,000
Ատանայի վիճակը (Մերսին, Տարսոն, եւլն.)	հոգի 30,000
Հաճընի վիճակը (իւր գիւղերով)	հոգի 24,000
Հայ-լեռան վիճակը (Կեալուր տաղ գիւղերը)	հոգի 12,000
Այնթապ քաղաքը	հոգի 13,000
Մարաշի քաղաքը իր գիւղերով	հոգի 13,000
Ձէյթունի քաղաքը իր գիւղերով	հոգի 20,000
Ճոնուղի քաղաքը իր գիւղերով	հոգի 12,000

134,000

Փ Ո Ք Ր Ա Ս Ի Ա

Կիւրիսի վիճակը իր դիւղերով	Հոգի	12,000
Տարենտէի վիճակը իր դիւղերով	Հոգի	3,000
Տիվրիկի վիճակը իր դիւղերով	Հոգի	10,000
Մանճըլըզի վիճակը իր դիւղերով	Հոգի	16,000
Մալաթիայի վիճակը իր դիւղերով	Հոգի	14,000
Ատի-Յամանի վիճակը իր դիւղերով	Հոգի	6,000
Շոզկաթի վիճակը իր դիւղերով	Հոգի	35,000
		96,000

Ս Ո Ի Ր Ի Ա

Հալէպի վիճակը (Քիլիս քաղաք եւլն.)	Հոգի	5,000
Անտիոքի վիճակը (Պէյլան, Ալեքսանդրէթ)	Հոգի	7,000

12,000

Ընդհանուր գումար	Հոգի	239,000
Այս թուոյն վրայ գումարելով մերձաւորապէս	Հոգի	21,000

Հայեր՝ բողոքական, կաթողիկ, անկլիքան, գումար Հոգի 260,000

Թէեւ կարելի չէ երաշխաւորել սոյն հաշիւներու կատարեալ ստուգու-
թիւնը, բայց եւ այնպէս կրնանք զանոնք ընդունիլ ամենահաւանական թիւեր :

Ա. տարի, 1887, «ԱՐԱՔՍ», պատկերագրադ հանդէս
Գիրք Ա. Նայեմբեր Ազգագրական Կիլիկիա, էջ 84-85

ԽՆԴՈՒՅ ԿԱՐԱՊԵՏ

Կեանքը առհասարակ երեք ընթացք ունի, որու մէջ մարդիկ կը կատարեն իւրեանց դերն եւ ըստ այնմ իրաւունք կը ստանան ապագայ սերնդոց դատաստանը առնուլ — օրհնութիւն, անէծք եւ կամ անյիշատակ մոռացութիւն :

Առաջին ընթացքի կը վերաբերին նոքա՝ որք որեւիցէ մի օգտակար ծառայութեամբ ու հեղինակութեամբ մասամբ կամ ընդհանրապէս ազգի մը, երկրի մը ու ընկերութեան մը զարգացման, հարստութեան եւ վերջապէս մի բարեխաղութեան պատճառ կը հանդիսանան. այսպիսիք՝ արդարեւ անժամանորութիւն ունին գրաւելու պատմական կեանքի օրհնութեան էջն : Եւ նոքա՝ որք իւրեանց շահասիրական եւ վաղանցիկ փառաց համար վնասակար դեր կը կատարեն, ազգի մը, երկրի մը եւ ընկերութեան մը կործանման պատճառ կը տան եւ կամ արգելք կը լինին որեւէ օգտակար դործի՝ պատմական կեանքի մէջ նոցա բաժինը կը լինի անէծք ու հայհոյութիւնք, ու՜մ՝ յաւիտեան սեւ անուն կը ստանան : Իսկ նոքա՝ որք ոչ չար կամ բարի, այլ կը ծնին իւրեանց համար ու կը մեռնին իւրեանց իսկ համար, առանց սակայն ծառայութիւն մը մատուցանելու մարդկութեան, ազգի կամ Հայրենեաց համար, այնպիսիք կը նմանին խոտերու, ծաղիկներու, որք կը բուսնին ու կը թոշնին փշրուելով անյիշատակ կորստեամբ. պատմութիւնը ոչ ինչ չունի նոցա տալիք, նոքա

պարզապէս գրաստներ են աշխարհ եկած՝ դարի եւ յարդ ծամելու, յաջողութեան ծանրութիւններն կամ հարստութեան բեռերն դէս ու դէն կրելու համար:

«Արաքս» Հանդէսի խմբագրութիւնը որ ղլխաւորաբար զբաղեալ կը տեսնենք Կիլիկեան աշխարհով, անտարակոյս ենք, որ նորա ընթերցողներն պիտի ներեն մեզ մի մոռացուած կիլիկեցի գործիչի յիշատակն ընելնուս, որի հեղինակութեան շնորհիւ ամբողջ գաւառներ այսօր ապրուստ եւ հարստութիւն գտած են, նոյն իսկ Կ. Պոլիսի մէջ հարիւրաւոր գործարաններ հաստատուած կը շահագործուին այդ կիլիկեցի հեղինակի հնարած գիւտերովն:

Ռուսահայ ընթերցողաց արդէն ծանօթ է Պ. Գր. Նիկողոսեանի յօդուածներով Կիլիկիոյ Կիւրին քաղաքի տարագործութիւնն, նոյնպէս շատերուն յայտնի է, յիշեալ տարագի գործող Պ. Ստեփան անուն Կիւրինցի երիտասարդին Վեհափառ Սուլթանի շնորհաց արժանանալը եւ արծաթ միտալով վարձատրուելն: Այս ամենուն սկզբնապատճառ եւ հեղինակն եղած Խելօք Կարապետ, որի լուսանկարն կը զրկեմ «Արաքսի» խմբագրութեան, հանդերձ համառօտ կենսագրութեամբն:

Ընդհանրապէս Կիլիկեցիք եւ Փոքր Հայոց ժողովուրդներն՝ ծուլութիւն չեն գիտեր, ճարպիկ ու շահագործ մարդիկ են, իրենց անգործութիւնը եւ հանդիսորդ ուրիշներէն փնտռելու սովորութիւնը չունին. ամէն յաջողութիւնը իրենց բազուկներու ոյժին մէջ տեսնել կը սիրեն, սրտի արիութեամբ ու տոկուն աշխատութեամբ հետամուտ կը լինին ձեռք բերել այն բաները՝ զորս իրենց պէտքերը կը պահանջեն:

Կիւրինը՝ Փոքր Հայոց սահմանին մէջ մեծն Սեբաստիոյ նահանգին ենթակայ Ձէյթունէն հիւսիս արեւմուտք երկու օր հեռաւորութեամբ գեղեցիկ եւ վաճառաշահ քաղաք մ'է, Ռուբինեանց թագաւորութեան ժամանակ աւելի ծաղկեալ եւ բաղմամարդ, այժմ դայմադամութիւն է, 15,000-էն աւելի բնակիչ ունի, առատ բերքերով. նշանաւոր է կարմրակ խնձորն եւ այնպէս կարմիր ու կլորակ թուշերով արարկան եւ իգական զոյգ սեռն:

Կիւրինի Հայերն քաջարի արուեստի, վաճառականութեան եւ զինավարժութեան մէջ՝ մեծ համբաւ ունին իբրեւ նրբամիտ վաճառականներ եւ արիասիրտ ճամբորդներ անպիսի ի տուրեւառոս: Իւրաքանչիւր կիւրինցի շրջաններով դրամագլուխն ի ծոցի՝ զինապատ կը ձիւլարէ ուր ուրեք որ շահ կը տեսնէ, գողն ու աւազակն բուռ մը հող է կիւրինցի ուղեւորին առջեւ: Ունին վաճառականական տներ հաստատուած Կիւրին, Հալէպ, Պոնտոս, Կարին, Պոլիս, Տիգրանակերտ եւ Լոնդոն-Մանչեսթեր, որոնց մէջ նշանաւոր են. Մարանեաններն, Արապեաններն, Մինասեաններն, Թօփալեաններն եւ Գոչունեաններն: Ունեցած են եւ ունին բարեպտուղ վարժարաններ, եւ ոչ ինչ չեն խնայեր կրթութեան եւ դաստիարակութեան համար:

Ահա այս քաջարի եւ նրբամիտ առհմին կը վերաբերի նաեւ Խելօք Կարապետն, հան եւ գտիչ տարագուցն Կիւրինայ, քաջմիր ազանելեաց, խայտակերտ շալերու եւ դանազան փռոցներու: Խելօք Կարապետի ծնողքն կարի աղքատ լինելով զինքը դրած էին ոստանանկ կտաւագործ վարժապետին մօտ, ուր՝ վարպետին մասուրան փաթաթելէն պարապոյ գտած ժամանակն պաս կ'առնէր նաեւ այբ, բէն, գիմը, քերականը, որն որ փետուր դրելով դրած էր կտոր մը հաստ թղթի վերայ իրենց տան երէցը. Խելօք Կարապետի առաջին դասն եղաւ ուսանիլ խաչ օգնեա ինձ, զոր գոց ընելով կը կրկնէր երեկոյ եւ առաւօտ եւ ամէն հաց ուտելէ կամ գործ մը սկսելէ առաջ: Կարա-

պետ հազիւ քերականը, պզտիկ սաղմոսը (հեգարան) ու մեծ սաղմոսը աւարտած էր եւ մի քիչ ալ կտաւ գործել ուսած էր՝ երբ կը վախճանին ծնողքն եւ ինքը կը մնայ որբ, որով եւ աւարտ կը գտնէ իւր ալ վարժարանական ընթացքն: Այլեւս կարապետ կը պարտաւորի ինքը հոգալ իւր հացը, կարապետ կը սկսի գրադիլ իւր գիտցած կտաւագործութեամբ եւ օրական 40 կամ 60 փարայ (10-15 կոպէկ) շահելով ապրիլ. քիչ ժամանակէն կարապետ յառաջը վրձնելով սկսաւ տոխուրձին շալվար գործել, որն՝ սեւ կամ ճերմակ ոչխարի բուրդէ կրկնահիւս գործուածք մ'է, զոր Փոքր Հայոց եւ Կիլիկիոյ ժողովուրդք իբր անդրավարտիք կը գործածեն մինչ ցայսօր: Կարապետի հեղինակութիւնը այդ ժամանակէն կը վարժնու իւր մտքին մէջ, այլեւս կարապետի մշտական մտածութեան առարկան է, թէ արդեօք կարելի չէ՞ այս գործուածքին մի այլ ձեւ տալ, նահապետական գրութենէն փոխելով՝ զանի աւելի օգտակար եւ վայելուչ կերպարանի վերածել. կը սկսի զանազան փորձեր ընել, ճախարակները փոխել, թելերը շատցնել կամ պակսեցնել, գոյնդ-գոյն բուրդերով գործել, գործածը քակել վերստին հիւսել եւն., շատ մը զանազան գործուածներ, հին կարպետներ, եւրոպական ու պարսկական կերպասներու կտորներ ու կարկտաններ ժողլել քակել, նոցա հիւսուածքն դիտել, նորէն այն տեսակ կամ անոնց նման մի ուրիշ կերպ հիւսել եւն., եւն.: Կարապետ յաջողած էր. Կարապետ իւր փնտռածը դտած էր. Կարապետ գոյնդգոյն ծաղկանկար շալերու եւ եւրոպական քաշմիւրներու, գործուածքներու զազունիքը դտած էր, Կարապետ՝ իրմէ ետքը եկողներուն բաղբը այլեւս ապահոված էր: Կարապետ ուրախ իւր յաջողութեան եւ գիւտին վրայ, որին դադանիքը միայն իրեն յայտնի էր. սակայն մի բան կը նեղէր զինքը, զի աղքատ լինելով եւ գործնականապէս զայն պատկերացնելու անձեռնհաս՝ անհնարին վիշտերով պաշարուած ո՞րք եւ ո՞ւմ որ դիմէր օգնութեան ու ձեռնտուութեան համար՝ բացասական կը ստանար. «Կարապետը ինչպարած է, Կարապետը խենթ է, Կարապետը դժուել է», այս է ամենուն խօսքը, Կարապետի աշխատութեան վարձքը. քաջալերութիւնը: Կարապետի Հօրեղբայրը, որն որ բաւական կարողութեան տէր մարդ էր եւ ուրիշ ոչ ոք ժառանգ չունէր, նա եւս կը զլանար Կարապետի ծրարելը իրագործելու համար մի քիչ օգնութիւն ցոյց տալու, որով Կարապետ ամէն կողմանէ յուսահտուր չզիտէ ինչ ընել. անօգնական երկրի մէջ, օժանդակութիւն, կարեկցութիւն, ամէնքն ալ փակուած է Կարապետի համար, այլեւս հասարակ գործ ալ չեն տար Կարապետին եւ ոչ ալ իբրեւ մշակ փոքր ինչ օրական վարձով աշխատցնող կայ. ամենայն մարդ համոզուած է թէ Կարապետը կատարելապէս խելագարեալ է, փէհլուլէ, դարտակ ման գալող: Յանկարծ մի օր կը պատահի Կարապետին Աստուրենց մըզտեսի Վարդան աղբարը, որն որ Պոլիսէն վերադարձած է, կը պատմէ թէ Պոլիսի մէջ շատ մեծ մեծ էֆէնդիներ, ամիրաներ եւ ողորմած աղաներ կան, Քիշմիշենց ամիրան հարիւրաւոր ոսկիներ տալով՝ ժողովածուն տպել տուած է. Երկանենց ամիրան 1,000 ոսկի է շրկէ Վենետիկի վանքը Յայամաւուրը տպելու համար եւ Տատեան ամիրան ալ չզիտեմ քանի հազար ոսկի է տուած մի քարտէզ շինելու: Այս եւ ասոնց նման պատմութիւնները հետաքրքրեցին խելօք Կարապետին Պոլիս երթալ եւ արդէն իւր միակ օգնական եւ խնամատար Հօրեղբայրն ալ երես դարձուցած՝ անէծք ու հայհոյանք չէր մնար որ չթափէր իր դիմին. վերջապէս հաստատ որոշմունքով պատրաստուեցաւ Կարապետ Պոլիս գաղթել, ժողովեց իւր կարասիներն, որոնք կը բազկանային մի տախտակէ բնակ՝

հաստ թուղթով փակած եւ նորա վերան իր սիրելի խաչ օգնեայ ինձը գրուած, մի մաշուած սաղմոս՝ որուն ութը կանոններուն մէկը իրեն օրական առաւօտեան աղօթքն կը քաղէր, մի թամպուր, որն որ ինքը իւր ձեռքով շինած իր միշտերն կ'երգէր, պատկենական ժառանգ մնացած պէշիկէրթմէ մի նշանած, որին հետ պսակած էր տաներեց հայրն, «առեալ զձեռն մեայի, տուեալ ի յաջն Աբամայ» ըսելով եւ մի բուրդեայ լայն ու երկայն մաշլահ (վերարկու), որ կը ծառայէր մահիճի, անկողնոյ տեղ կարապետի եւ նորա անբաժան տիկնոջ համար:

Կարապետ մէկ ու կէս ամիսէն ոտքով քալելով Պոլիս կը հասնի իւր հաւատարիմ ընկերոջն, կը դիմէ ամենայն տեղ, պատրիարք, ամիրայ, էֆէնտի, մեծ մեծ աղաներ ոչ ոք կարեւորութիւն կամ կարեկցութիւն չի բարեհաճիր ընծայել. տարաբաղդարար իրեն հետ տեղափոխուած էր նաեւ իր խենթ ու դիժ անկանը, մանաւանդ սահմանադրական վառվռուն թուականի սկիզբները, էսիրնէ դարույի դերեզմանատան լողոքական մեռել թաղենք ու չթաղենքի ինդիբրով դրաղող պոլսեցի դիւցազուններէն ո՞րի հոգան էր մտքէ խկ անցունել մի խրմպըլ, կուրծքաբաց, փաթաթոցի դըռնի, արեւակէղ դէմքով, ցնցոտիներ հագած, աղտոտ մի մէշլահի ներքեւ ծածկուած դաւառացի, մանաւանդ՝ կիլիկեցի անուս, տգէտ եւ վայրենի մարդ, որ չէ հագած սերթուկ, գօլայով շապիկ, բարակ բոթին կօշիկ, դիւսարկ, չունի պսաթօն ու ակնոց...:

Կարապետ երկար տարիներ դեղերեցաւ Պոլիս, խարուելով մղտեսի Վարդան աղբոր փայլուն պատմութիւններէն, ի զուր ի ճայն բարձր ազադակելով խելօք եմ, խելօք եմ, ծով եմ, տէրեայ եմ, յորմէ մնացած է «Սեւօք» կարապետի անունն:

Ձմռաննք յիշատակել, որ Փափագեան ազնիւ գերդաստանը, որուն հարազատ ժառանգն է երեւում էՖ. Փափագեան՝ բաւական խնամք եւ հոգածութիւն ցոյց տուած է Սեւօք կարապետին, որոյ լուսանկարն ալ ազնիւ նպատակաւ քաշել տալով պահելին՝ արդարեւ զնահատելի բարեսրտութեան ապացոյց մ'է, որի համար կը պարտաւորինք մեր շնորհակալութիւնը յայտնել հրապարակաւ առ Մեծ. Երեւում էՖ. Փափագեան, իբր ազնիւ հայի եւ ազնիւ գերդաստանի շառաւիղին:

Բաւական տարիներ Սեւօք կարապետ դէս ու դէն դեղերելէ ետք, վերջապէս կը համոզուի, թէ ուրիշէն բոլորովին յուսալն պատրանք մ'է, կ'որոշէ վերադառնալ իր հայրենիքը: Կիւրին, Էլտէն ում, Աէմտէն պարբն (ուրիշէն յուսա, քեզմով սպրէ) ըսելով, ինքնօգնութեամբ դործն առաջ տանել:

Արդէն այլեւս ժամանակը հասած էր. Սեւօք կարապետի հօրեղբայրը մեռած էր, Սեւօք կարապետ ազատ էր, եւ ինքը իւր գործին տէրը, զաւակներն ալ մեծցած, իւր ծրարիբը դործադրելու համար դրամադիւխի եւ հաւատարիմ դործաւորի պէտք ունէր: Այժմ պակասութիւն չունէր այլեւս. Սեւօք՝ զրամ եւ մարդ, կատարեալ ներդաշնակութեամբ ի կատար հանեց իւր սկըսած դործն. երեւեկայականը իրականի վերածեց, Կիւրնայ դործուածոց ու կերտուածոց մարմնացումն եղաւ, իր զաւակաց ապագայն ճշդելէն ետքը՝ բիւրաւոր ընտանեաց ապրուստի ճանապարհ բացաւ, ու մենք նուիրական պարտականութեամբ կը դամք հրապարակել եւ պատմութեան յանձնարարել Սեւօք կարապետի, տնտեսագիտութեան, ազնիւ մշակին եւ հացի դատին արիասիրտ զինուորի անունն:

Սեւօք Կարապետ ըստ ժամանակին աշուղ, բանաստեղծ ալ էր, եւ ունի Տարբերաւոր երգեր հայերէն խօսած:

Սեւօք Կարապետի սրղիքն Մինասեան վաճառատան հետ ընկեր են, եւ իրենց գործատանց բուրդեղէն ու մանածեղէններն ուղղակի գնելու համար պործակատար ունին յԱնգղիա:

Սեւօք Կարապետ ծնած է ի Կիւրին քաղաք Կիլիկիոյ:

Ընթերցող, երբ կը տեսնես մինը կապուած կը տանին, մի ըսեր թէ՛ չարադործ մ'է, կամ երբ կը տեսնես մինը՝ որ ցնցոտի հազած աիւր կը բանայ ու կը մուրայ, մի ըսեր թէ՛ խաբերայ մ'է կամ բախտախնդիր մը, թերեւս նա շատ ազնիւ մէկն կամ հեղինակ մը եղած լինի. վախցիր որ պատմութիւնը չապտակէ գրեղ:

«ԱՐԱՒՍ» պատկերագրող հանդէս Բ. տարի, 1889

Յ. Զ.

Գիրք Ա., Յունիս էջ 76-82, Ս. Պետերբուրգ,

Տպարան Ի. Ն. Սկրոբոտովի:

29.— ԿԻՒՐԻՆԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

1895, Դեկտ. 24, Կիւրին

Երկրիս վիճակը դուժելու համար՝ գրեչս ինկածներու արեան մէջ թաթխած կը գրեմ, հազորդելու համառօտիւ թէ ինչ պատահեցաւ մեզի:

1895 Հոկտ. 31-ին, ահաբին բազմութիւն մը թուրքերու, քիւրտերու եւ չերքէզներու՝ մօտ եւ հեռագոյն վայրերէ այն է Աղիզիյէ, Ալալիսթան, Կանկալ, Տարենտէ գիւղերէն՝ դուռը կազմած արշաւեցին աւանիս վրայ եւ սկըսան մէկ ծայրէն մինչեւ միւսը անխնայ կոտորել: Տուները մտան եւ յափըշտակելով կաթնկեր մանուկներ իրենց մօր դրկերէն, օղին Քէջ կը նետէին եւ յետոյ իրենց սուրերը բարձր բռնելով՝ վրան կը ձգէին ու դանոնք շամբուրի պէս կը դարձնէին: Մեր գեղանի կոյսեր եւ հարսներ լլկեցին, խայտառակեցին, շատերն ալ հետերինն առին տարին. կտրիճ, անգէն երկտասարդաց դըլուխները՝ դրանց սեմերուն վրայ դնելով՝ կացինի մի հարուածով կը թուցընէին. իսկ ծերունիները այրուած, հրդեհուած տանց աւերակին տակ թաղուեցան, մոխիր դառնալով հրդեհի խարոյկին հետ... Արեան հեղեղներ յորդեցան ամէն հայ փողոցներու մէջ: Այժմ հազարաւոր թշուառներ աստ անդ խելայեղ կը թափառին: Չկայ անոնց վէրքին սպեղանի. անտէր անտէրունչ լքուած են: Ոչ ոք կը համարձակի դուրս ելլել, մեռելոց դիակներ կը փտտին ու կը նեխին հրապարակաց մէջ: Մոյն ահռելի կոտորածէն ազատ մնացող ամենափոքր մէկ մասը մերկ, նօթի եւ անտուն է: Զի հայը տուն չունի այլեւս, ամէնն ալ կրակը լափեց ու աւերակ ըրաւ: Գոյք, կարասիք, ուտեստ, ինչ որ կը գտնուէր, տարին, այնպէս, որ չորս օր անընդհատ աւար կրելով՝ հազիւ հասցուցին: Ողջ մնացողներն ալ ցուրտէն եւ քաղցէն մեռնելու վրայ են: Եթէ մուրալու ըլլան, պատան մը հաց տուող ալ չկայ, հայը չունի որ տայ. ալ ո՛վ պիտի գթայ:

Մերկ, բոսիկ, բլրաբաց, ցրտին դիմաց դողացողներ անհամար են: Կրակ, կրակ, հա՛ց, հա՛ց աղաղակողներու ձայնը երկինք կը բարձրանայ: 10,000-է աւելի են յարձակող վայրենիք, որք կը սրտան միշտ՝ «մեր քագաւորը հրամայեց մեզի սրէ անցնել բոլոր կեալուրները եւ յափշտակել անոնց ունեցածը»:

Արդարեւ անոնց ամէնքը զանազան իրարմէ հեռի վայրերէ, միեւնոյն օրը, միեւնոյն ժամուն միասին հաւաքումը, իրենց կանխաւ պատրաստութիւնը եւ կառավարութեան՝ մասնաւոր հրահանգը կ'ապացուցանէ, կառավարութեան՝ որ խուլ եղաւ եւ աչք դոցեց բոլոր այս դազանային արարքներուն:

Նահատակեալ զոհերուն թիւը 1800ը կ'անցնի. հետերնին տարուած կոյսերու եւ հարսներու թիւը դեռ անորոշ է. շատ մ'ալ անյայտ եւ կորսուած անձինք ունինք: Այս է ահա մեր վիճակը:

**

Տարեկան, Աշոտի, Գարասար, Մանճըլըզ չորս գիւղերն ալ գրեթէ զուտ հայաբնակ են: Կիւրիին վրայ յարձակող զիւրտ, չերքէզ եւ թուրք վայրենեաց ահագին բանակը՝ այս գիւղերուն վրայ եւս յարձակած է: Աշոտի եւ Գարասար իսպառ աւերակ դարձած եւ բնակչաց մեծադոյն մասը սրէ անցուցած են: Տարեկան ամբողջ կողոպտած եւ բնակիչներուն մի մասն ալ ջարդած են: Մանճըլըզ գիւղին բոլոր հարստութիւնը՝ ոչխար, հօտ, տան կարասի, մանաւանդ համանուն հոչակաւոր եւ հարուստ վանքը բոլորովին թալլած են: Այստեղ ալ կ'իսով չափ մարդու կորուստ կայ: Սով եւ նեղութիւն տիրապետած է ամենուրեք:

«ԴՐՕՇԱԿ», 25 Յունուար 1896

30.— ԱԶԳ. ԳՈՐԾԵՐՆ Ի ԿԻՒՐԻՆ

17 Յունիս 1897, Կիւրիին

Տեղւոյս վարժարանները՝ տիրող անօրինակ տնտեսական տաղնապին անթիւ՝ փակ էին. այժմ բացուած են ձեռնահաս անձանց նախաձեռնութեամբ տարիէ մ'ի վեր եւ աւելի: Սուան բաղմութիւն մը մանկանց, որ փողոցի անիծեալ եւ յաւէտ ողբալի կեանքին դատապարտուած էր, այսօր կը դառտիարակուի, տեղացի խումբ մը դասատուաց անխոնջ ջանիւք, որք ի նկատի ունենալով այս տաղնապալից կացութիւնը՝ մեծ արիութիւն ցոյց տուին չնչին թողալով մը՝ ապագայ սերնդեան կրթութեան ղեկը դարձեալ ձեռք առնելով: Չենք կրնար աստ չիշել խորին երախտագիտութիւնը, որ տեղային կառավարութիւնը քանիցս ազդարարած է բանալ եկեղեցիներն եւ վարժարանները: Կիւրինցին՝ հսկառակ իր վրայ ծանրացող տնտեսական տաղնապին՝ կրթասիրութեան հիանալի ցոյցն ըրաւ, նիւթական բազմադիմի անհրաժեշտ կարօտութեանց հանդէպ այնքան արհամարհոտ երեւցաւ որ նախքան գամենայն փպրոցի հարկն զլաց եւ իր ամբողջ ուշադրութիւնը մտային զարգացման դարձուց, եւ վերջապէս 1896 Ապրիլ 1 թուականաւ վարժարանները բանալու նախափորձն ըրաւ կամովին նուիրելով իր լուծման եւ աշխոյժ գործունէութիւն մը ցուցունելով, եւ թէպէտ տնտեսական տաղնապին ընդհանուր էր եւ մերթ իսկ փորձուեցաւ փակել իր աղքատիկ կրթարաններն, այլ էյուսահատեցաւ. առ այս դիմեց Միացեալ Ընկերութեանց, պարզելով իր վարժարանաց անկերպարան վիճակն եւ նորա ձեռնտուութիւնը խնդրելով, որ առայժմ առանց որոշ յանձնառութեան մը երջեւ մտելու, խոստացաւ նկատողութեան առնուլ, երբ դիպող առիթ ունենար եւ ազատէր հրապարակի առեւտրական տաղնապէն: Յարզ վարժարանները բաց են եւ կը շարունակուին ըստ բաւականին կանոնաւոր. յընթացս տարւոյն (1896) բացուեցան հետզհետէ Շուղուլ

եւ Խորէն թաղերու վարժարաններն. սոյն երկու յարակից թաղերու մէջտեղ
բացուեցաւ մի կեդր. վարժարան եւս տեղւոյս Որբոց Խնամակալութեան
ճիւղընթափ ջանալը բազմաթիւ որբերու դաստիարակութեան նկատմամբ.
սոյն նպատակաւ ամէն թաղի մէջ բացած է նաեւ աղջկանց վարժարաններն
ուր տարրական նախակրթութիւն մը կը ստանան ծնողազուրկ եւ անպաշտ-
պան որբուհիներն՝ ապագայի ճշմարիտ մայրեր լինելու: Յայտ է թէ նոյն
վարժարաններն գէթ մասամբ կանոնաւորութեան մէջ դնելու համար ո՛չ սա-
կաւ դրամի եւ սիրալոյսի աջակցութեանց կը կարօտի խնամակալութիւնն,
որ այս առթիւ չի դադրիր դիմելէ ծանօթ բարեսիրաց՝ նոցա կարեկցութիւնը
խնդրելով որբացեալ թշուառներուն:

**

Վարժարանիս (Մ. Եկեղեցւոյ) մէջ՝ որ օրինաւոր հոգաբարձութեան
մը ուշադիր եւ բոլորանուէր ջանից շնորհիւ զգալի եւ բարեփոխում մը կրած
է, կը դաստիարակուին այսօր 300ի չափ մանուկներ եւ 7-15 տարեկան: Ունի
չորս դասատուներ եւ մէկ կառավարիչ, որք կ'աշխատին նախնական կրթու-
թիւն մը տալ ուսանող մանկութեան. ո՛չ նուազ դնահատելի են աշխոյժ եւ
եռանդուն ջանասիրութիւնք նոյն բարեջան հոգաբարձութեան որ չի դադրիր
երբեք ամէն կարելի միջոցներն ի դորձ դնել յօգուտ վարժարանիս. աստի ան-
տի ումպ ումպ դրամ հաւաքելով յաջողած է ցարդ բաց պահել զայն:

** Տեղւոյս Քաղ. Ժողովը կազմուած է ըստ սահմանադրական օրինաց
1891 Դեկտ. 1 թուականաւ եւ կը բաղկանայ հետեւեալ անդամներէ. — Տ. Յե-
սու քահանայ Վարդապետեան՝ նախագահ, Աւետիս էֆ. Պթիկեան՝ Ատենա-
պետ, Թաղէոն էֆ. Չիլիկիրեան՝ Ատենադպիր, Մ. Սարգիս էֆ. Գասպար-
եան՝ անդամ, Մ. Սարգիս էֆ. Չուլճեան, Արզար էֆ. Թահմազեան, Համ-
բարձում էֆ. Գուչունեան՝ անդամ:

** Քաղաքիս Աղքատախնամ Յանձնաժողովը բարեդէպ եւ յոյժ օգտաւէտ
անձօրինութիւն մը ըրաւ մօտ օրերս, տեղւոյս նպաստառու կարօտներէ 300ի
չափ անձանց նիւթական անհրաժեշտ ծախքերը մատակարարելով՝ դադի
խէժ (քիթրէ) կտրելու զրկեց կառավարութենէ կարգեալ յատուկ պաշտօնէի
եւ սահապան ոստիկանի մը հսկողութեան տակ. այս կերպով՝ աւելորդ է
րսել թէ նպաստառուներու ցանկէն պիտի զեղչուի ստուար թիւ մը հացակա-
րօտ աղքատներու, զի յիշեալ կարօտ անձինք որչափ ալ քիչ շահին, դարձեալ
3-4 ամսուան պաշար կրնան հայթայթել, բեռ չ'ըլլալով նպաստամատոյցին:
Իցի՛ւ թէ նմանօրինակ դործառնութիւնք բազմանային եւ աղքատ դասակար-
դը դործելու դործ ունենար, այսու պիտի ազատէր այժմեան այն կործանիչ
դանդաղութենէն, որով նպաստի յուսով բազումք կ'արհամարհեն դործ եւ
աշխատութիւն. (մարդասիրաց սոյն կարեկցական նպաստք այսպիսեաց ան-
դործութիւնը կը սնուցանեն թէ թշուառութիւնը կը սփոփեն. հետեւարար
քաղաքիս թշուառութիւնը անգամ մ'եւս ծանրակշիւ երեւոյթ մը կը ստանայ:

** Քաղցր պարտականութիւն մը կը համարիմք մեր խորին շնորհակալիքն
յայտնել Համբարձում էֆ. Չննդեանի, որ հաճած է իր ծննդավայրի Մ.
վարժարանի եռամսեայ «Բիւղանդիոն» մը նուիրել. մեծ սլակասութիւն մը
լեցունելով: Պատ. Հայաթերթի բազմազան օգուտներն քաջ դիտանալով՝ քաղցր
է մեզ նորա շարունակութիւնը վայելել. յոյս մեծ ունիմք թէ յիշեալ կրթասէր

երկնասարգի բարեսիրութիւնը զրգրեա մը լինի բազմաց նոյն օրինակ շնորհներ ընելու վարժարանիս, որ արդարեւ ամենայնիւ կարօտ է դժասիրական հայեացքներու :

«ԲԻԻԶԱՆԻՈՆ», Թիւ 192, 1897, Պոլիս

ԿԻԻՐԻՆՅԻ ՄԸ

31 — ԱԶԳ. ԳՈՐԾԵՐՆ Ի ԿԻԻՐԻՆ

31 Օգոստ. 1897, Կիւրիմ

Վերջապէս յաջողեցաւ անոք տղոց խնամակալութիւնը բերել երկու բոյր վարժուհիներ, մին 12 եւ միւսն 15 տարեկան. ասոնք բնիկ Սեբաստացի եւ տեղւոյն բողոքականաց վարժարանին մէջ դաստիարակուած են. այժմ վարժուհիներէն մին Ղարա-Թէփէ թաղին մէջ հաստատեալ վարժարանն է, եւ միւսը չգիտեմ Շուշու՞ւլ թէ ուրիշ թաղ մը զբիւցին. յուսալից ենք թէ այլ ևս մեր աղջիկները դատարկասուն լըբենիներ պիտի չլառնան, այլ ապագայի ճշմարիտ եւ մեր բաղձացեալ մայրերը: Վարժուհիներուն տարեկանն է 21 ոսկի. բաւական կլորիկ դումար մը ներկայ օրհասական վիճակուս մէջ: Յաջողութիւն կը մտղթենք մեր աննկուն խնամակալութեան:

* * * Զախձոր ալ բանն ու գործը Սանասարեանն ըրաւ. զարմանալի չէ՞ որ Թովալեանի հաւնած եւ իր ծննդավայրը զբիւցած ընթացաւարտն՝ այսպէս չարաչար «ի խաչ հան զգա, բա՛րձ զգա» կ'աղաղակեն մեր հրէամիտ եւ չարամիտ Զախձորականներն, ի՛նչ գիտեն բան չգիտնալն, ո՞վ է քններ եւ հասկցեր: Ա՛լ այն աստիճան հասցուցին որ հուսկ ուրեմն նա համակերպեցաւ զատ յարկ մը քաշուիլ, մի քանի թափթփուքներ միասին առնելով. դեռ ի՞նչ կ'ըսեն, ի՞նչ է նպաստիկն: Ամօթ չէ՞ ելլել տեղեկագրել տեղային իշխանութեան, թէ տղայ մը ծեծեր է եւ այսպէս դրամական տուգանաց ենթարկել եւ պատժական օրինաց տրամադրութեան գործադրութիւնը պահանջել: Ի՞նչ, ըսածն ո՞ւր պէս ծեծեր է: Խնդիրն ամոքելու տեղ զայրացունե՞լ պէտք է, անձնական կիւրք յառեցունել եթէ չէ, այս ուրեմն ի՞նչ է. մեր մեծաձայն ծափերով բարձրացուցած վարժապետներն անկէջ վա՞ր ծեծեցին — չենք կարծեր: Այս ամէն անշահ եւ անպատուաբեր արարմանց առթիւ, ի՞նչ կ'ընէ տեղւոյն վարժարանի վերատեսուչ հայրն. երկրի աչք հաներ է, տիրուն հոգին:

* * * Ա՛լ կենդանանալ կը սկսի չարագործութիւնն, ա՛լ բանտով կը սկսի անգործութեան դատասպարտուած թշուառ չարագործը, բայց մեր չքաւորներն ու այրիներն, շուկաները քոչադուրիկ, վառեթաւալ հարսներ կը դեղերին, նպաստամատոյցի դռները կը ծեծեն, կ'երթան ու կու դան հաց կը պագատին, եւ յանկերզն այս կ'ըլլայ միշտ, «չկայ, հատու ալլեւս»: Մանուկ խնամելու եւ դաստիարակելու շարժումներ պակաս չեն. այս առթիւ Զուրիցերիոյ բարեսիրտ մարդոտիրաց շնորհիւ Մանկանոց-Պատասպարան մը հաստատուած է տեղս, ընդ տեսութեամբ Պատ. Գէորգ Տէմիրճեանի: Մանկանոց մը եւս ի Զախձոր՝ շնորհիւ Թովալեանի եղբարց: Տեղային վարժարանաց մէջ կայ մաս մը եւս որ կը խնամուի եւ կը դաստիարակուի դարձեալ Զուրիցերիոյ բարեսիրաց նպաստիւք, որոշեալ ամսամասը մը հատուցանելով: Չէք հարցունէր թէ Պատրիարքարանէ ուղուած չքաւոր տղաք ի՞նչ եղան: Մի գրուցէք, մեր պատկառելի ժողովներն ժամանակ չունին որ այդ ալ խորհին. ինչ անշնորհ բան, միշտ չքաւորն է իր բանն ու գործն, ան ալ բան ունի, գործ ունի, կը վրկէ օր մը, տղոց հոգի՞ն ելաւ: Գալով մեր անպաշտպան այ-

րիններուն, աւելի լաւ չէ՞ր ըլլար այրեանոց մը հաստատել եւ այսպիսեաց դործ տալ: Այսու սոյն օրինակ շատաշրջիկ աներեսներու ոտքերը շուկայէն եւ փողոցէն պիտի կտրէինք:

****** Մինչ տնտեսական տագնապէ վարակեալ բազում վայրեր հացի խընդ-բոյն վրայ յառեր են իրենց ամբողջ ուշադրութիւնն եւ համերաշխաբար կը գործէին խեղճութիւններ սփոփելու, անյարկ թշուառներ պատսպարելու, մենք մէկզմէկէ կը փախչէինք. շատ սահմանափակ է մեր մտածումը: Ես կը խորհիմ իմ թաղս, դուն՝ քուդը, իսկ միւսն՝ որ խորհելու կարողութիւն չունի կամ կորուսեր է այն, անօղնական կը թողունք, եւ այսպէս կը ցրուին մեր ուժերը ու անարդիւն կ'ըլլան: Կը խորհի՞նք թէ մեր չքաւոր տղաքներն ապագային ալ չքաւոր պիտի մնան, ապագային ալ կեանքը վայելել ծանր պիտի դոնեն, զի մեր այժմու կրթական դրութիւնն աւերում է ի զատ բան չէ կարող արտադրել: Հերիւն եւ դրիչ՝ հաւասարապէս տանք մանկան ձեռքը, ցուցունենք մին միւսին հետ ունեցած անբաժան առնչութիւնն, որ երբ մին ձգէ՝ միւսն առնելու չդժկամակի: Առանց դրամադրիսի, առանց ոսկի անկապուտ ապարանջանի՝ տղան դուրս կը հանենք դպրոցէն: Հարուստներու աւճաքները կրնան յարգելի բացառիկներ համարուիլ, եթէ վստահիլ կ'արժէ բախտի բարեաց: Գայով աղքատին՝ պէտք է գործնական արհեստաւոր մարդ մեծնայ, մանաւանդ մեր կարօտ տղաքներն, եթէ ետքէն ալ կարօտ մնալ չեն ուզեր, եւ միթէ չքաւոր չէ՞ անարհեստ մարդ՝ որո՞ւ շնորհիւ պիտի խնամուի՞ ո՛չ, արհեստը մշտահոս եւ յարածուն աղբիւր մ'է: Չ'արժե՞ր որ տեղային կարգ մը շահաւէտ արհեստներն իրենց դարաւոր փոշիներէն գործուցանելով՝ նոր փայլ, նոր մղում տանք, բազմադարեան շղթաներէն արձակենք ընդարձակութիւն շնորհելով. չէ՞նք կրնար ուրիշ օգտաւէտ արհեստներ եւս ներածել եւ շահագործել, ինչպէս շերամաբուծութիւն, մեղուաբուծութիւն, գորգագործութիւն եւ այլն:

«ԲԻԻԶԱՆԻԻՈՆ», Կ. Պոլիս, 1897, քիւ 272

ԿԻԻՐԻՆՑԻ ՄԸ

22.— ԿԻԻՐԻՆՑԻՔ ԻՆՁՈՎ ԿՄՊՐԵԻՆ

Կիւրիս 12/24 ՅՅՎ. 1897

ՏԵՂԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՈՐԾԵՐ

Շուրջ կէս դարէ ի վեր՝ բարեյիշատակ Կիւրիսցի Կարապետ Մինասեան Խելօք անուամբ հռչակուած բարի անձը, շաղագործութիւնն հնարած է, ու քաղաքիս համար ի վաղուց անտի նախախնամական օրհնութիւն մը դարձած է, սոյն արհեստն յընթաց. ժամանակին այնքան յառաջդիմած է որ պարծանօք կրնանք ըսել թէ իր ծանօթ պատուական եւ դիմացկուն շալերով եւ փայլուն կերպասներով՝ կրնար պարծենալ եւրոպական կերպասեղէններու հետ, կարող եւ ճարտար ձեւադէպներու շնորհիւ նորաձեւ եւ ազնիւ տեսակները, օր քան զօր բաղմանալու վրայ էին: Նշանաւոր էին Մինասեան եւ Գոյունեան եւ Վարդապետեան եւ այլոց գործարաններն որք ամէն տեսակ լատողոյն սպրանք կ'արտադրէին հմուտ արուեստագէտներու ձեռամբ, այս առթիւ բաւական կլորիկ դումար մը կը մտնէր քաղաքս՝ արտածեալ ապրանքներէն: Եթէ չենք սխալիր, քաղաքիս զրեթէ կէսը շաղագործութեամբ կը զբաղէր, ոմանք գործել տալով եւ այլք գործելով. խիստ քիչ տուներ չունէին շաղագործութեան գործարան մը՝ «հոր» յորջորջեալ. ամէն բանուոր առաւօ-

տուն իր աչքերը բանար չբանար, իր կկոցին գլուխն էր եւ եռանդազին կը դործէր, կը հււսէր այն առէջներն, որք իրարու փաթաթեալ՝ ահագին դուռմի մը նման կը բարձրանային գործողին աջ կամ ձախ դին, եւ որու վրայ աշխատասէր գործաւորն անհամբեր եւ փութկոտ, այլ տհաճ ակնարկ մը կը նետէր մերթ ընդ մերթ, երբ ամէն անգամ որ գործածը պիտի փաթթէր կամ պիտի «փառէր» սեղային բառով, եւ ապա երկար շունչ մը կ'առնուր խեղճն, որուն կը յաջորդէր գլանիկի անախորժ ծուխն, որ կը ծառանար տան կամ գործարանի մթնոլորտն, իսկ եթէ գլանիկի սովորութիւնը շունչէր՝ կատակներով եւ սիրային խաղերով «հոր»ին խուլ շքշքիկոցը կ'ընդհատէր: Այսօր դրեթէ երկու տարի է որ շատ քիչեր ունին «հոր», զի տիրող տնտեսական տաղնապին առթիւ գործարանատէրեր այլեւս դադրեցուցած են գործելը: Չմոռնանք թէ քաղաքիս շալագործներն ուրիշին համար կ'ը գործեն, շալ գըլուխ մասնաւոր վարձք մը ստանալով, այսօր խեղճ շալագործն՝ Յ-Ա կանգուննոց շալ մը 20-30 փարայի պիտի գործէ: Այսօր եթէ գործելու հրաւիրուի, այլ ի՞նչ օգուտ, շատ քիչերն են որ գործարան ունին, եւ միայն էն ճարտար, էն կարող շալագործ դասակարգը գործ ունի, այս ալ դարձեալ հագուադէպ իրողութիւն մ'է, իսկ միւս մէկ մասն՝ անգործ տանը անկիւնը ծալապատիկ նստելու կեանքին դատապարտուած է: Իցի՛ւ թէ սոյն ձեռագրատութիւնը դարձեալ վերակենդանանար քաղաքիս մէջ, եւ թշուառ արհեստարարն՝ որ գործ կը փնտռէ չորս աչքով, գործ տրուէր, որով այլեւս օտարներու փայլուն եւ դէր քսակներուն աչք պիտի չտնկէր, իր ճակտի քրտինքով չահած հինգ փարայովը գոհանալով:

* Ոչ նուազ սպրուստի միջոց կը նկատուէր գազի խէժն, որ քաղաքացւոյն երկրորդ շահուէտ դրացումն էր: Ամէն տարի Մայիսի մէջ, Յունիսի սկիզբները խումբ խումբ կը մեկնէին քաղաքէս, բազմաթիւ անձինք դէպի չրճակայ Յ-Ա ժամ հեռաւորութեամբ դաշտեր, ուր նոյն խէժի բոյսն (գազն) առատ կ'ըլլար: Ամբողջ երկու, երեք ամիս՝ քրտնաջան աշխատութեամբ, անձ մը հագիւ կրնար 4-5 լիտր (24-30 օխա) խէժ հայթայթել զոր հրճուագին շալակելով տուն կը բերէր, ապրանքը ծախելով Յ-Ա ոսկւոյ փոքրիկ գումար դժուարաւ կ'ունենար ձեռքն, որուն կէսն ալ ի հարկէ կանաչ կերած կ'ըլլար, բայց մնացածովն ալ գոհ էր, զի ապահով էր որ այլեւս ձմրան տխուր եւ յամրասահ դիչերներն անօթի պիտի չսպասէր եւ իր պղտիկներն հա՛ց պիտի չճըլուրլային, այլ դէթ 2-3 ամսուան պաշար, լոկ չորաբեկ հաց մը պիտի ունենար, եւ եթէ գտնէր մի կտոր պանիր եւս, ալ աշխարհի երջանկագոյն մարդերէն մին էր. սոյն եղանակին ալ պարապ չէին, այլ նորէն կ'անցնէին «հոր»ին փոսը: Ահա այս էին քաղաքիս բնակչաց մէկ մեծ մասին անցեալ սպրուստի միջոցներն, որ այսօր երա՛դ մը եղած է, միայն վերջինն՝ այն է՝ խէժ կտրելը կայ տակաւին, եւ սոյն նպատակաւ, ինչպէս դրած ենք մեր նախորդ յօդուածով, 300ի չափ կարօտ անձինք զրկուեցան, տեղույս նպաստամատոյցի գործունէութեամբ:

«ԲԻԻԶԱՆԴԻՈՆ», 1897, քիւ 198

ԿԻԻՐԻՆՑԻ ՄԸ

3. — ԿԻԻՐԻՆԻ ՈՐԲԱՆՈՑԻ ԽՆԴԻՐ

Կիրիւն, 25 Յուլիս, 1899

Պատ. հանդէսիդ 12րդ թուոյն մէջ խճրճանգինք վերնագրով ուշադրաւ յօդուածն զարմանօք կարդացի: Յօդուածագիրն որ խճրճելէ կը խորշի, ջու-

ըլ փշելով խմող մ'ըլլալ կը թուի, զարմանալի է, որ անդիտակցաբար ուրիշները կը խճրճէ: Իրաւ է թէ Պ. Շահէն կրնար Կիւրնոյ անուշակ թութին, կարմրաթոյր կեռասին, մեղրահամ խնձորին ու ծիրանին նման անուշ ու անխուշ լեզուաւ գրել, բայց դուք ալ, չէ՛ք կրնար քիչ մը անկողմնակալ ոգւով գրել, իրողութիւնն ցոյց տալ անկեղծաբար, կրնայիք Պատուելիին քիչ մը քիչ սոխ մանրել: Դուք իսկ չէ՞ք խճրճեր երբ կ'ելլէք կամայ թէ ակամայ՝ մարդորսութեան անշահ, դձուձ ջանքերն պաշտպանել: Ապաքէն բողոքականութեան անդունդ անունը տալ չեմ համարձակիր բայց ասոր ինչ ըսենք, Ակիւլինէ, եթէ Հայ եկեղեցին անդունդէ մը աւելի ահարկու չէ յաչս պատուելիի. ինչո՞ւ համար հայ կրօնասոյցը հապճեպիւ արգիլեց, ինչո՞ւ այնքան կը վախնայ շարթական 1-2 ժամ սահմանելու Հայ. եկեղեցւոյ դաւանութիւնը որբոց սորվեցունելու: Չենք ուզեր Որբանոցին տիրանալ, որբանոցը հայացնել, միայն շարթուան մէջ ժամ մը կամ երկու՝ մեր որբոց Հայ. եկեղեցին սորվեցունելու: Ի՞նչ կայ հոս որ մեզի դաղտնիք է: Ի՞նչ անուն տանք լուրջ մտքի ու բարի սրտի տէր Պատուելիին, սիրելիդ իմ Ակիւլինէ: Մե՛զք պատուելիի լուրջ եւ ազատախոհ ոգւոյդ, որ կ'ելլէ Հայ եկեղեցւոյ մէջ փրկութիւն կայի չկայի ծիծաղաշարժ վէճերով համարին որբոց սըրտերը կ'ուծացնէ, իրարմէ կը ջլատէ հայ որբերու կրօնական ազատութիւնը, կ'արգելու, որ հայ որբերը հայ կրթութիւն, հայ լեզուն ու եկեղեցին ունին: 15-16 տարեկան որբեր, որ Դուրեան Սրբազանի Ընթացքն պարզ կարդալու կը տատամսին, թողումք թարգմանութիւն ու լուծում: Ի՞, ուր է, Ակիւլինէ: Չեր հայերէնի դասախօս մրցակիցն, հատ մ'ալ Կիւրնի ղրկեցէք: Ատիւ մզ, Կիւլպէնի մը պարծանօք կը յիշատակէք, չգիտեմ թէ ուրիշներ ալ կա՞ն: Խնդուքս կը բռնէ երբ, Ակիւլինէ, ձենէ կը լսեմ թէ պատ. Գէորդ Նախատեսութեան էն հաւատարիմ, խղճամիտ եւ ազատախոհ գործիչներէն մին եղած է, (ճանըմ սա ածականներն ալ ի՞նչ աժնցան): Կեցցե՞ս, ձեր սրատեսութիւնը կամ հեռատեսութիւնը իրաւ որ կը գերազանցէ Շահէինը: Պատ. Գէորդ թող փայլի իր բեմէն, բայց հայ որբոց կրօնական ազատութիւնը սահմանափակող կղերի մը չփայլելէր որ ազատախոհ եւ լայնախորհուրդ ըսեմք. ո՛չ, այս ածականներն ձեր կարծածին չափ աժան չեն, հետեւապէս արժէմին չարժէմին տալու չենք: Մարդասէր է՝ իր մի քանի տասնեակ ժողովրդեան համար. մեզի ինչ. անձնը. էր եւ բարեգործ է այն պայմանաւ որ բողոքական ըլլալու յօժարութիւնդ հաւաքէ: Ոչ, ազատախոհ է չենք կրնար ըսել պատուելիի համար, քանի որ Հայ որբոց նկատմամբ Ազդ. Առաջնորդարանի հետ կնքած պայմաններն առաթուր ըրաւ. մեծ պահքի առաջին օրը գառն եւ Չատկի առաջին կիրակիէն սոխով խառն ապուր կերցունել հրամայեց ի նախատինս մեր: Ոչ, հաւատարիմ գործիչ չենք կրնար նկատել քանի որ հակառակ մարդասիրաց փափաքին՝ հայ կամ բողոքական զանազանեց կամ կը զանազանէ նպաստից բաշխման մէջ: Ստոյլ է, որ չենք կրնար համակրիլ մեր ամենասիրելի եկեղեցւոյ հիմերը փորել ձգտող անգութ ձեռքերու, մեր հարց անուշիկ բեկորները, որբերը, մայրենի հնազարեան եկեղեցւոյ ծոցէն հեռացնելու բորականտայի անարժան ձեռնարկներու: Ահա այս պատճառաւ պատուելին տեղացւոց մեծէն մինչեւ փոքրին անտանելի դարձած է: Յիրաւի միտմիտ ժողովուրդը ատեն մը եպիսկոպոսի մը պատիւն տուաւ իրեն, բայց շուտ հասկցաւ որ սխալեր է, զի պատուելին չկրցաւ երկար ծածկել ինքզինքը, խույը դուրս տուաւ ինչպէս կ'ըսուի ուսմկորէն:

Կ'ըսենք որ որբ մը արտաքսուած է Որբանոցէն իւր ապականութեմէն

դառնալ շուղելուն առթիւ, այսինքն, բողոքական դաւանանքն կարգալով ան-
 դամ չըլլալուն համար: Ակիւլինէ, կը տեսնե՞ս, ազատախոհ պատուելին կշտա-
 ցեր չէ՞ Նշան Նարեկեանով, Կարապետ Տէլիպէլեանով, Կարապետ Աբանեանով
 եւ Միհրան Փիրանեանով, Դեռնդ Խըրըտեանի ալ ձեռք երկնցուցեր է, որ սա-
 կայն սաստիկ հակառակեր է Որբանոցի լիահասց սեղանն ու հաճելի մթնոլորտն
 վրայ տալով: Ա. ՄԱՄՈՒԼի անձուկ ու սուղ էջերն կը ստիպեն զմեզ շմանրա-
 մասնել Որբանոցի անձուղարձերն, որոնց դուք իսկ, իմս Ակիւլինէ, ի մօ-
 տուստ տեղեակ էք, կը ցաւիմ ի սրտէ որ որդորմելի դատ մը պաշտպանելու
 հարկին տակ դոնուեր էք: Մենք իսպառ համոզուած ենք որ մեր աղքատու-
 թիւնը, մեր թշուառութիւնը կը շահագործուի՝ դէթ Կիւրիինի մէջ: Դուք լաւ
 կը յիշէք անտեսական ճախողութեան յառաջ պատուելիին դործունէութեան եւ
 ազդեցութեան շրջանակը, այսօր եկո՛ւ տես որ մեր ժողովներուն մէջ իսկ ձայն
 ունի հացով ու լաթով անդամ կը շահի կոր, հողո՞յ աչքեր կը բանայ կոր, ո-
 դորմելի հողիներ, որք կտոր մը լաթով, հացով կը բացուին, հրաշալի դորու-
 թիւն: Աններելի ապերախտութիւն է երախտադիտական զգացմամբ չյիշել
 ազնուասիրտ մարդասիրաց բարերար ձեռնարկը, բայց սիրելի չէ մեզ կարեկ-
 ցական նպաստները բարեսիրաց բոլորովին անձանօթ եւ անհաճոյ նպատակի
 մը ծառայեցնելը: Այո՛, անմահ պիտի մնան միշտ մեր սրտերու մէջ օտար այլ
 ճշմարիտ բարերարներ, որք չափաւոր եւ զուտ մարդասիրական ոգի մը ցոյց
 կու տան որբախնամ դործոյն մէջ, եւ կը բաղձան որ որբերը Հայ մեծնան,
 հայրենի օջախը վառեն, պապենական դուռը փակ չթողուն. ո՛վ կը տարա-
 կուսի թէ այսպիսի տիպար ու ճշմարիտ մարդասէրները միայն շահած են ժո-
 դովրդեան է՛ն պաշտելին՝ սիրտը: Ակիւլինէ, անուշտ տեղացի ըլլալու էք, որ
 այսպէս մօտէն կը ճանչնաք պատուելին ու Որբանոցը, բայց թող ներուռի մեզ
 ասել, որ քիչ մը շատ կարճ կը տեսնէք, ձեր կողմնակալ ոգին ինչ որ անկեղծ
 հրապարակագիրներու չլիայելէր: Երանի՛ թէ ձեր զգացմանց հաւատարիմ
 թարգման հանդիսանայիք: Ի՛նչ շահ հասարակութեան խոշոր սուտեր կլլել
 տալէն: Մենք ձեզ լաւ կը ճանչնանք թէ եւ ծածկուիլ ջանացած էք: Ուրեմն
 հաճեցէք ձեր քիչ մասնվայել մակդիրներն ետ առնուլ եւ յետ այսու կշռելով,
 չափելով ու ձեւելով ուղղել, այս է իմ բարեկամական խրատս:

Կիւրիին,

ԴԻՏՈՂ

Ուրիշ նամակ մըն ալ Պ. Շահէն ուղղած է խմբագրութեանս ի հրատա-
 րակութիւն, սակայն նկատելով որ զանազան ընտիր այլ նիւթին օտար խոր-
 հըրդածութիւններէ դատ, այդ նամակը կը պարունակէ նաեւ կէտեր որ Պ. Դի-
 տողին զրածնները կերպով մը կը շօշափէ, արժանի դատուեցաւ, կրկնութիւն
 շրնելու համար, հրատարակել միայն Պ. Դիտողին գիրն, որ անկողմնակալ ող-
 ով կը պարզէ խնդիր, այսպէս որ անոր վերադառնալու հարկ չմնար:

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ», 1899
 Իգմիր, էջ 678-681

34. — ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ ԵՒ «ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ»

Կիւրիինցիք, հակառակ իրենց ամէն տարուան սովորութեան, շատ հան-
 դարտ եւ խաղաղ բարեկենդան մը անցուցին: Մինչ ամէն տարի սովորութիւն
 էր խմել, պոռալ ու կանչել, այդ մէկ շարթուան ընթացքին մէջ, այս տարի,

չորհիւ ազատութեան եւ անօթութեան, օրինակելի բարեկենդանի եօթեակ մը բոլորեցինք: Բուն բարեկենդանի նախորդ կիրակին զիմած էր ժողովրդեան հոծ բազմութիւն մը դէպի Կեդր. Լսարան, լսելու համար Ա. Էֆ. Պթիկեանի «Ուժի խնայողութեան» վրայ տուած գեղեցիկ խորխուսականը, որուն ունկնդրեց ժողովուրդը ուշի ուշով, եւ Կ. Էֆ. Աճեկանեանի, «Արիութեան եւ խոհեմութեան» վրայ խօսուածները: Գալով Հինգշաբթիին, Վարդանանց տօնի օրը, Կեդր. Լսարանի վարչութեան կողմէ կազմուեցաւ լսարանական հանդէս մը:

Սօսեցան քանի մը ուշագրաւ դէմքեր, Առաջնորդ Հայրը, բողոքականաց պատուելին եւ ուրիշներ: Կատարուեցաւ տեղին գեղարուեստական կողմիկ բաժին մըն ալ:

Բարեկենդանի ուրախութեան եւ խրախճանաց հետ քաղաքս անցուց նաեւ Չարդի երկունք մը, ամէն ոք կը վախնար թէ այս կամ այն օր տեղի պիտի ունենար այն: Մանաւանդ երբ Կեսարիա գանուող ազգայիններէ ստորագրուած եւ հետեւեալ իմաստով հեռագիր մը եկած էր, թէ «հողինիս ողջ եւ ինչքերնիս ապահով է, շուկայ չենք ելլեր»: Հոս հայերը միշտ անհանգիստ եւ վախի մէջ են, որովհետեւ դեռ պաշտօնի վրայ կը մնան այնպիսի մարդիկ, որոնք կազմակերպողն եղած են 1895ի Չարդին, եւ որոնք իրենց շապիկը փոխած են բայց ոչ բնոյթը. այսօր պաշտօնի վրայ կը դռնուի այն մարդը որ 1895-էն առաջ, շատ լիտի եւ անբարոյիկ կեանք մը կը վարէր. կազմակերպողն եղած է նոյն Չարդին եւ նոյն ատեն մի առ մի հրացանի բռնած էր իր տունը ապաստանող քառասունէն աւելի խեղճ անմեղ թաղեցիներ:

Վերջապէս հայը ինչպէ՞ս չի վախնար երբ այսպիսի հայու արեամբ ներկուած ձեռքեր կը կառավարեն գինը: Բայց չորհիւ տեղակալին ու Պոլսէն եւ Սվազէն եկած հեռագրերուն, մտքերը հանդարտեցան:

Այսպէս, բարեկենդանի տազնադալի եօթեակ մը բոլորելէ վերջ, Փետր. 14 Եարաթ դիշեր, Կիւրինցիին երկրորդ անգամ ըլլալով պատեհութիւն ունեցաւ ներկայացում մը տեսնելու. «Վեմետիկի Վաճառականք» Շուղոյի Բողք. ժողովարանին մէջ, ի նպաստ Շուղուլի Բողոքական եւ Լուսաւորչական դպրոցներու:

«ԱՆԴՐԱՆԻԿ» քիւ 6, Սեբաստիա, 1909

ԱԳԱԻՆԻ

Առեւտուրի կեանք գաւառներու մէջ, Կիւրինի հրապարակը, ձարտարարուեստ. — Կիւրինի շալերուն հնարիչը. — Ապրանաց տեսակները:

Կիւրինի ծանօթ վաճառականներէն Տեարք Ս. Մ. Յ. Կերկէրեան եղևորք կը գրեն մեզի. —

Կիւրին Սվաղի վերայէթին մէջ, Սվազէն 24 ժամ դէպի հարաւ 15,000 բնակչով քաղաք մէ, գետակի մը երկու եզերքներն ի վարձորի մը մէջ երկու ժամ երկնցած, անջատ տուններով: Դէմ դիմաց լեռանց կողերու վրայ դարատափներ եւ գետափին ու շէնքերուն միջեւ գետիններ Կիւրինցիին սլարտէզներն են: Կիւրին իր լեռնային դիրքովն անասնաբուծութեան շատ յարմար է:

Կէս դար առաջ, բնիկ Կիւրինցի Կարապետ Յ. Մինասեան, որ խելօք մականունով ճանչցուած է, հետաքրքրութիւնը կ'ունենայ պարսկական հասարակ շալերուն մէկ օրինակն հանելու: Քիչ շատ կը յաջողի ձեռնարկին մէջ

եւ երեւան կը բերէ զուտ տեղական լարանով շալլ: Եթէ իր գործերէն նմոյշ մը ունենայինք եւ Կիւրիինի այսօրուան ամենանուրբ դործուածքներուն քով դնէինք՝ ճարտարական անհամեմատ զարգացում մը պիտի տեսնուէր, բայց դարձեալ յարգանք իր յիշատակին, որ այսօր Կիւրիինի բնակիչներն ապրեցնող արուեստի մը նախաձեռնարկն եղած է: «Սեւլօքի շալլ» անուամբ Կիւրիինի արտադրութիւնը երբ շրջանակներու մէջ յարգ դտաւ, Կիւրիինցի դրամատէրեր շալլագործութեան զարկ մը տուին: Տեղական լարանին յաջորդեց Եւրոպականը: Իրաւամբ կ'ըսենք թէ շալլագործութիւնը ճարտարարուեստի կարգն անցած է այսօր եւ կ'արտադրուին դանազան դոյներով շալլեր, ընտիր Փանէլայ, Փասօնէ, վերմակի երես, սեղանի ծածկոց, սենեակի եւ պատուհանի վարագոյրներ եւյն. ազնիւ տեսակներով եւ տոկուն ու ճաշակաւոր գործուածքով: 10—12 տարիներ առաջ Ժազար մեքենային առաջին օրինակը գործածել շատ դժուար երեւցաւ, բայց փորձառու վարպետներ յաջողեցան բանիլ այս մեքենայով եւ այսօրուան 1500 տէսկեահին կէսէն աւելին Ժազարով է: Ժազարի այլազան արտադրութիւնները թէեւ ամէն մասամբ խիստ գերազանց են, բայց հին մօտէններու վրայ հասարակ շալլերու խնդրանքն ալ չի պակասիր դեռ: Կիւրիինի մէջ յիսունի ափ գործատէրեր կան 10—էն 200 տէսկեահ բանեցնող: Բրդեղէն թէ մանածեղէն յիսունէ աւելի տարբեր կ'արտադրուին, որոնք դանազան քաղաքներու հրապարակաց վրայ զնահատուած են: Կանգունը տասը փարայէն տասնեւհինգ դահեկան գործող — չէքով ապրանքներ կան, որոնք կանգունը մէկէն մինչեւ քառասուն դահեկան գնով կը ծախուի: Նախանիւթերու ներածումը գրեթէ 40.000 օսմ. օսկիի եւ արտածումը 60.000-ի կը հասնի: Գործին ծաւալը աւելի ընդարձակելիք միջոցներ կան դեռ: Մետաքսեղէն արտադրութիւններ գրեթէ չունինք: Կիւրիինցի գործատիրող գործի շրջանակը խիստ սահմանափակ է: Յանձնարարութիւնները շատ ձեռքերէ կ'անցնին բարդումներով: Քիչեր կան որ իրենց բացած ապարանաց գործարանի դինէն տեղեկութիւն ունենան: Մանարաններ ունեցող քաղքի մէջ տուն մը հաստատել՝ տակաւին մատչելի չերեւար իրենց: Աւելի կարեւորը՝ սանտրող, մանող մեքենաներու պէտքն է: Երկրորդ՝ գործարան ունեցող գործատէր չկայ դեռ, այլ ամէն գործաւոր իր տունը կը գործէ, թիւը կ'չիւքով տանելու, լման բերելու եւ նմոյշին համաձայն գործելու պատասխանատուութեամբ:

Գորգատեսարց միջեւ տեղի ունեցած մրցումն ա'յն աստիճան կ'իջեցնէ երբեմն գները որ հարկ կ'ըլլայ կեղծել ապրանքը չվնասուելու համար: Մըրցումը աւելի կ'ընդարձակէ սպառման շրջանակը եւ դիւրամատչելի կ'ընէ թէեւ՝ բայց անձեռնտու պայմաններով մրցումը կեղծ ապրանք կ'արտադրէ: Մանածախառն, խամ, թոյլ, թեթեւ եւն. ստորին ապրանքներ՝ սխալ ըմբռնուած այս մրցմանց հետեւանքներն են շատ անգամ: Ըստ մեզ, եթէ մըրցումը՝ ապրանաց տոկունութեան՝ ճաշակի, ներկի հաստատութեան մէջ զերար գերազանցելու նպատակաւ ըլլալ՝ շատ արդիւնաւոր հանգամանք մը կը ստանայ: Անհարկի մրցում է նաեւ, հրապարակներու ոգեւորութեան ատեն, գործաւորներն իրարու ձեռքէ խլել, գործողչէքն աւելցնել եւն.: Թէեւ ասոնք առաջին անհարկով օգտակար կը թուին, դէթ գործաւոր դասակարգին համար, բայց հակադրեցութիւնը աւելի վնաս կը պատճառէ, երբ գործաւորը նմոյշին ճշգրտութիւնն ալ չ'արտադրեր, հոգ չ'ըներ, խորհելով որ երկրորդ գործատէրեր իրեն կը սպասեն: Ասանկ շրջաններու մէջ ապրանքը իր արժէքէն մաս մը կ'ուտրելու չափ վարկարեկ կ'ըլլայ: Թէեւ կան անանկներ, որ ամէն

ատեն մաքուր ապրանք արտադրելու ետեւէ են, բայց քանի որ ապրանքը ո՛չ թէ արտադրողին, այլ տեղին (Կիւրիինի) անունով կը սպառի, արդիւքը նոյնը կ'ըլլայ: Անհամեմատ աժան եւ շատ արտադրելու փոյթն ինքնին անտես կ'ընէ արուեստն ու ճաշակը եւ շատ ստորին շալեր՝ ամէն կերպով անյաջող՝ հրապարակ կը հանուին:

Կիւրիինի տեղական արտադրութիւններու վարկը պահպանելու կը խորհուի արհեստագիտական յանձնախումբի մը հսկողութեան ենթարկել շալերու արտադրութիւնը, որպէսզի արուեստը զարգանայ, եւ անհարկի մրցումը վերցուի: Այս դադափարը տեղւոյս գործատէրերէն եւ Առեւտրական Սենեակէն ընդունուած եւ Կուսակալութեան մատուցուած է:

«ԲԻԻՐԱԿՆ» Կալ. 1900-1907, էջ 807-809